

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՅԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵՎԱՆ ԴԱՆԻՆԵԼՅԱՆ

ՎԱՄԱԹԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔԵՎԱՆ ԴԱՆԻՆԵԼՅԱՆ

Մ Ա Լ Ա Ք Ի Ա Յ Ի Բ Ա Ր Բ Ա Ռ Հ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՂՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1967

Հանրապետական խմբագիր՝ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԴԵՅԱՆ ՏԵԴՐԱԿՈՎԻՉ ԴԱՆԻԷԼԻՆ

ՎԱԼԱԿԻՍԿԻԱ ԴՎԱԼԵԿՏ

/Ու ղրմյանսկոմ ղզնկե/

ԻՅԴԱԿԵԼՅԵՍՏՎՈ ԱՈ ԱՐՄՈՂՆՍԿՈՄ ՍՍՐ

ԵՐԵՎԱՈ

1967

Մալաթիայի բարրառը մահացման նգրին զտնվող հայ բարրառ-
նարից մեկն է: Այդ բարրառին այժմ տիրապետում են տարեց մա-
լաթիացիներ միայն, որոնց մի մասը ընտելվում է Հայկական ՍՍՀ-
ի Շահումյանի շրջանի նոր Մալաթիա անունով: Նրանք Սովետա-
դան Միությունն են հայրենադարձվել 1929-1936 և 1946-1948թթ:
հալաթիացիներ կան նաև Սփյուռքում:

Մեր ուսումնասիրության համար հիմք է ծառայել հայրենա-
բարձ մալաթիացիների կենդանի խոսքը: Այդ նպատակով տարիներ
խորունակ անմիջական ու տևական աշխատանք ենք կատարել բար-
րառախոս մալաթիացիների հետ, նրանց Օչնությունը կազմել զրա-
բարից բարրառ և բարբառային բառարանները, ինչպես նաև հավա-
քել տեքստեր և բարբառի նկարագրության համար անհրաժեշտ նյու-
րեր:

Բացի այդ, սույն բարբառի ուսումնասիրությունը ամբող-
ջական դարձնելու նպատակով՝ օգնության խնդրանքով, դիմել
ենք Սփյուռքի Մալաթիայի կրթասիրաց ընկերության օրգան "Նոր
Մալաթիա" հանդեսի խմբագրությանը:

1968թվականին այդ հանդեսի 1-ին համարում հրատարակվում
է մեր հայտարարությունը¹, որով խնդրվում է Սփյուռքում ապ-
րող մալաթիացիներին՝ մեզ տրամադրել իրենց բարբառով զրված
տեքստեր կամ այլ ընույթի տեղեկություններ: Նրախտագիտու-
յամբ պետք է նշել, որ "Նոր Մալաթիայի" խմբագրությունը ըստ
հնարավորության օգնել է մեզ՝ իր մայրենի բարբառի ուսումնա-
սիրության գործում: Ֆրանսիաբնակ մալաթիացի Դևորգ Տոնապետ-
յանը այդ նպատակով մեզ ուղարկել է բարբառային տեքստերի մի
կապոց, որի հիման վրա մենք ստուգել ենք ամբողջ մշնագրու-
թյունը:

Ուսումնասիրությունը բաղկացած է նարածությունից, երեք
բաժիններից (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառագի-
տություն) և հավելվածից:

1. "Նոր Մալաթիա", օրգան Մալաթիայի կրթասիրաց ընկերության,
1968, նո. 8, էջ 26:

Ներածության մեջ տրված են հորշ տեղեկություններ Մալաթիայի պատմական անցյալի և վիճակագրության վերաբերյալ: Մատենագրությունից բացի այստեղ շոշափվում է նաև Մալաթիայի բարբառի ճյուղային պատկանելության հարցը: Հայ բարբառագիտության մեջ Մալաթիայի բարբառը դասվում է կը ճյուղի բարբառների խմբում (Հ. Աճառյան¹, Ա. Ղարիբյան², Հղ. Աղայան³, Ահ. Գրիգորյան⁴) : Մեր աշխատության մեջ առաջին անգամ ընդգծվում է այն տեսակետը, որ Մալաթիայի բարբառը պետք է դասել հայ բարբառների՝ պրոֆ. Ա. Ղարիբյանի ընդունած դասակարգման հա ճյուղին :

Աշխատության առաջին բաժնում քննարկել ենք բարբառի հնչյունների փոփոխությունները՝ համեմատության եզր ընդունելով գրաբարի հնչյունական համակարգը: Ձևաբանության բաժինը ընդգրկում է բարբառի հոլովման և խոնարհման օրինաչափությունները և ունի նկարագրական բնույթ: Սակայն այստեղ ևս չի անտեսվել պատմական մոտեցումը, ցույց են տրված, թե բարբառի ձևաբանության օրինաչափությունները ինչ փոփոխություններ են կրել գրաբարի քերականության համեմատությամբ:

Աւսումնասիրության վերջին բաժինն ընդգրկում է բարբառի բառային կազմը, որի համար նյութ են ծառայել հավելվածում բերված բառարանները: Վերջում տրված են բարբառային տպքեր:

Ինչպես նշեցինք, սույն ուսումնասիրությունը կատարված է հայրենադարձ մալաթիացիների անմիջական աջակցությամբ, որոնց էլ հայտնում ենք մեր շնորհակալությունը: Հատկապես ուզում ենք նշած լինել մալաթիացիներ Հակոբ Ոսկերչյանին, Խոսրով Որբերյանին, Մանվել Տեր-Պողոսյանին, Գրիգոր և Հարություն Մարգարյաններին (հայր ու որդի) , Հայկանուշ Մազմանյանին և ուրիշներին:

Մալաթիացի Հարություն Մարգարյանը սիրահոժար օգնել է 1. Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 197:

2. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 413:

3. Հղ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 404:

4. Ահ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, էջ 297:

մեզ՝ բարբառային բառերի բառարան և տեքստեր կազմելու գործում: Նա նամակագրութեան միջոցով Սփյուռքի իր ծանոթներից և հարազատներից բարբառային նյութեր է ստացել և արամադրել մեզ: Նրա իսկ բառերով ասած՝ իրականանում է իր վաղեմի երեւթանքը՝ կորստից փրկվում է մալաթիացիների բարբառը, որի ուսումնասիրութիւնը մի տասնամյակ հետո հազիվ թե հնարավոր լիներ: Այստեղ արժե գոհունակութեամբ հիշել նաև Երևանի պետական համալսարանի դասախոս, մալաթիացի, դոցենտ Հայկազ Ժամկոչյանին, որի օգնութեամբ ստուգեցինք մեր կազմած բառարաններն ու բարբառային տեքստերը:

Մալաթիա քաղաքը գտնվում է հյուսիսային լայնության $38^{\circ} 32'$ -ի և Գրինվիչից արևելք 37° -ի միջօրեականի վրա, ծովի մակերևույթից 684 մետր բարձրության վրա: Քաղաքը տարածված է լեռներով շրջապատված մի հովտում: Արևմտյան կողմում գտնվում են Աղջաղաղի, հարավում՝ Տավրոսի շարունակությունը կազմող լեռները, հյուսիսում՝ Սարի Չիչեկը և Դերսիմը, իսկ արևելյան մասի լեռները Մալաթիան քաժանում են Խարբերդից:²

Մալաթիայի հողը արգասաբեր է, ունի ինքնաբուխ ջրի առատ պաշարներ: Քաղաքի հյուսիս-արևելյան կողմով հոսում է Եփրատ գետը, որը օժանման սահում է արևելյան կողմի լեռների քղանցքից և իջնում դեպի հարավ-արևելք: Եփրատին միանում է Խոխմա գետը, որը, Աղջաղաղի լեռների միջով անցնելով, դաշտը քաժանում է նրկու մասի: Տեղական գետերից նշանավոր են Վերի և Վարի Գապուխտի (Բաբուխտի) աղբյուրները: Քաղաքում և նրա մերձակայքում կան բազմաթիվ այլ ժողովրդական աղբյուրներ: Այստեղ այգնգործության, բանջարաբուծության և պտղաբուծության զարգացման համար բնական լայն հնարավորություններ կան: Ամում են սոսի, բարդի, ընկուզանի, թթմնի և պողատու այլ ծառեր: Եանում են ցորեն, գարի, ծխախոտ, բամբակ, բրինձ և այլն:

Մալաթիան պատմության մեջ հայտնի է "Մելիտե", "Մելիտինե", "Մելդիե", "Մալդիա" անուններով: Նա ժողովրդական հնագույն քաղաքներից մեկն է և ունի պատկառելի պատմական անցյալ:

"Մելիտե" անվան առաջին հիշատակությունը վերաբերում է 1337թ. (մ.թ.ա.): Ասորական արձանագրություններից մեկում նշված է, որ ասորական թագավոր Ասուրբալիլիղը այդ թվին նվաճել է Մելիտեն կամ ասորական հորջորջմամբ՝ Մալդիան:

1. Սուլեյն ակնարկը շարադրուլիս օգտագործել ենք ՆԱԱ Ա. Ալպոյաճյանի "Գաղմուքիւն Մալաթիոյ Հայոց" գրքի, տվյալները, բեյրութ: 2. Մ. Որբերեան, "Մալաթիա" (տես "Բիւրակն", 1899, էջ 70):

1320 թվականին Մելիտինեն ապստամբում է Ասորեստանի դեմ, սակայն այն ավարտվում է պարտությամբ: Մելիտինեն այդ ժամանակ փոքրիկ, բայց ինքնուրույն պետություն էր: Մի այլ աղօթանագրությունից պարզվում է, որ 1260-1250թթ.(մ.թ.ա.) Մելիտինեն առանձին թագավորություն էր, որը զբաղվում է խեթների կողմից: Խեթական պետության կործանումից հետո նրա բնակորնների վրա կազմվում են մեծ ու փոքր տեղական թագավորություններ, որոնցից մեկն էլ Մելիտինեն էր: Այս թագավորությունները նրբեմն միանում էին արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար, սակայն սովորաբար գործում էին ինքնուրույն: Հետագա դարերում ուժեղանում են Մելիտինեի հարաբերությունները Ուրարտուի հետ, որոնք մերթ քարեկամական բնույթ էին կրում, մերթ էլ՝ թշնամական: Ասորեստանը և Ուրարտուն Մելիտինեն դարձրել էին կռվախնձոր, քանի որ այն գտնվում էր այդ երկու նվաճողական պետությունների խաչմերուկում: Ուրարտացիների մանապարհը Տավրոսից դեպի Սիրիա տնցնում էր Եփրատ գետի այն մասով, որը հարակից էր Մելիտինեին:

Ուրարտական Մենուա թագավորը (800-785 թթ.մ.թ.ա.), ինչպես ցրւում է իր արձանագրություններից, " . . . Մելիտե քաղաքի Շուլեհափալի թագավորին գցեց հարկի տակ"¹ :

Ուրարտուի անկումից հետո (712-707թթ.մ.թ.ա.) ասորական Սարգոն թագավորը նորից նվաճում է Մելիտինեն, իսկ 501 թվականին Ասորեստանի կործանումից հետո այն տնցնում է Մարբրի կամ Մեդայացիների պետությանը: Հույն պատմաբան Հերոդոտը նշում է, որ Կիաքսարը այդ թվին նվաճեց "Վերին Նահանգները", որոնց մեջ էր մտնում նաև Մելիտինեն: 550 թվին(մ.թ.ա.), երբ կազմակերպվում է Աքեմենյան պարսից պետությունը, Մելիտինեն դառնում է նրա Նահանգներից մեկը: Դարեհ Վշաթսպյանի ժամանակ այն գտնվում էր " Արմենիա" սատրապության մեջ:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ընթացքում Մելիտինեն մտավ նրա կայսրության մեջ, իսկ 301 թվականին(մ.թ.ա.), երբ Իպսոսի դաշնագրով Մակեդոնացու կայսրությունը բաժանվեց չորս մասի, Մելիտինեն դարձավ Սելևկյան ինքնակալության նա-

1. Գ. Դափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, Հայպետհրատ, 1940, էջ 151:

հանգնեցրից մեկը: Այնուհետև Մեւլիախանն անցավ Կապադովկիային, որի իշխանութիւնն ներքո մնաց մինչև Տիգրան Երկրորդի աշխարհակալութիւնը: Տիգրան Երկրորդը 77 թվականին զրաւեց ամբողջ Կապադովկիան, այդ թվում և՛ Մեւլիախանն: Սակայն 64 թվականին այն նորից անցավ Կապադովկիային, քանի որ հռոմեական Պոմպեոս զորավարի դաշնագրով վերջ տրվեց Տիգրան Երկրորդի կայսրութեանը:

Մեր թվարկութեան 387թ., երբ օտար նվաճողները Հայաստանը բաժանեցին Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, Մեւլիախանն իր հարակից հայկական գավառներով ենթարկվեց Բյուզանդիային:

657 թվականին արաբները նվաճում են Մեւլիախանն: Այդ ժամանակից սկսած Արաբիան և Բյուզանդիան անընդմեջ ճակատամարտեր են վարել Մեւլիախանի համար, մինչև որ 964 թվին Բյուզանդիան վերջնականապես նվաճում է այն: Հետագա դարերում այդ քաղաքը քաղաքացիական պատերազմների և մոնղոլների տապալակութիւնների: 1518 թվականին օսմանյան Թուրքիան նվաճում է Մեւլիախանն, որի տիրապետութեան տակ էլ մնում է մինչև այժմ:

Քանի որ խեթական արձանագրութիւնների մեջ ևս հիշատակվում է Մալղիյա կամ "Մալաթիա" անունը ("Մեւլիախան" անվանը զուգահեռ), ուստի հնարավոր է, որ տեղի բնակիչները այդ դարերում Օգտաւորձեհին "Մալաթիա" և "Մեւլիախան" անունները, որոնցից առաջինը, հետագա դարերում գերակշռութիւն ստանալով, դուրս մղեց "Մեւլիախան" անվանումը: Թուրքական տիրակալութեան շրջանում (սկսած 16-րդ դարից) այդ քաղաքը հիշատակվում է "Մալաթիա" հորջորջմամբ:

Այս համառոտ ակնարկից երևում է, որ Մալաթիայի հայերը դարեր շարունակ գտնվել են օտարերկրյա գավթիչների իշխանութեան տակ: Այդ արշավանքների ժամանակ քաղաքը ավերվել է, իսկ բնակիչներն էլ հարկադրաբար հեռացել են իրենց բնակավայրերից: Ժիշտ է, նրանց մի մասը հեռագայում վերադարձել է իր հայրենի օջախը, բայց քաղաքն են ներգաղթել նաև այլ գավառների քունակիչներ, որի հետևանքով փոխվել է բնակիչների ազգային կազմը, նրանց բարբառը:

Պատմութիւնը Մալաթիայի հայերի քանակի մասին ոչ մի վիճակագրական տվյալ չի նշում: Այդ քաղաքի հայերի մասին

մենք տեղեկություններ իմանում ենք միայն կողմնակի աղբյուրներին և կամ պատմիչների՝ այս կամ այն առիթով արած ակնարկներին:

Հայ և օտար պատմիչները Մելիտինեն միշտ էլ համարել են "Հայոց քաղաք", իսկ Միքայել Ասորի պատմիչը այն անվանել է "Մելիտինէ Հայոց" ¹ :

Հունա-հռոմեական աղբյուրները նշում են, որ Տիգրան Երկրորդը Կիլիկիայի և Կապադովկիայի (որի նահանգներից մեկն էր Մելիտինեն) հունաքնակ 12 քաղաքների բնակիչներին տեղափոխեց իր նորակառույց Տիգրանակերտ մայրաքաղաքը: Այդ քաղաքների թվում չի նշված Մելիտինեն: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Մելիտինեի բնակիչներն այդ ժամանակ հունա-իոս չէին, այլևայնու Տիգրան Երկրորդը նրանց ևս կփոխադրեր իր մայրաքաղաքը: Մնում է կարծել, որ նրանք հայ էին, որովհետև այդ դարում Մելիտինեի շրջակա նահանգներում բնակվում էին հույներ, հռոմեացիներ և հայեր, և քացի այդ՝ Տիգրան Երկրորդը չէր տեղաշարժում հայ բնակիչներին:

Մելիտինեն Փոքր Հայքի կարևոր քաղաքներից մեկն էր, իսկ մեր թվարկության 284թ. դառնում է նրա կենտրոնը: 390թ. Բյուզանդիայի Թեոդորոս կայսրը Փոքր Հայքը բաժանում է երկու գավառների՝ Առաջին Հայք և Երկրորդ Հայք: Վերջինի կենտրոնը Մելիտինեն էր ² : Ժիշտ է, այն ժամանակ այս երկու գավառները չմասն հռոմեական Հայաստանի կազմի մեջ, քայց նկատի ունենալով Մելիտինեի հայաքնակ լինելու հանգամանքը, սովորաբար այն հաշվում էին որպես հայկական տերիտորիա, Հայաստանի մի մասը: Արշակունյաց թագավորության կործանումից հետո (428թ.) Մեծ Հայքի հայերը գաղթում են Փոքր Ասիայի գավառները, որոնք ավելի ապահով էին պարսկական հալածանքներից: Ինքնին հասկանալի է, որ գաղթածների մի մասն էլ բնակություն է հաստատում Մելիտինեում:

Բյուզանդական Հուստինիանոս կայսրը Հայաստանը բաժանում է 4 վարչական շրջանների՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք, Չորրորդ Հայք: Երրորդ Հայքի կենտրոնը դառնում է Միքայել Ասորի, Ժամանակագրութիւնը, Երուսաղէմ, 1871:
2. Հիւրշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 76:

է Մեւլիթինեն: Հոլստինիանոսը Մեւլիթինեն " Այնպիսի փայլ
ավեց, որ ժամանակակիցները այն անվանեցին՝ Հայաստանի զարդ¹:

Նշենք մի այլ վկայութիւն ևս: 1045 թվականին բյուզանդական Վասիլի Բ կայսրն առաջարկում է Հայոց Գագիկ Բ թագավորին՝ Մեւլիթինենի և նրա շրջակա նահանգների փոխարեն իրեն գիջել Անին: Գագիկը հրաժարվում է: Արիստակես Լաստիվերոցի պատմագիրը, որն այս դեպքերի ժամանակակիցն էր ու նկարագրողը, պատմում է, որ Մեւլիթինենում այդ ժամանակ զգալի թվով հայեր էին ապրում:

Մալաթիայի հայերի մասին վիճակագրական առաջին տվյալները վերաբերում են 19-րդ դարի 90-ական թվականներին: Գրոֆ . Մկրտիչ Որբերյանը, որը բնիկ մալաթիացի է, գրում է, որ 1900-ական թվականներին Մալաթիայում 10.000 հայ կար (այսինքն բնակիչների $\frac{1}{3}$ հասը)²: 1915 թվականին քաղաքի հայերի թիվը հասավ 15.000-ի: 1915թ. թուրքական կոռավարութայն կազմակերպած հրեշապոր ջարդերից մեծ բաժին հասավ նաև Մալաթիային: Քաղաքի 15000 հայ բնակիչներից հազիվ կենդանի մնաց 1000 հոգի, նրանց մի մասն էլ հետագա տարիներին կամ ջարդի ենթարկվեց, կամ էլ մազապուրծ լինելով՝ պանդխտութայն ցուպը ձեռքին զաղթեց օվկիանոսից-օվկիանոս, երկրից-երկիր: Գանդուխտ մալաթիացիների մի զգալի մասը ներգաղթեց Սովետական Հայաստան և վերջնականապես բնակութիւն հաստատեց Երևանի մոտ գտնվող Մալաթիա ավանում:

Բացի Մալաթիա քաղաքից, հայեր կային նաև շրջակա գյուղերում: 1915 թվի դեպքերից առաջ հայախոս էին Մալաթիայի նահանգի հետևյալ գյուղերը՝ Աղաֆի, Վարի Բարդուզի, Քիլեիզ, Ջըրմըխի, Օրդուզի, Մուշոփկա, Անսուր: Արժե նշել, որ այս գյուղերի ոչ բոլոր հայերն էին խոսում Մալաթիայի բարբառով: Բանն այն է, որ նրանց մեծ մասը այլ նահանգներից Մալաթիա էր զաղթել 1895-96թթ. համիդյան կոռավարութայն կազմակերպած հայ կական կոտորածների ժամանակ: Այդ գյուղերի հայերի զգալի մասը նույնպես բնաջնջման ենթարկվեց 1915թ. հայկական օրհասական եղեռնի ժամանակ:

1. Ն. Ադունց, Հայաստանը Հոլստինիանոսի ժամանակ, Գետեր - օուրգ, 1908, էջ 14 (ոուսերսն հրատարակութիւն):

2. Բիւրակն³, 1900 թ., էջ 87:

Ակադ. Հ. Աճառյանի վկայութեամբ Մալաթիայի քաղաքում
էին խոսում նաև Ադիյաման կամ Հյուսնի Մանսուր քաղաքի բնա-
կիչները, որոնք 1915թ. 3000 հայ կար, "Ադիյամանը հայութեան
հարավային սահմանն է", - գրում է Հ. Աճառյանը¹:

Ի հավելումն այս տկնարկի՝ նշենք, որ պատմական Մելի-
տինե քաղաքը և այժմյան Մալաթիան միևնույն աշխարհագրական
տեղում չեն գտնվում: Մալաթիացիք իրենց բուն բնակավայրից
քացի ունեին նաև ամառանոցներ, որոնք գտնվում էին քաղաքից
մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ Ասրուզի կոչվող վայ-
րում: Նրանք այնտեղ լիցում էին իրենց անասունները, ունեին
բանջարանոցներ, այգիներ և այլն: Ուշ աշնանը քաղաքի բնակիչ-
ները վերադառնում էին իրենց հիմնական բնակավայրը՝ Մելիտի-
նեն, որն անվանվում էր Վարի քաղաք: Ամեն տարի Վարի քաղաքում
վառելիքի և ջրի պակասություն էր զգացվում: Եվ նրա 1839-41
թ.թ. թուրք-եգիպտական պատերազմի ժամանակ քաղաքը լցվում է
զինվորներով, տեղական բնակիչները ծմնող ևս հարկադրաբար մը-
նում են Ասրուզի ամառանոցավայրում: Այդ հանգամանքը պատ-
ճառ է դառնում, որ մալաթիացիք ընդմիշտ թողնեն քաղաքը՝ ի -
րենց համար մշտական բնակավայր ընտրելով Ասրուզին: Այդ
նոր բնակավայրը վերանվանվում է Մալաթիա, իսկ բուն քաղաքը՝
Մելիտինեն (Մալաթիան) կոչվում է Վարի քաղաք (էսքի շահար):
Այդ ժամանակվանից պատմական Մելիտինեն դադարում է բնակավայր
լինելուց և "հիշեցնում է որպես պատմական հուշավայր, ուր
մնում են նախկին պարսպի հետքերը"²:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պոլսում հրատարակվող "Բիւրակն" հանդեսի 1898 թվա-
կանի համարներից մեկում տպագրված մի հոդված մալաթիացիներ -
րի նախապաշարումների մասին³: Այնտեղ հիշատակվում է Մա-

1. Հ. Աճառյան, Հայ քաղաքագիտություն, Մոսկվա - Նոր Նախի-
ջևան, 1911, էջ 198:

2. "Բիւրակն", 1900, էջ 114:

3. "Բիւրակն", 1898, էջ 620:

լաթիայի բարբառի մասին ու օրինակներ բերվում այդ բարբառով (առանձին բառեր կամ ոճեր): 1899թվականին նույն հանդեսում լույս տեսան առաջին նմուշները Մալաթիայի բարբառով, որոնք պարունակում են 22 առած՝ առանց գիտական տառադարձման¹:

Մի տարի անց նույն տեղում տպագրվեց պոռժ. Մկրտիչ Որբերյանի "Մալաթիա" հոդվածը, որտեղ "քիչ մը լեզվական", ենթազիխում հեղինակը, հիմք ընդունելով արտասանությունը, բերում է "աղավաղյալ բառերի" օրինակներ: Հեղինակը "աղավաղյալ" է անվանել այն բառերը, որոնք գրական լեզվում այլ արտասանություն ունեն: Բնիկ մալաթիացի լինելով՝ Մ. Որբերյանը հիմնականում ծիշտ է տառադարձել բաղաձայնները, սակայն ձայնավորների փոփոխությունների տառադարձումը կատարել է յուրովի: Այսպես, բարբառում առկա է օ՝ հնչյունը: Բայց քանի որ հայկական այբուբենում բացակայում է այդ հնչյունի տառը, ուստի հեղինակն այն տառադարձել է է տառով (արիւն-էրին, փոխանակ՝ արիւն>էրին և այլն):

Սրանք են Մալաթիայի բարբառի վերաբերյալ գրավոր առաջին հիշատակությունները: 1900 թվականից հետո "Բիւրակն" հանդեսի հրատարակությունը դադարում է, իսկ ուրիշ հանդեսներում այդ բարբառով մեզ նմուշներ չեն հանդիպել:

Հանվելով հրատարակված վերոհիշյալ ավյալների վրա՝ ալաղեմիկոս Հ. Աճառյանը իր "Հայ բարբառագիտություն" աշխատության մեջ Մալաթիայի բարբառը դասեց կը Ճյուղի բարբառների խմբում, ավեց նրա շատ համառոտ նկարագիրը և որպես նրմուշնար վերցրեց "Բիւրակն" հանդեսում լույս տեսած առածներից 14-ը՝ ենթարկելով գիտական տառադարձման: Հ. Աճառյանը այդ բարբառին անդրադարձել է նաև իր "Հայ գավառական բառարան" ² և "Հայոց լեզվի պատմություն" (2-րդ հատոր)³ աշ-

խատություննարի մեջ՝ հիմնականում պահպանելով այդ բարբառի վերաբերյալ "Հայ բարբառագիտության" մեջ իր իսկ բերած ավյալները:

Ալաղ. Ար. Ղարիբյանը իր "Հայ բարբառագիտություն" աշխատության մեջ հատուկ ենթազիխով տվել է Մալաթիայի բարբառի դերանունների հոլովման և քայերի խոնարհման համառոտ ուր-

1. Բիւրակն, 1899, էջ 772:

2. Հ. Աճառեան, Հայ գավառական բառարան, 1913, էջ 32:

3. Նույնի, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, հ. 2-րդ, էջ 324:

վագիծը և ապա բերել այդ բարձրագույն մի նմուշ՝ " Թախթասուս Արթինը" վերնագրով: 1

1961թ. Բեյրութում հրատարակվեց Ա. Ալպոյաճյանի "Գա-
տումութիւն Մալաթիոյ Հայոց"2 ստվարածավալ աշխատությունը,
որի " Լեզվաբանական բաժնում " հրապարակված է մի նմուշ
Մալաթիայի բարձրագույն՝ "էշը, եզը և մշակը " վերնագրով: Գրը-
քում ի մի ձև բերված այդ բարձրագույն վերաբերյալ ապագրված կամ
ձեռագիր բոլոր հոդվածներն ու կարծիքները: Այնտեղ գետեղ-
ված է նաև Կարապետ Բենեյանի բարձրագույն քառերի ձեռագիր
բառարանը՝ գրված արևմտահայ գրական լեզվով: Վերջին հանգա-
մանքը դժվարացնում է պարզելու քառերի արտասանության իսկա-
կան վիճակը: Բացի այդ՝ քառերի մի մասը գրական բնույթի է
և ոչ մի առնչություն չունի բարձրագույն հետ, ուստի մենք օգտը-
վեցինք այդ բառարանից խիստ զգուշորեն: Բարձրագույն մալա-
թիացիների միջոցով ստուգելուց հետո հավաստի քառերը մեջը-
րինք մեր կազմած բառարանը, իսկ կասկածելիները հանեցինք :
Սակայն իր թերություններով հանդերձ, Կարապետ քահանա Բե-
նեյանի բառարանը շատ կարևոր է և վկայում է հայ մշակույ-
թին ծառայած լինելու հեղինակի ազնիվ ձգտման մասին: Տարի-
ներ շարունակ նա նվիրվել է հայ ժողովրդի մեջ լուսավորու-
թյուն տարածելու գործին: Իր ուժերի ծաղկման շրջանում էլ
նա գոհվեց 1915թ. հայկական եղեռնի ժամանակ:

Մալաթիայի բարձրագույն մասին մի քանի անգամ ակնարկվել
է նաև Մալաթիայի կրթասիրաց ընկերության օրգան "Նոր Մալա-
թիա" հանդեսի տարբեր համարներում: Հոդվածագիրներն այստեղ
բավարարվել են տվյալ բարձրագույն մասին արվող հասկանալի դըր-
վատումներով: Ուստի մենք նրանց վրա կանգ չենք առնում հայտ-
նի պատճառներով: Մնում է ավելացնել, որ, ինչպես Ա. Ալպո-
յաճյանն է ասում, " Մալաթիա իր անմիջական շրջակայքով կը-
նսրկայացնե լեզվական տեսակետով առանձին խմբավորում մը և
ունի իր հատուկ բարձրագույն, որ դժբախտաբար լրջորեն չէ ուսում-
նասիրված " 3 :

1. Ա. Ղարիբյան, Հայ բարձրագիտություն, Երևան, 1958, էջ
413-417:

2. "Գատումութիւն Մալաթիոյ Հայոց" աշխատասիրությամբ Ա. Ալպո-
յաճյանի, Բեյրութ, 1961, էջ 1157-1160:

3. "Գատումութիւն Մալաթիոյ Հայոց", էջ 1027:

**ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱՐՐԱՌԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՊԱՏԿԱՆՆԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՐՇԻ ՇՈՒՐՋԸ**

Ակադեմիկոս Հ. Աճառյանը իր " Հայ բարբառագիտութիւն " ¹
աշխատութեան մեջ, ելակետ ունենալով բայի սահմանական
եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմութեան
ծնը, Մալաթիայի բարբառը համարում է կը ճյուղի բարբառ:

Հենվելով Մալաթիայի բարբառի մասին մինչև 1911թ. հրա-
պարակում եղած տվյալների վրա՝ Հ. Աճառյանը հանգում է այն
եզրակացութեան, որ այդ բարբառը ունի պայթական ըստ ժամանակ-
ների նրբու շարք՝ Թրթոուն և Թագ (ծայնեղ և շնչեղ խուլ) ² :
Խոսելով ծնաբանութեան մասին, Հ. Աճառյանը նույն անդում
գրում է . " Քերականութեան մեջ չկրցանք գտնել առանձին հատ-
կանշանան ծնար, և միմիայն հրատարակված հատվածները ³ ճիշտ են,
կրնանք ըսել, թա Մալաթիո բարբառին բարբառագիտութիւնը առան-
ձին նորութիւններ չունի: ⁴

Սակայն նույն հոդինակի " Հայոց լեզվի պատմութեան " նը-
կըրորդ հատորում Մալաթիայի բարբառի բարբառագիտութեան վերաբը-
յալ խորը-ինչ այլ կարծիք է հայտնված. " Քերականութեան մեջ
հատկանշանունն այն է, - գրում է Հ. Աճառյանը, որ ա մասնի-
կով կազմում են շարունակական ներկա և շարունակական անցյալ
ժամանակներ (հէրիմ ա, հէրէի ա) ⁵ :

Ակադեմիկոս Ար. Չարիբյանը իր Հայ բարբառագիտութիւն " ⁶
աշխատութեան " Մալաթիայի բարբառը " մեթազլիում նույնպէս նը-
շում է, որ այդ բարբառը պատկանում է կը ճյուղին և ա մաս-
նիկով կազմում են շարունակական ներկա և անցյալ անկատար ժա-
մանակներ: Նա միաժամանակ ավելացնում է, որ սահմանական եղա-

1. Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, Մոսկվա-Նոր Նախիջևան,
1911, էջ 197:

2. նույն անդում:

3. Խոսքը վերաբերում է " Բիւրակնում " հրատարակված 22 առած
ներին, որոնցով իրոք դժգար է պարզել այդ բարբառի սահմ. ե-
ղանակի ներկայի կազմութիւնը: Հրատարակված նմուշները առա-
ծանիի ներկայով են:

4. Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 198:

5. նույնի, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ հատոր, Երևան,
1951, էջ 327:

նակի նարկա և անցյալ անկմտար ժամանակների շարունակական ժամանակներ կազմող ա մասնիկը գործածվում է նաև նշված ժամանակների ժխտական ձևերի կազմության մեջ¹ :

Ըստ Ար. Ղարիբյանի հնչյունաբանական դասակարգման՝ Մալաթիայի բարբառը պատկանում է տեղաշարժ-տեղափոխության խմբի երկաստիճան խլազուրկ (շնչեղ խուլներով հարուստ) մեթաթմբի բարբառների շարքին: Այսպիսով Մալաթիայի բարբառի հնչյունաբանական դասակարգման վերաբերյալ Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի տեսակետները՝ ըստ էության, համընկնում են և ճիշտ են:

Ձարգացնելով բարբառների ձևաբանական դասակարգման Աճառյանի ընդունած սկզբունքը, Ա. Ղարիբյանը, ինչպես հայտնի է, հայ բարբառների ճյուղերի թիվը հասցրեց 7-ի՝ ում, լ, ս, կ, ղ, հ և գրաբարատիպ²: Քանի որ հ ճյուղի բարբառները և Մալաթիայի բարբառը իր ա մասնիկով շարունակական ժամանակներ կազմելու սրևույթով համեմատության որոշ սզրներ ունեն, Ա. Ղարիբյանը գտնում էր.

" Ահա > հա ճյուղի բարբառները (1953թ. հոկտեմբեր այդ ճյուղին վերագրեց **Քեսաթի** բարբառը, ալա հետազայում ավելացրեց նաև Քարուսիեի և Եղեսիայի բարբառները -Թ.Դ.) թույլ են նդել և ենթարկվել են կ ճյուղի բարբառների ազդեցության կամ բոլորովին ձուլվել են նրա մեջ ու դարձել կ ճյուղի բարբառներ, կամ սովորական ներկան կազմելու համար ընդունել են կ մասնիկը, իսկ ա > հ > ա մասնիկները թողել են շարունակական ձևեր արտահայտելու համար, ինչպիսիք են Մալաթիայի և Համշանի բարբառները"³ :

Այսպիսով Ա. Ղարիբյանը այն կարծիքն է հայտնում, որ Մալաթիայի բարբառը սկզբում եղել է հ ճյուղի բարբառ, որը հետագայում մեթաթմբի է կը ճյուղի բարբառների ազդեցությանը:

1956թ. նույն հոկտեմբեր, բնության ենթարկելով Քարուսիեի, Արամոյի և Եղեսիայի բարբառները, հանգեց այն տեսակետին, որ Տիգրանավարտի, Մալաթիայի և Եղեսիայի հայ բնակչու-

1. Տես Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 415:
2. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 256:
3. Նույնի էջ 443:
4. Նույնի Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երեվան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1958, էջ 147:

թյան բարձրագույնը պատկանում են միևնույն ասոցիացիային: Սակայն, շարունակում է Ար. Ղարիբյանը, Եղեւսիայի և Մալաթիայի բարձրագույնի տարբերությունն այն է, որ եթե առաջինը սովորական նորկան կազմում է ա մասնիկով (քրիմ ա), իսկ շարունակական ներկան կազմելու համար սկզբից ավելացնում կը մասնիկը (գը քրիմ ա), մինչդեռ Մալաթիայի բարձրագույն ա մասնիկով կազմում են շարունակականը, իսկ կը մասնիկով՝ սովորական նորկան 2 :

Քանի որ Հ. Աճառյանի ընդունած և հայ բարձրագիտության մեջ ավանդապես ընդունված ծառայողական դասակարգման հիմնական հատկանիշը սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմության ծան է, ուստի պարզանք, թե Մալաթիայի բարձրագույն ինչպես են կազմվում այդ ժամանակները, որով և պարզ կլինի խնդրո առարկա բարձրագի մյուսողային պատկանելության հարցը:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որն ընթացքի մեջ է: Սակայն " ընթացքի մեջ" հասկացողությունը ինքնին հարաբերական է, որովհետև այն ունի այլևայլ դրսևորումներ:

Այսպես .

ա) ներկա ժամանակով արտահայտվում են այնպիսի գործողություններ, որոնք ցույց են տալիս մշտնջենական պրոցեսներ: Օրինակ՝ ծուկն ապրում է ծովում, երկիրը պտտվում է արևի շուրջը, տարբեր շարժվում է քամուց և այլն:

բ) նույն ժամանակով են արտահայտվում նաև գործողություններ, որոնք տևական են միայն ժամանակի որոշ հատվածի մեջ: Օրինակ՝ ես ապրում եմ Երևանում, ամեն օր ճաշում եմ ժամը 4-ին, հորիցս նամակ եմ ստանում: Սրանք վերաբերում են ժամանակի որոշ հատվածի, ուստի հարատև պրոցեսներ լինել չեն կարող: Պայմանականորեն այն անվանենք հատվածային ներկա:

գ) Գործողություններ, որոնք կատարվել են անցյալում, բայց պատմվում են իբրև ներկա: Սրանք հատուկ են հեքիաթներին առակներին և կոչվում են պատմական ներկա (" Լինում է, չի լինում . . . "):

1. Ա. Ղարիբյան, Հայերսնի նորահայտ բարձրագիտության մի նոր խումբ Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1958, էջ 147:

2. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, մաս Գ. Իտ. տն. 1961, էջ 95:

դ) Եվ վերջապես գործողություններ, որոնք սկսվել են և այժմ՝ տվյալ պահին, ընթացքի, պրոցեսի մեջ են: Սրինակ՝ գրում եմ (այժմ), խոսում եմ (հիմա), գնում եմ (այժմ) և այլն: Այս վերջինը ընդունված է ժնվանել շարունակական ներկա, ի տարբերություն բուն կամ սովորական ներկային, որն ընդգրկում է ներկա ժամանակով արտահայտող բոլոր երևույթները:

Մալաթիայի բարբառի այժմյան վկաները՝ բարբառախոս մալաթիացիները, չեն տարբերում սովորական ներկան և շարունակականը, մինչդեռ նրանց տարբերությունը պարզորոշ երևում է կը ճյուղի մի շարք բարբառներում՝ Պոլսում, Համշենում, Տրապիզոնում և այլն ¹ :

Մալաթիայի բարբառում սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմելու համար խոնարհվող բային հարադրվում է ա հետադաս գործածության մասնիկը, իսկ ծայնավորով սկսվող բայերի սկզբում, բացի այդ մասնիկից, ավելացվում է կ>զ-ն (փէրիմ ա, գէրթամ ա, գըսիմ ա և այլն) :

Բերսնք մի քանի օրինակներ.

Սարգիս Զուրիկյանը ծնվել է Մալաթիայում 1904 թվականին և զաղթել այնտեղից 1929թ.: Մեր այն հարցին, թե որտեղ է աշխատում իր որդին, նա պատասխանում է. " իմ դըղաս վարժադուն գէրթա յա " (այսինքն դպրոց է գնում՝ սովորում է): Սա սովորական ներկա է, քանի որ խոսքը վերաբերում է ո՛չ թե նրա որդու կատարած աշխատանքին տվյալ պահին, այլ ընդհանրապես:

Հարց.- Զեր հին լեզվով (իմա՝ բարբառով) ո՞վ է լավ խոսում.

Պատասխան.- Միր հին լեզուն՝ չիքնա գուրցիր ա, ամա իմ ախարըս միր հին լեզվօք ազգէզ գուրցէ յա: (Պատասխանում է Արուսյակ խաչատրյանը, որը Մալաթիայից զաղթել է 25 տարեկան հասակում և այժմ բնակվում է Շահումյանի շրջանի նոր Մալաթիա ավանում):

Հարցնում ենք մալաթիացի Հակոբ Անթեպյանին.- Դուք ծըխում եք.

1. Հ. Աճառյան " Լիակատար քերականություն հայոց լեզվի", հատոր 4, մաս Բ, Երևան, 1961, էջ 97-98:

Պատասխան. - Իս ջըղարա ¹ խըմիմ ա, ամմա հիմա քօվըս չիգա :

Բերսնք մի քանի օրինակներ էլ Ա. Ալպոյաճյանի "Պատմութիւն Մալաթիոյ Հայոց" գրքից .

" Մընագ թուն մէր թասային ա չիս հայիր, չիրփի բէս հավէրուդ հէդ քէֆ գէնիս ա "2 :

" . . . Չունքի գընիգը շող սիրէ յա "3:

Մի հատված էլ բերսնք ֆրանսիաբնակ մալաթիացի Գ. Տոնապետյանի ձեռագրից.

" Բըզդիգուց դըհա միք չըջօղ էդած աղիննիս քէդ գէրթայաք ա : Հօնգի բըզդիգ ախչինները հօփ-հօփ խաղային ա, գըզըզուք նըստէյին, ցառքէրնին ձունգէրնուն գէնէյին, խաղ գանչէյին ա :

Դըհա էրէգվան բէս միակըս գուքա յա

էն թաղին ախչինները

նըստիր խալի քօրծէն ա " . . .

Այս բոլորից կարելի է հանգել այսպիսի եզրակացությունների .

1. Մալաթիայի բարձրագույն եղել է կը մյուսի բարձրագույն, այսինքն՝ նօրկա ժամանակը կազմել է կը մասնիկով: Մարունակական ժամանակների կազմության համար այդ բարձրագույն մյուսի բարձրագույնից վերցրել է ահա > հա մասնիկը, ապա կրճատել հ-ն, քանի որ բարձրագույն այդ հնչյունը ընկնում է կամ թույլ

հնչում ունի: Սակայն քանի որ կը մասնիկը միաժամանակ գործածվում է նաև պայմանական եղանակի ժամանակներ կազմելու համար, ուստի այս երկու եղանակների նույնացման վտանգը հավանաբար ազդել է, և ա մասնիկը իր գործածության շրջանակները ծավալել, ընդհանրացրել է՝ ընդգրկելով սահմանական եղանակի ներկա ժամանակը ընդհանրապես: Այլ խոսքով ասած՝ բուն ներկան և շարունակականը նույնացել են: Այլ մասնիկով նօրկա ժամանակներ կազմելու երևույթը, միշտ է, դադարեց

գործելուց, բայց իր հետքը թողեց ժայնավորով սկսվող բայեր-
1. Ջըղարա խըմել = սիգարետ ծխել:

2. Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց , էջ 1190:

3. Նույն տեղում:

րի խոնարհման մեջ , որտեղ կ>զ-ն պարտադիր է :

2. Կարելի է ենթադրել նաև հակառակը : այսինքն՝ Մալաթիայի բարբառը եղել է հա ծյուղի բարբառ, սակայն ընկնելով կը ծյուղի բարբառների զորեղ ազդեցության ուժորոտը, ներկա ժամանակը կազմել է այդ ծյուղի բարբառների նման, իսկ հա - ի ա-ն պահպանել է շարունակական ժամանակների կազմության համար, ապա ընդարձակվել է շարունակականի զործածության ծավալը և այն փոխարինել է բուն նսրկային :

Քանի որ հայ պարբերական մամուլում Մալաթիայի բարբառով համարյա հրատարակված տեքստեր չկան , ուստի ոչինչ ասել չենք կարող նրա նախկին վիճակի մասին :

Արդ , մեր ուսումնասիրությունները մեզ հանգեցրին հետևյալ եզրակացության .

Մալաթիայի բարբառը դասվում է հա ծյուղի բարբառների շարքը , քանի որ այդ բարբառի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության ժամանակ զործածվում է ա հա բառամասնիկը : Ապա՝ բարբառի ներքին օրինաչափությամբ (տես §145), բառակապակցությունների մեջ ընկնում է այդ մասնիկի հ-ն : Այսպիսով ա հա բառից մնում է միայն բառավերջի ա-ն :

Այդ բարբառը ընկնելով կը ծյուղի բարբառների ազդեցության ուժորոտը, նրանցից յուրացրել է կը>զ-ն և օգտագործել միայն ծայնավորով սկսվող բայերից առաջ : նախ՝ ստեղծվել է մի համաչափություն, ըստ որի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում բոլոր բայերն սկսվում են բաղաձայնով (փէրիմ աի գէրթամ ա, գըսիմ ա, փէրէյի յա, գաղայի յա, գըսէյի յա և այլն), ապա պայմանական եղանակի ապառնին սահմանադրվել է սահմանական եղանակի ներկայից . այսպես՝

իս գըփէրիմ - "ես կբերեմ" - պայմանական եղանակ

իս փէրիմ ա - "ես բերում եմ" - սահմանական ներկա

իս գէրթամ - "ես կգնամ" - պայմանական եղանակ

իս գէրթամ ա - "ես գնում եմ" - սահմանական ներկա

Այստեղից հետևություն . ա մասնիկով սահմանական եղանակի նսրկայի և անցյալ անկատարի շարունակական ժամանակներ

կազմելու վերաբերյալ Հ. Ամառյանի և Ա. Ղազարյանի ընդունած տեսակետը պետք է վերանայել՝ քանի որ նրանց կողմից դիտված շարունակական ներկան իրականում սովորական կամ քուն ներկա է:

Հետևաբար պետք է վերանայել նաև Մալաթիայի բարձրագույն տեղը հայ բարձրագույն դասակարգման համակարգում: Այն պետք է դիտել ոչ թե կը մյուսի բարձրագույն, ինչպես մինչև այժմ է դիտվել հայ բարձրագույնության մեջ, այլ որպես հա մյուսի բարձրագույն :

**Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Լ Ո Ւ Ն
Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Ռ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Մալաթիայի բարբառն ունի 39 հնչյուն:

Ձայնավորներ՝ 9 - ա, օ, է, ու, ի, ը, փ, փլ, օ

Բաղաձայններ՝ 30՝ բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, ժ, ջ, ծ, ց,
չ, վ, զ, ժ, ղ, ֆ, ս, շ, խ, հ, լ, մ, ն, ռ, ույ

2. Ա-ն ունի կոշտ արտասանություն, լեզվի ստորին բարձրացմամբ: Ա-ն առաջին շարքի ստորին բարձրացման քմային ձայնավոր է և արտասանվում է աղորժաններն հնչյունի նման: Այն փոքր-ինչ մոտենում է առաջնային շարքի միջին բարձրացման է ձայնավորին: Ա հնչյունը, քացի փոխառյալ բառերից, հանդիպում է նաև այ երկբարբառի պարզեցման դեպքում և ը ձայնորդից առաջ: Բարբառում առկա են նաև փլ, օ հնչյունները, որոնք հիմնականում գործածվում են ցուցական դերանունների հոլովման և իբրև ստացական դիտված դերանունների մեջ: Նրանք արտասանվում են ինչպես գերմաներենի փլ և օ ձայնավորները: Բարբառը չունի երկբարբառներ և եռաբարբառներ, ոչ էլ շնչեղ ձայնայիններ:

3. Գրաբարի և Մալաթիայի բարբառի պայթականների և պայթափականների համեմատությունը հետևյալ պատկերն է տալիս.

Գրաբար

Ձայնեղներ՝ բ, գ, դ, ժ, ջ

Խուլներ՝ պ, կ, տ, ծ, ց

Շնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, չ

Բարբառ

Շնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, չ

ա) անկախ դիրքում ձայնեղներ՝
բ, գ, դ, ժ, ջ

բ) ս, շ, խ-ից հետո կամ ք-ից
առաջ խուլներ՝ պ, կ, տ, ծ, ց

Շնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, չ

Այս համեմատությունից երևում է, որ անկախ դիրքում, այսինքն բառասկզբում, բառամիջում՝ ձայնավորների միջև, և

բառալսարնում խուլ հնչյուններ չկան: Գրաբարյան խուլներն այդ դիրքում ծայնեղանում են: Սակայն ս, շ, խ հնչյուններից հետո, հավանաբար նրանց ազդեցությամբ, հին հայերանի խուլների արտասանությունը մնում է անփոփոխ: Նույնն ենք նկատում նաև շրն-չնդ խուլ ք-ից առաջ գտնված խուլների արտասանության ժամանակ, որտեղ խուլները, անփոփոխ մնալով, իրանց հարթին ազդում են ք-ի վրա և դարձնում այն կ:

Գրաբարյան ծայնեղանքին բարբառում համապատասխանում են շնչեղ խուլները: Այսպիսով բարբառն ունի երկու բնույթի շնչեղ խուլներ՝ բուն և ծայնեղազրկումից առաջացած: Սակայն նկատվի է, որ փ < բ, ք < գ, թ < դ, չ < ջ և ց < չ հնչյուններն ունեն ծայնեղության որոշ երանգ, այնինչ փ < փ, ք < ք, թ < թ, չ < չ, և ց < ց հնչյունները զուրկ են այդ նրանգից: Հեռանելով ավանդական հայ բարբառագիտությանը, մենք ծայնեղազրկումից առաջացած հնչյունները տառադարձում ենք շնչեղ խուլներն արտահայտող տառերով: Սակայն թվում է, որ փ < բ, ք < գ և այդ կարգի այլ հնչյուններն իրենց որակով տարբերվում են բուն շնչեղ խուլներից: Փորձառական հնչյունաբանության տվյալների բացակայության պատճառով մեզ համար դժվար է այդ տեսակետի հաստատման համար անհրաժեշտ փաստարկներ բերել: Ուստի մնում է մեզ հիմնվել միայն մեր լսողական տպավորությունների վրա, որոնք կարող են նաև անհատական ընկալման հատանք լինել: Թյուրիմացությունից խուսափելու համար մենք բազմիցս այդ հարցով դիմել ենք մալաթիացիներին: Մալաթիացի Հարություն Մարգարյանը, որը մանկության տարիներին խոսում էր միայն մալաթիայի բարբառով, մեզ հայտնեց, որ ինքը հանգել է նաև հստակալ եզրակացության. հին հայերանից պահպանված շնչեղ խուլներից հետո ծայնավորներն ավելի բաց են արտասանվում, քան այն ծայնավորները, որոնք հաջորդում են հին հայերանի ծայնեղներից ստացված շնչեղ խուլներին: Այսպես՝ թաս > "թաս" բառի մեջ ս-ն ավելի բաց է հնչվում, քան թաս > "դաս" բառի մեջ:

1. Մեզանից անկախ նույն կարծիքին է հանգել նաև պրոֆ. Է. Աղայանը, միայն տարբեր թն մեր մեկնաբանությունները. տես է. Աղայան, Գրաբարի քերականություն, 1-ին մաս, Երևան, 1964, էջ 152-153: Տեսականորեն նույն կարծիքին է հանգել նաև պրոֆ. Գ. Հահուկյանը. տես "Հայ բարբառների բաղադրական համակարգի ծագման հարցի շուրջը, Вопросы языкознания" №6, 1960, էջ 48:

Այնուհանդերձ այս հարցը դեռևս մնում է չլուծված, և մեր փորձառական հնչյունաբանության մասնագետների ուշադրությունն ենք հրավիրում:

Մյուս հնչյունների արտասանությունն առանձնապես չի տարբերվում նրանց զրական արտասանությունից:

4. Մալաթիայի բարբառում շեշտը սովորաբար լինում է վերջին վանկում. օրինակ՝ գետին>քէդին, գինի>քինի, գարի>քարի, փողորակ>փորղանք, ոսկր>օսկօր, ակոթյ>արգօ, լիւր>լիղիր և այլն: Եթե վերջին վանկի ծայնավորն է ը, ապա շեշտը լինում է վերջընթաց վանկում. օրինակ՝ ծանր>ծանդր, բարձր>փանծր և այլն:

Նույն ձևով էլ շեշտը այն բառերի վերջին վանկումն է լինում, որոնց վերջընթաց վանկի ը-ն նախորդ կամ հաջորդ վանկի ծայնավորնարի առնմանությամբ հնչյունափոխվել է այլ հնչյունների. օրինակ՝ կծու>զուծո՛ւ, դղում>թութո՛ւմ, սնդուկ>սունդու՛կ, փնթի>փինթի՛ և այլն:

Եթե բարդ բառերի սրկրորդ բաղադրիչը միավանկ բառ է, ապա շեշտը լինում է վերջին վանկում: Այդպես էլ եթե այն սրկվանկ է և վերջընթաց վանկի ծայնավորն է ը, նույնպես շեշտվում է վերջին վանկի ծայնավորը. օրինակ՝ լօսծագ, փարլօս, մուրչումփօն, թըթիւմէր, փառնզո՛ւն, խօնջընթանկ և այլն:

Եթե բարդ բառերի սրկրորդ բաղադրիչը սրկվանկ բառ է, շեշտը լինում է վերջընթաց վանկում. օրինակ՝ էրզուշափի:

Անորոշ դերբայների շեշտը վերջընթաց վանկումն է, սակայն խոնարհման ժամանակ այն անցնում է վերջին վանկը. օրինակ՝ փէրէլ, գարթալ, աղնէլ, աղալ, էշնալ, սիրէլ, փէրիմ ա, գարթամ ա, աղամ ա, սիրիս ա, փէրէ՛յա, գարթա՛յա, խօսած, իչա, աղնիմ, աղնած, գէրթամ, զուղիմ, մաոցա, թարցա և այլն:

Իսկ եթե անորոշ դերբայի վերջընթաց վանկի ծայնավորն է ը, ապա շեշտը լինում է վերջին վանկում: Օրինակ՝ գրել>քըրէլ, ասել>ըսէլ, նստիլ>ըստիլ, լիգել>լըգէլ, հլանդանալ>հըվըդնալ և այլն:

- Անալ բայածանցով կազմված դերբայների բարբառային ձևվերում շեշտը նույնպես լինում է վերջընթաց վանկում. օրինակ հնանալ>հիննալ, լուսանալ>լօսնալ, խլանալ>խոլլնալ, զոդանալ>քօդնալ և այլն: Բազմավանկ բառերում, որտեղ վերջընթաց վան-

կի ծայնավորն է ը, շնշտը լինում է վերջին վանկում. օրինակ՝
բարձրանալ > փանձորնալ, կրճտալ > զըջըրդալ, սրկայնանալ > էր-
զըննալ, կոտորատել > զօղըրդէլ և այլն :

Գրական կամ կրոնական բառերում պահպանվում է գրական
լեզվի շնշտը. օրինակ՝ Աստուածածին > ասվածածին, Զրիստոս >
Զրիստոս, առաքյալ, փամբասանք, ավագան (մկրտուկյան), մարքա-
րէ, ավանագ, բաղարաք և այլն :

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա

5. Գրաբարի ա ծայնավորին մալաթիայի բարբառում սովո-
րաբար համապատասխանում է ա. ինչպես՝

Բառասկզբում՝ ալիւրշալիր, աղաղ, ամպամբ, անուն >
անուն, աչք > աշկ և այլն :

Բառամիջում՝ բան > փան, զարի > քարի, դանակ > թանագ, կա-
տու > զադու, հաց > հաց և այլն :

Բառավերջում գրաբարի ա-ն պահպանվել է բայերի նզակի
թվի հրամայականում և ցուցական դերանուններում՝ աղա > աղա,
գնա > քընա, խաղա > խաղա, սա > սա, նա > նա :

Միավանկ և երկվանկ բառերի բառամիջի ա-ն, իբրև կանոն,
մնում է անփոփոխ. օրինակ՝ աղա > աղալ, բարի > փարի, բարձր >
փանձոր, բերան > փէրան, զագան > քուզան, գերան > քէրան, խարշել >
խաշէլ, ծանր > ծանդըր, ծափ > ծափ, նակատ > ջագաղ, ճերմակ > ջէրմագ,
նշալ > ջընշալ, մարդ > մարթ, մարդակ > մարթագ, ջարդ > չարթ, բար >
բար, բարշել > քաշէլ և այլն :

6. Եռավանկ բառերի երկրորդ վանկի ա ծայնավորը սովորում
է, եթե առաջին և երկրորդ վանկը բաց են և հնչյունափոխվում
է ը-ի, եթե նրանցից որևէ մեկը փակ է (վերջին դեպքում ը-ն
հանդես է գալիս բաղաձայնների կուտակման հետևանքով). օրինակ՝

1) Ազանի > հաքնիլ, առաջեա > առչէվ, առաջի > առչի, արտա-
սուր > ալցունք, բաժանել > փաժնէլ, բաղանիք > փաղնիք, բանալի >
փալլի, բուսանի > փուսնիլ, նշանել > էլլալ, երանեակ > էրնէգ,
թաթախել > փախտէլ, խածանել > Խազնէլ, կանաչի > զանչիլ, կոճակել >

զօժգէլ, հաւանել, հաւանել, հաւասար, հաւատալ, հաւդալ, շալակել, շալագէլ, ուսանիլ, ուսնիլ, պագանել, բարնել, պառակիլ, բառգիլ, պարապել, բարբէլ, սատակել, չաղգիլ, սպանանել, բաննել, տապակել, դարգէլ, տեսանել, դէսնալ, ցամաքիլ, ցամքիլ, փաթալ, փաթել, քառասուն, քառսուն և այլն :

2) Առաջնեակ, առչնէգ, արծակել, արցըգէլ, դատարկել, խորդըգէլ, ծակծակել, հագծըգէլ, կաթկաթիլ, գաթըթիլ, կողանդել, գաղընդէլ, կարկատան, գարգըղան, հարսնացու, հարսոնցու, մակարդել, մագըրթել, մարգարիտ, մարըրիդ, պարտակել, բարդըգէլ, վազկըգէլ, վազկըգէլ, վաստակել, վաստըգէլ և այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Անկանիլ, իյնալ բառի մասին տես §16 և 155, իսկ անցանել, ասնիլ բառի մասին՝ § 155:

Հարսանիք, հարսնիք բառում, չնայած առաջին վանկը իսկ է, ա-ն սղվում է :

7. Երկվանկ գոյականների արկրորդ վանկի ա-ն իսթման ժամանակ սղվում է (կամ փոխվում ը-ի), եթե առաջին վանկի ձայնավորը ա կամ է հնչյուններից որևէ մեկն է. աշխարհ(ք) > աշխարհ - աշխրբի, արագակն > արցագ - արըրգի, դանակ > խնակ - իսնգի, մակառ > ջագադ - ջագդի, շաքաթ > շախաթ - շախթըվա, շալակ > շալագ - շալագող, բերան > փէրան - փէրնի, գերան > քէրան - քէրնի և այլն:

Իսկ եթե երկվանկ բառերի առաջին վանկի ձայնավորը ու կամ ը (գաղտնավանկ) հնչյուններից մեկն է, արկրորդ վանկի ա-ն իսթման ժամանակ մնում է անփոփոխ. օրինակ՝ կրակ > գըրագ - գըրագի, նրագ > ջըրագ - ջըրագի, մկրառ > մըյրառ - մըյրառի - մըյրառ - դէլ, ուրբաթ > ուրիաթ - ուրիաթվա, ուրբագ > ուրբ - ուրբի և այլն:

8. Ան նախաձանցով կազմված բառերի միջին վանկի ա-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ անտառ > խնտառ, անտակ > անտառ, անաստուած > անասված, անարատ > անարադ, անդադար > անխադար, անհամբեր > անհամբէր, անմահական > անմահադան և այլն: Անալի > աննի, անագակ > ամրագ բառերում ա-ն նախաձանցի իմաստը միակնալ է, և այն դադարն է իբրև մատչան ամանց գիտակցվում: Երեմիանակ, քանի որ բարբառում առանձին գործնականում աղ, աղի բառերը, ուստի աղի մեջ այլևս չի գաղաղցվում աղի ձևի

հետ, և անալի > աննի բառը գիտակցվում է իբրև պարզ բառ: նույն

ծանձ էլ իբրև պարզ է ընկալվում ամբողջ բառը, որովհետև նրա արմատը՝ ապակ (ապականել) , ինքնուրույն գործածություն չունի :

9. Բարբառում սովորաբար բարդ բառեր մեկգումբում առանց ա հոդակապի, ինչպես՝ աղաջուր>ախշու, ակնջախուլ>անգախուլ, ժամակոչ>ժանգոչ , լայնասիրտ>լանսիրդ, կրակասեր>զրրագսէր (խմորի տեսակ է) , մոխրաջուր>մախիրչու, նսդասիրտ>նխսիրդ, փագմադ, շօրթան, քարգից (պատկից "հարևան") և այլն:

10. Գրական կամ կրոնական բառերի ա, հոդակապը մնում է անփոփոխ. ինչպես՝ աստուածածին>ասվածածին, երագահան>էլածահան , իւղաքեր>օղաիէր, կնքապա>կընքաբար, համքերատար>համփէրադար, հոգաբարձու>հօքաիարցու, մայրապետ>մայրաբէդ , վարժատուն>վարժողուն, վարժապետ>վարժաբէդ, վերնատուն>վէրնադուն և այլն:

Վարդավառ>վարթրվառ բառում ա-ն չի գիտակցվել որպես հոդակապ: Համախափ գործածության հստականքով այդ բառը մնալով վսլ է բարբառի նարբին այն օրինաչափությանը, ըստ որի ա-ն հնչյունափոխվում է ը-ի, առաջին վանկը փակ լինելու պատճառով (տես § 6) :

11. Ական և աջի վերջածանցներով կազմված բառերի ածանցի ա-ն նույնպես մնում է անփոփոխ. այնպես՝ ամսական>ամսագան, վաճառական>վաճառագան, քերական>քէրագան, նրնքական>իրէքագան, երկուական>էրգուքագան, գիւղացի>քէղացի, դրացի>ըրրացին, լեւացի>լէլացի և այլն, բայց՝ լալական>լալգան, քաղաքացի>քախկըցի:

12. - Անոց վերջածանցով կազմված բառերի ածանցի ա-ն սղվում է . այս ածանցին բարբառում համապատասխանում է նոց-ը: Մրանով կազմված բառերը բաժանվում են երկու խմբի:

ա) Հափական թվականներ՝ մէգնօց, էրգուքնօց, դասնօց, քըսաննօց, հարիրնօց և այլն: -նօց ածանցով մեկգումբում նաև 70, 80, 90-ի շահականները՝ յեթմիշնօց, սաքսաննօց, ուօխտաննօց, շնայած այդ թվականների արմատները փոխառյալ են Բուլբուրանից:

բ) -նօց ածանցով կազմված գոյականներ կամ ածականներ ինչպես՝ հալնօց, սուղնօց "Բանկություն", վառնօց "ստոր",

աղղօղնօց, հէքթօց" դարմանանոց" , շուենօց և այլն :

13.-Անալ-ով վերջավորվող բայերը ըստ բնույթի լինում են բուն բայեր և անվանական բայեր:

Բուն բայերի ածանցի ա-ն կարող է սղվել, հնչյունա-
փոխվել և-ի կամ մնալ անփոփոխ. օրինակ՝ դիմանալ>թիմանալ,
զարմանալ>զարմանալ, իմանալ>իմանալ, հասկանալ>հասկընալ,
մոռանալ>մոռնալ, ուրանալ>ուրանալ և այլն :

Անվանական բայերում, որոնք մեծ մասամբ կազմված են
ածականների արմատներից, սղվում է անալ-ի առաջին վանկի
ա-ն. հնչյունա՝ աղքատանալ>աղկաղնալ, անուշանալ>անուշնալ,
արթնանալ>արթըննալ, աւելանալ>էվէլնալ, քարձրանալ>փանձոր-
նալ, գողանալ>քողնալ, երկայնանալ>էրզըննալ, զգուշանալ>ուս-
կուշնալ, թօթեվանալ>թէթէվնալ, թուլանալ>թօլնալ, լայնանալ>
լաննալ, լուսանալ>լօսնալ, խլանալ>խուլնալ, խորանալ>խօրուն-
նալ, կարծանալ>զարծնալ, կշտանալ>զուշտնալ, հաստանալ>հաս-
տընալ, հոռանալ>հարռնալ, հիւանդանալ>հըվըղնալ, հնալ>
հիննալ, մեծանալ>մազնալ, մթանալ>մութնալ, շատանալ>շադ-
նալ, ուժովանալ>ուժօքնալ, սւանալ>սիվնալ, սղանալ>սուղնալ,
տաքանալ>դաքնալ, ցածանալ>ցազնալ, ցրտանալ>ցուրդնալ, բշ-
նալ>բիշնալ և այլն: Բացառություն է ծնրանալ>ծէրանալ բառը:

14.-Անոր վերջածանցով կազմված բարբառային բառերում
ածանցի ա-ն սղվում է, իսկ գրական բառերում այն մնում է ան-
փոփոխ. այսպես՝

Բարբառային բառեր - եկաւոր>էզվօր, թագաւոր>թաքվէր
"հատուկ անուն", ծոցաւոր>ծօսվոր "հղի", մանաւաւոր>ջաշ-
վօր, շատավոր>շաղվօր, պակասաւոր>քազասվօր "օրապակաս" :

Գրական բառեր - գլխաւոր>քըլիւավէր, թագաւոր>թաքավէր,
կնդծաւոր>գեղծավօր, հարկաւոր>հարգավօր ("արտաքնոց"), մեղա-
ւոր>մեղավօր, ուխտաւոր>ուխտավօր, փառաւոր>փառավօր:

15. Երկվանկ բառերի միջին վանկի ա-ն մի խումբ բառերում
մնում է անփոփոխ: Դրանք մեծ մասամբ գրական-կրօնական բառեր
են, մի քանիսն էլ՝ ընդհանուր հայերեն բառեր. օրինակ՝ ազա-
ւածել>ազադէլ, ապաշխարանք>աքաշխարանք, ապառաժ>աքառաժ, առա-
քեալ>առաքյալ, Առօրէլ, աւագան>ավագան, բամբասանք>փամբասանք,
ընտանիք>ընդանիք, խայտառակ>խայդառազ, խոստովանիլ>խօստօ-

վանիլ, կիւրակէ՝գիրագի, հակառակ՝հագառագ, համբարծում՝
համփարցում, հրամայել՝հըրամէլ, մարգարէ՝մարքարէ, միիթա-
րանք՝մըիթարանք, մուրացկան՝մուրասկան, յաւանակ՝ափանագ, յէ-
շատակ՝իշադագ, նահատակ՝նահդագ, նաադագ, նաւակատիք՝նավա-
զադիք, պահպանիչ՝բահբանիչ, պատարագ՝բադարաք, սատանայ՝սա-
դանա, սրբազան՝սուրփազան, վարագոյր՝վարաքուր, տապանակ՝
դաքանագ և այլն :

16. -Ա ծայնավորը կրել է նաև հետևյալ մասնակի հնչյու-
նափոխութիւնները.

Ա>օ. Բ-ից առաջ մի քանի բառերում ա-ն բմայնանում է
և հնչվում ինչպես առաջին շարքի ստորին բարձրացման ծայնա-
վոր օ. դրանք են՝ արիւն>օրին (օրինդէր, օրինթաթի, օրի-
նօդ), հարիւր>հօրիր, թարթիչ>թօրթիչ, թարթօլ>թօրթէլ, շարել>
շօրէլ, սարբինայ>սօրփէնի, ինչպես նաև թափել>թօփէլ և շա-
պիկ>շօքիք բառերում:

Ա>է. առնել>էնէլ, աւել>էվէլ, աւերել>էվրէլ, յարդ>
հէրթ, յարդանոց>հէրթնօց, պահել>բէյիլ, արծաթ>էրծաթ: Վեր-
ջին բառը կազմվել է երկաթ>էրզաթ բառի նմանակությամբ: Գերեզ-
ման>քէրէզմէր բառում գործում է ծայնավորների լիակատար ներ-
դաշնակության օրենքը:

Ա>ը. ասել>ըսէլ, կարել>կարենալ>գըրնալ, կողանդ>գա-
ղընդ, տարգալ>թըբալ, տանեցիք>ղընէցիք, լակել>լըգէլ:

Ա>օ. անարգել>անօրքէլ, թառամիլ>թօռմիլ: Այս բառերը
հավանաբար անցել են խարբեռողի բարբառից, որտեղ ա>օ հնչյու-
նափոխութիւնն Օրինաչափ է ¹: Զրոյրդան>չըրթօն բառում վեր-
ջին վանկի ա-ն բառամիջի ո>օ -ի առնմանությամբ դարձել
է օ, ապա ըստ § 39-ի սղվել է բառամիջի ո>օ-ն ՝ ջրորդան>
* չըրթօրթօն>չըրթօն: Նույն ձևով էլ կամար և առտիկ բաղադրիչ-
ներից կազմված գօմըուլօղիգ "ծալապատիկ նստած" բառում առա-
ջին վանկի ա-ն դարձել է օ, իսկ երկրորդ վանկի ա-ն՝ սըղ-
վել: Զարմաղ>ցօրմաղ բառում ա>օ -ն առաջացել է առաջին բա-
ղադրիչի մոդովրուական ստուգաբանության ընկալմամբ՝ իբրև ցո-
1. Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատոր 1, Երևան, 1926, էջ
637:

րենի մաղ:

Ա>ի անկանիլ >իյնալ բառում սղվել է բառամիջի ա-ն, բառասկզբի ա-ն վերջին վանկի ի-ի նմանությամբ դարձել է ի, նկ հնչյունախումբը ըստ § 92-ի դարձնւ է յ, ապա փոխվել է լծորդությունը՝ անկանիլ>ինկնիլ>իյնիլ>իյնալ :

Ծ

17. Բառասկզբի ե-ն միավանկ և բազմավանկ բառերում հիմնականում հնչվում է ինչպես է օ այսպես՝ ելանել>էլլալ, եպիսկոպոս>էրիսկօքօս, երազ>էլաժ, երանեակ>երնէգ, երդնուլ>էրթըմնալ, երդումն>էրթում, երես>էրէս, երւիլ>էրվալ, երէկ>էրէգ, երթալ>էրթալ, երկաթ>էրգաթ, երկայն>էրգան, երկայնք>էրգանք, երկինք>էրգինք, երկու>էրգու, Երուսաղէմ>էրսաղըմ, եփել>էփէլ և այլն:

Գրական բառերում ե-ն հնչվում է ինչպես յէ օ երգ>յէրք, երջանիկ>յէրչանիգ:

18. Բառասկզբի ե-ն կրել է նաև հետևյալ մասնակի հնչյունափոխությունները. երեք>իրէք և երեքշաբթի>իրէքշափթի բառերում առաջին վանկի ե-ն երկրորդ վանկի ե-ի տարնմանությամբ հնչյունափոխվել է ի-ի:

Երիցակին>իրիսգին և Եղունգն>ուղունգ բառերում երկրորդ վանկի ծայնավորների առնմանությամբ բառասկզբի ե-ն համապատասխանաբար հնչյունափոխվել է ի-ի և ու-ի:

Երեսուն>առսուն բառի ե>ա հնչյունափոխությունը բացատրվում է քառասուն>քառսուն բառի նմանակությամբ:

Եղբայր>ախփար բառում ե-ի դիմաց բարբառն ունի ա :

ե>ա հնչյունափոխությունը հատուկ է կը մյուղի շատ բարբառների : Դեռևս զրաբարում բառասկզբի ղ-ից առաջ բառերը կարող էին ստանալ ե կամ ա հենարանը. ինչպես՝ եղագ // աղագ, եղինճի աղինճ : Եղբայր>ախփար ձևն ըստ Հ. Աճառյանի կազմվել է հին հայերենի աղբայր երկրորդական ձևից:

Երեկոյ>ուղունգուն բառում ն-ի հավելմամբ ոյ-ը երկ- 1. Հ. Աճառյան, Քննություն Գոլստհայ բարբառի, Երևան, պետ. համալսարանի հրատարակչություն, 1941, էջ 35: .

բարբառային դիրք գրավելով՝ հնչյունափոխվել է ը-ի այս վերջինի առնմանությամբ էլ բառասկզբի և բառամիջի ե ձայնավորները դարձել են ը։ Երբ>յափ բառում ե-ի դիմաց բարբառը ունի յա (ը-ն ընկնում է)։ Բառասկզբի ե-ն հնչյունափոխվել է ի-ի հետևյալ օժանդակ բայերում՝ եմ>իմ, ես>իս, եմք>ինք։

19. Միավանկ և երկվանկ բառերում բառամիջի ե-ն սովորաբար հնչվում է որպես է (բացառությամբ ը-ից առաջ գտնված դիրքի)․ այսպես՝ արեթ>ափէթ, ածել>աժէլ, աներ>անէր, բերան>փէրան, բերել>փէրէլ, գետին>քէղին, գերան>քէրան, գիշեր>քըշէր, դեղ>թէղ, "քթախոտ", երես>էրէս, երեք>իրէք, խեղճ>խէղճ, խենթ>խէնթ, ծած>ժէժ, ծեղ>ժէղ, ծեր>ժէր, կարել>գարէլ, հեռ>հէղ, ձգ>ցէգ, ձեր>ցէր, ծեղք>ջէիկ, մեղք>մէիկ, նեղ>նէղ, չեչ>չէչ, վեր>վէր, վեց>վէց, տեղի>ղէղ, փետուր>թէփուր, քերեք>քէրէլ "քորեչ" և այլն։

Սակայն մի քանի միավանկ բառերի բառամիջի ե-ն հնչյունափոխվել է ի-ի․ այդ բառերն են՝ խելք>իիլք, մեր>միր, մեք>միրք, սեւալ>սեվ>սիվ, սեր>սիր "սերուցք", թեփ>թիփ, խեր>իիր, "մի տեսակ մածուն"։ Այս բառերի ածանցման կամ բառաբարդման ժամանակ ե-ի հնչյունափոխությունը պահպանվում է՝ անխիլք, սիվցիթ, սիվքիր, թիփօղ, թիփօղիլ և այլն։

20. Ռ-ից առաջ ե-ն հնչյունափոխվում է ա-ի․ ինչպես՝ բռն>փառ, եռ>առ (առ է " եռալուն մոտ է", այստեղից էլ առչօր՝ " եռացրած ջուր "), կշեռք>շառք, հեռի>հարու, լիսեռն>լըսառ, ձեռք>ցառք, ձմեռն>ցըմար, մեռեալ>մառէլ, մեռոն>մառօն, մեռանիլ>մառնիլ, սիսեռն>սըսառ, քեռի>քառի ։

21. Բազմավանկ բառերի երկրորդ վանկի ե-ն սովորում կամ հնչյունափոխվում է ը-ի, իսկ՝ առաջին և վերջին վանկերում հնչվում է ինչպես է․ օրինակ՝ ածելել>ազլէլ, ածըլէլ, ածելի, ածըլի, ազլի, արեգակն>արքազ, աւերել>էվրէլ, աւելել>ավլէլ, բարեկենդան>փարգէնթան, երեսուն>առսուն, կարել>կարէնալ>զըրնալ, հայելիք>հայլիք, վայելել>վայլէլ, վայելումն>վայլում, վախենալ>վախնալ, ի վերայ>վըրա և այլն։

Սակայն բազմավանկ բարդ, ածանցավոր գրական բառերի երկրորդ վանկի ե-ն հնչվում է է․ այսպես՝ արեղայ>ափէղա, ազա-

նելիք>հաքնելիք, աներես>անէրէս, աներծագ>անէրցաք, աւելա-
նալ>էվէլնալ, աւետիք>ավէդիս, բարեկամ>փարէզամ, բարեկենդան>
փարգէնթան, բարերար>փարէրար, երեքշաբթի>իրէքշափթի, խաբե-
քայ>խափէփա, համբերել>համփէրէլ, համեստել>համդէսէլ, հոգե-
ղարծ>հօքէթարց, հոկտեմբեր>հօգդէմփէր, նոյեմբեր>նօյէմփէր,
ջրհեղեղ>ջըրէդէդ, սեպտեմբեր>սէգդէմփէր և այլն:

22. Բառամիջի եւ կրել է նաև հետևյալ մասնակի փոփո-
խութիւնները.

ե>ա. մեծ>մանծ, մեծանալ>մազնալ.

- -

ե>ի. աւել>ավիլ (առ ավել բառից տարբերվելու համար)
աւետարան>ավիդարան, հրեշտակ>հըրիշտագ :

ե>ը ` սեղմել>սըխմէլ.

ե>օ՝ աղեղն>աղօղ, ցերեկ>ցօրէգ, չորեքշաբթի>չօրօք -
շափթի: Վերջին բառի ե>օ-ն բացատրվում է ը>օ-ի առաջընթաց
առնմանութեամբ: Ցօրէգ բառը կազմվել է օր բառի նմանակու-
թեամբ :

է

23. Գրաբարյան է-ն բարբառում բոլոր դեպքերում հիմնա-
կանում հնչվում է ինչպես է.

Բառասկզբի միակ օրինակը էշ>էշ բառն է: Գրաբարում և
աղդի հայերենում իջանել բառի արմատը՝ էջ, պահպանվում է
բարդութիւնների մեջ և հրամայական եղանակի եզակիում. օ-
րիծակ՝ վայրէջք, ելւէջ, էջ: Ենշտակորույս լինելով, արմա-
տի է-ն հնչյունափոխվում է ի-ի՝ իջանել, իջուցանել, իջեց-
նել, իջնել և այլն: Մալաթիայի բարբառում արմատի է-ն անփո-
փոխ է մնում նաև անորոշ դերբայում՝ իջանել>էշնալ, իջու-
ցանել>էշցունէլ: Միայն այդ բառի անցյալի հիմքից կազմված
ծանրում, շնշտակորույս լինելով, է-ն հնչյունափոխվում է
ի-ի՝ իչա, իչար, իչավ, իչիր և այլն: Նույնն ենք նկատում
նաև տիրացու>դէրացու բարդ բառի առաջին բաղադրիչում՝ տէր-
դէր :

Բառամիջում՝ ալէլուիա>ալէլույա, ամէն>ամմէն, ան-
գէտ>անքէդ, անէծք>անէսկ, առէջ>առէշ, բզէգ>փրզէգ, գէշ>
քէշ, դէմ>թէմ (թէմ թիմաց) հանդէպ (ք)>հանդէպկ " դիպված,

առաջար " , մէջ>մէջ, մէջք>մէջկ, շէն>շէն, պէս>բէս, սա-
պէս>սաբէս (սաբէս -նաբէս" արտահայտութիւն մեջ, որ նշանա-
կում է „այսպես- այնպէս") , պէտք>բէտկ, սէր>սէր, տէր>դէր,
բէն>բէն, օրէնք>օրէնք:

Բարբառում բառաւորները է-ով հետևյալ բառերը կան՝

Թէ, մարգարէ և կիւրակէ : Առաջին բառում է-ն մնացել է ան-
փոփոխ: Այս բառը սովորաբար գործածվում է ժխտական չ ածան-
ցով կազմված բարդութիւնների մեջ՝ չէթէ, չէնէ Թէ: Կիւրակէ>
գիրագի բառում էջի հնչյունափոխութիւնը կատարվել է իւ-ի
փոփոխութիւնից հետո՝ առաջընթաց առնամանությամբ:

Բառաւորներում անփոփոխ է մնում նաև զրաբարի բացառա-
կան հոլովի է-ն՝ շուգայէն, փէրնէն, ջագդէն և այլն:

24. Մի քանի բառերում բառամիջի է-ն հնչյունափոխ -
Ան - նախածանցից հետո՝ անհամահամ, անհամբարանհամփէր, անհաւատ(ք)անհավատկ, անհոգանհօք և այլն :

145. Երկու ծայնավորների միջև գտնվող բառամիջի հ-ն արագախոսության ժամանակ արտասանվում է շատ քույլ: Նույնն է տեղի ունենում բառակապակցությունների մեջ, երբ հ-ն ընկնում է երկու ծայնավորների միջին դիրքը. այսպես՝ նահանջ նաանջ, նահատակ նառդագ, քնահատքընադ, շնորհաւոր շընաւափօր և այլն. կամ՝ չի հասնում աչքասնիր ա, կը հավատամ գավդամ, ինձ համարչընծի ըմար, քեզ համարքըզի ըմար և այլն: Սակայն երբ խոսողը ճիգ է թափում իր միտքն ավելի պարզ արտահայտել, ապա այդ դիրքի հ-ն լսվում է որոշակի: Անհարժեշտ է նշել, որ գրաբարին նախորդող շրջանում իսկ հ-ն արտասանվում էր թույլ: Այդ է պատճառը, որ մի քանի բառեր ավանդվել են և հ-ով, և առանց հ-ի. օրինակ՝ ջրհոր դան/ ջրորդան, քնահա//քնառ, փայտահա//փայտատ և այլն:

146. Եթե բառամիջում ծայնավորից հետո հ-ին հաջորդում է ի ծայնավորը, ապա սղվում է հ-ն, և բառն ստանում է յ ծայնակապը: Սույնը տեղի է ունենում նաև ուհի վերջածանցով կազմված՝ իգական սեռի անուններ ցույց տվող բառերում, ինչպես՝ պահել թէյի, դժգոհի թըշկոյի, դահիճ թայի, թագուհի թաքույի, Արմենուհի Արմէնույի, Սրբուհի Սըրփույի, Հայկուհի Հայգույի և այլն: Արտասանական դժվարությունների պատճառով ուհի վերջածանցով կազմված իգական հատուկ անուններում կրճատվում է ածանցի ի յի մասնիկը. այսպես՝ թագուհի թաքուգ, Հայկուհի Հայգուգ, Սրբուհի Սըրփիգ, Զարուհի Զարուգ և այլն:

147. Երբ հ-ն հանդես է գալիս որպես վանկափակ հնչյուն, իսկ հաջորդ վանկն էլ սկսվում է բաղաձայնով, ապա հ-ն վընում է անխոփոխ. այսպես՝ մահուան ժահւան, բովհրցլքօրհէլ, ազահանալ յաքահնալ, պահտիլ յահլըդիլ և այլն:

148. Բառավերջում ը-ից առաջ կամ ը-ից հետո հ-ն ընկնում է, ինչպես՝ աշխարհք աշխարք, խոնարհ խօնար, խորհուրդ, խօրուրդ, շնորհք շընօրք, պահք յաք և այլն:

149. Բառավերջում հ-ն ծայնավորներից (հատկապես ա-ից) հետո հնչվում է շատ թույլ. ինչպես՝ ազահաքա(հ), բահիա(հ), դժգոհթըշկո(յ), ջահշա(հ), մահմա(հ), շահշա(հ) և այլն:

150. Բարդ բառերի երկրորդ բաղադրիչի սկզբի հ-ն ընկնում է. ինչպես՝ հրահրել, հրահրել, հովհրել, հովհրել, ջրհնդել, ջրհնդել, իսկ պատահանքադփան, շեղհողշըռփեղ բառերում հ-ի դիմաց հնչվում է փ, ջրհորշըռփեղ բառում՝ վ:

151. Օրհնեալ բառում և նրա ածանցյալ ձևերում հ-ի դիմաց բարբառն ունի շ՝ օրշնել, օրշնյալ, օրշնանք և այլն:

Ձ Ա Յ Ն Ո Ր Դ Ն Ն Ր

Լ

152. Առեն դիրքերում լ ծայնորդը համարյա մնում է անփոփոխ. ինչպես՝ լալլալ, լակնլլըգել, լայնլան, լեռնլառ, լեզուլլեզու, լիզնլլըգել, լոյսլուս, լուսնալվրալ, ալիւր, ալիւր, ածնլիւր, լակլայրիադլա, ելանելլալ, իլիկլիլիկ, խնլըլիլ, ծնլլըլիլ, շալակշալազ, սալորսալուր, քայլնլըլլել, ալլալ, էլ, առալլելլել, առալլալ, տարալլթըրալ, խալլալ, խուլլալ, ծիլլծիլ, ոջիլլոջիլ և այլն:

Միայն ըոյլըլիւրը "համաստեղութուն" բառում լ ծայնորդի փոխարեն բարբառն ունի ր:

152. Գրաբարի անորոշ դերբայի լ-ն մնում է անփոփոխ, իսկ անցյալ դերբայի լ-ի դիմաց բարբառը վաղակատար դերբայում ունի ր. այսպես՝ գրելլըրել, խօսիլլխօսիլ, խաղալլխաղալ, մոռանալլմառնալ, գրեալլըրիլ, խօսեցեալլխօսիլ, խաղացեալլխաղցիլ, մոռացեալլմոռցիլ և այլն:

Ն

154. ն ծայնորդը բառասկզբում, ծայնավորների միջև, մի բաղաձայնի մոտ և բառավերջում մնում է անփոփոխ. այսպես՝ նամակշնամազ, նեղշնեղ, նորշնոր, նուռնշնուռ, նստիլլնստիլ և այլն, անունշանուն, խոնարհիւնար, կանաչշգանանչ, մանելլմանել և այլն: Բռնելլիլ, գոբանշլգոնքաշ, հինգշհինգ, ճանկշջանգ, միլնակշմիշնեգ, մթնալլմուլթնալ, մեռանիլլմեռնիլ և այլն, տունշդուն, շունշշուն, երկայնշերգան և այլն:

ն ծայնորդը լ-ի առնմանությամբ դարձել է լ՝ նմանըլման բա-
ռում և նրանից կազմված ձևերում՝ ըլմանիլ, ըլմանցունել :

155. Չայնավորից հետո և արկու բաղաձայնից առաջ բառ-
միջի ն-ն սղվում է: ն-ն այդ դիրքում կարող է գտնվել նաև
ծայնավորնարի սղման կամ բաղաձայնների հավելման հետևանքով.
օրինակ՝ անկանիլ>անկնիլ>իյնալ, անձրև>հարգեվ, անցանել>աս-
նիլ, ընտրել>ըյրել, ընտրուք>ըյրուք, թնձկալ>թըզգալ, ման-
րնլ>մանդրել>մայրել, այստեղից էլ՝ մարյէ մուրյէ "մանր-մու-
նըր", հիւանդանալ>հըվընդնալ>հըվըդնալ, ցնկնիլ>ցըյնիլ և
այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.- Եթե նույն դիրքի բաղաձայններից մեկը
նէր հոգնակնրածի ն բաղադրիչն է, ապա այս հնչյունափոխություն-
ներ տեղի չի ունենում. ինչպես՝ ձունունդնէր, գանանչնէր, հը-
վանդնէր և այլն :

156. Շրթնային ը և մ հնչյուններից առաջ ն-ն հնչյունա-
փոխվում է մ-ի. այսպես օրինակ՝ այնպէս>ամբէս, անբախտ>ամ-
բախտ, անմահ>ամահ, արթնանալ>արթըմնալ բառում երկրորդ ն-ի
տարնմանությունը առաջինը դարձել է մ: Մրջիւն>մուրչում բառում
նլմ հնչյունափոխությունը մ-ի առնմանության արդյունք է:

157. նլ հնչյունախումբը դառնում է նն, իսկ լն-ն՝ լլ.
այսպես՝ նլ>նն՝ անալի>անլի>աննի, լն>լլ՝ կլանել>զըլնել>
զըլլել, շլնի>շըլլի, ելանել>էլնէլ>էլլալ, լինիլ>ըլլիլ:

Խլինք և բանալի բառերում դրափոխության հետևանքով լ և ն
հնչյունները փոխել են տեղերը, ուստի առաջին բառում ըս-
տացվել է նլ, իսկ բանալի բառում լն հնչյունախմբերը, որոնք
օրինաչափորեն դարձել են նն և լլ՝ խլինք>խըննիք և բանալի>
փալլի:

Ածանցյալ բառերում, երբ ն և լ հնչյունները հանդիպում
են իրար, այս օր-ները չի գործում արմատի անկախ գիտակցման
անհրաժեշտությամբ. այսպես՝ թուլանալ>թօլնալ, խլանալ>խուլնալ,
անլուայլանվըլա, անլեզու>անլէզու և այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.- Անալի>աննի բառը կազմությամբ ածանց-
յալ է, բայց բանի որ այստեղ ալի արմատի իմաստը մթազնվել է,
և բարբառում կա աղի ձևը, ուստի այն չի գիտակցվում որպես ա-
ծանցյալ (տ՝ն 5 8) :

158. Բառավերջի գրաբարյան ն վերջնահանգ հնչյունը բար-
բառում ընկնում է. աշտեղ տալիս ենք բոլոր օրինակները՝
ագբնշասպ, ակնշագ, աղեղնշաղօղ, ամառնշամար, ասեղնշասսէղ,
արեգակնշարքագ, բեռնշփառ, դուռնշթօռ, եղունգնշուղունգ, եր-
դումնշէրթում, թագումնշթաղում, թոռնշթօռ, լեռնշլառ, լիսե-
ռընշլըսառ, ծուկնշծուկնգ, կաթնշգաթ, կամնշգամ, կուռնշգուռ,
կնճիռնշգըռինջ, հարսնշհարս, հիմնշհիմ, ձուկնշցուկգ, ծմեռնշ
ցըմար, մասնշմաս, մատնշմաղ, մուկնշմուկգ, նուռնշնուռ, ոսպնշ
օսպ, պմեղնշբըլէղ, սիսեռնշսըսառ, վայելումնշվայլում: Եօթն
յօթը, ինն իննը, տասնշդասը, ինքնշհինքը բառերում ն-ի փո-
խարնն բարբառն ունի ը :

159. Չայնավորով վերջացող բառերում ն-ն հանդես է գա-
լիս որպես որոշյալ հոդ՝ մաղնին, քինին, բարին և այլն : Մի
քանի բառերում հավելյալ ն-ն (տե՛ս § 172) դադարել է իբրև հոդ
գիտակցվելուց և ընկալվում է որպես արմատական հնչյուն: Այդ
բառերն են՝ դրացիշթըրացին, աղջիկշախչին: Որոշյալ առման
դեպքում սրանք ստանում են ը հոդը՝ թըրացինը, ախչինը:

Մ

160. Բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. ինչպես բառ-
սկզբում՝ մագղմագ, մարդշմարթ, մայրշմար, մեծշմանծ, միսշմիս,
մուխշմուխ, մուրշմուր և այլն :

Բառամիջում՝ ամանշաման, ամառնշամար, ամիսշամիս, ա-
մօթշամօթ, չամիչշչամիչ, ցամաքշցամաք և այլն :

Բառավելջում՝ ժամշժամ, ծոմշծոմ, համշհամ, հումշհում
և այլն :

Միայն ժամակոչշժանգօչ բառում մ-ի դիմաց բարբառն ունի
ն:

Բ

161. Բարբառը բ-ով սկսվող բառ չունի: Բառամիջում բ-ն
շատ անկայուն հնչյուն է: Որոշ բառերում բ-ն ընկնում է, ո-
րոշ բառերում էլ՝ հնչյունափոխվում է ռ-ի, կամ տատանվում
բ-ի և ռ-ի միջև. այսպես՝ ընկնում է շ և ծ բաղաձայններից
առաջ՝ արժանշարժան, արծևլշարծէլ, կարծշգած, բարշելշբաշէլ,
խարշելշխաշէլ (թերխարշթէրխաշ), շարծբշժածբ, իսկ նույն

դիրքում գտնվող վարժապետ>վարժաբէդ, վարժատուն>վարժադուն
և վարժուիլ>վարժվիլ գրական բառերում ը-ն մնում է անփոփոխ:
ը-ն ընկնում է նաև մի շարք այլ բառերում, որոնց մասին
ենք § 173:

Ներքոհիշյալ բառերում ը-ն հնչյունափոխվում է ը-ի կամ
տատանվում այդ երկու հնչյունների միջև՝ ծարավիլ>ծավընալ,
կրծիլ>զրոծել, ջուր>ջօռ (ջօր), երեկոյ>ուրուհուն, ուրուն-
գուն, ըորնգուն, երեսուն>առսուն:

162. Բառամիջում ը-ի հնչյունափոխության մասնավոր դեպ-
քսը մենք ը-ը՝ երազելած: Օրօրան>օրան և Օրօրել>օրել բառե-
րում ամփոփման հատանքով սղվել է օր վանկը:

163. Բառավերջում ը-ն մնում է անփոփոխ. այսպես՝ գի-
շար>քըշէր, հազար>հազար, մոխիր>մախիր, նոր>նօր, փոր>փօր
և այլն:

Բ

164. Բարբառում ը-ով սկսվող բառ չկա: Բ-ով սկսվող օ-
տար փոխառություններն անգամ բառասկզբում ստանում են ը կամ
ու հմնարանը. այսպես՝ ռազի>ըռազի, ոուս>ուրուս, ոուպ>ու-
ուր, ռեհան>ըռեհան և այլն:

165. Բառամիջում և բառավերջում ը-ն հիմնականում մնում
է անփոփոխ. ինչպես առաջ>առաչ, առնուլ>առնէլ, առու>առվու,
ծառայ>ծառա, բեռն>փառ, դուռն>թօռ, ծառ>ցառը, սիսեռն>սը-
սառ և այլն:

166. Մալաթիայի բարբառում առհասարակ ը և ը հնչյունները
գտնվում են արտասանական խառը վիճակում: Ինչպես որոշ բառե-
րում ը-ի փոխարեն հնչվում է ը այնպես էլ շատ բառերում ը-ի
փոխարեն լսվում է մերթ ը, մերթ ը. այսպես՝ ախող>ախօր, ծը-
մեռն>ցըմառ և ցըմար, ամառն>ամառ և ամար, առաջին>առչին և
արչին, քոռի>քմոռի և քմրի, ակոռայ>առգա և արգա և այլն:

Վարդավառ>վարվրվար և ծաղարդար>զարզարբար բառերում
ը-ի փոխարեն հնչվում է ը՝ առաջին բառում բառամիջի ը-ի, իսկ
երկրորդում՝ բառավերջի ը-ի առնմանությամբ:

Յ

167. Յ ծայնորդը բառասկզբում ընկնում է կամ անթարկվե-
լով հայերենի պատմական ընդհանուր օրինաչափությանը՝ արտա-
սանվում է որպես կոկորդային խուլ շփական յ. այսպես՝

ա) Յ-ն ընկնում է՝ յաջող>աչող, յատակ>ադագ, Յարու-
նիւն>Արբին, Յալոր>Ազօր, յաւանակ>ափանագ, յիշատակ>իշադագ,
յիշուլ>իշէլ, "նմանութիւն մսկին", յիսուն>իցծուն, յղի>ըղի,
յոլոսլ>իբօրօր, Յովակիմ>Օվագիմ, Յուդա>ուժա, յստակ>ըստագ,
յօնք>ունք :

բ) Յ-ն հնչյունափոխվում է հ-ի՝ յանգարծ>հանգարծ, յան-
ցաւոր>հանցաւօր, յարգ>հարք, յարդ>հերթ(հէրթնօց), յարու-
նիւն>հարոււրուն (կրօնական իմաստով), յուլիս>հուլիս, յու-
նիս>հունիս, յունուար>հունվար, յօժար>հօժար:

168. Բառամիջում յ-ն մնում է անփոփոխ, ինչպէս՝ հայելի>
հայլիք, հայիլ>հայիլ, մայիս>մայիս, խնայ>լքընայէլ, վա-
յնլսլ>վայլէլ, ծառայել>ծառայէլ և այլն : Բառամիջում յ-ն
ծայնակապի դեր է կատարում՝ էյի, էյիր, էյաք, էյիք, փէրի-
յա, չէյի: Դժգոհիլ>ըըշկօյիլ, հսկուհի>հսկուլի, պահել>բէ-
յիլ և այլն :

169. Բառավերջի յ-ն միաժանկ բառերում մնում է անփո-
փոխ. այդ դիրքում յ-ն հանդես է գալիս հայ>հայ բառում և
ծայնարկութիւնների մեջ՝ օյ, վայ, հայ, ույ, հէյ և այլն:

Բազմաժանկ բառերի բառավերջի յ ծայնորդը, որը հանդես
էգալիս ա ծայնավորից հետո, ընկնում է. այսպէս՝ ազուգայ>
հաքուքա, ակոայ>արգա, ամիրայ>ամիրա, ապրայ>արքա, բակլայ>
փաղլա, ծառայ>ծառա, մնղայ>մէղա, չուխայ>չուխա, սատանայ>
սադանա, վկայ>վրգա, տղայ>դըղա :

Ի (ւ)

170. Այն բառերում, որտեղ գրաբարյան ւ ծայնորդը հան-
դես է գալիս իբրև ոչ երկրորդաօրի տարր, այսինքն գտնվում է
ծայնավորների միջև կամ բառավերջում՝ ծայնավորներից հետո,
արտասանվում է ինչպէս շրթնատամնային ծայնեղ շփական վ. այս-
պէս՝ աւագչավաք, աւետարան>ավիդարան, (առ) աւել>էվէլ, աւել>
ավիլ, աւելանալ>էվէլնալ, գաւազան>քավազան, գաւակ>գավագ,
խաւար>խավար, կաւիմ>գավիջ, հաւանգ>հաւան, հաւանել>հավնէլ,
հաւատալ>հավդալ, հիւանդ>հրվանդ, հաւասար>հավսար, նրելիլ>
էրվալ և այլն . ընաւ>իընավ, իրաւ>իրավ, ծարաւ>ծարավ, կաւ>
գավ, կաքաւ>գաքավ, հաւ>հավ, ցաւ>ցավ, ազնիւ>ազնիվ, արծիւ>
արծիվ, կոիւլ>զրոիվ, ծիւլ>ջիվ, պատիւ>բաղիվ, անծրնւ>հարգէվ,

ծածել>էդէվ, ձծել>ցէվ և այլն :

Պատու>բառաբ և թաւալիլ>թաքլիլ բառերում ւ-ի փոխարեն ունենք ը՝ առաջին բառում բառասկզբի պ>ը-ի ազդեցութեամբ, իսկ երկրորդում՝ թաւալիլ և տապալիլ իմաստով իրար մոտ բառերից փոխադարձ ներգործութեամբ կազմվել է թաքլէլ բառը, որն արտահայտում է այդ երկու բառերի իմաստները:

ՀնՁՅՈՒՆԱՓՈԽԱՆԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

171. Բացի վերը նշված հնչյունափոխական օրինաչափու - թյուններից, բարբառի հնչյունները կրում են նաև այլևայլ փոփոխություններ, որոնք արդյունք են կամ հնչյունների փոխազդեցության, կամ այլ բարբառների (նաև լեզուների) հնչյուն - նական օրինաչափությունների ազդեցության: Եվ վերջապես բառն ինքն էլ խոսքի մեջ կարող է զանազան փոփոխություններ կրել, որոնք մասամբ բացատրվում են արտասանության թեթևացման ձգգոմամբ: Այդպիսի փոփոխությունների շարքին են դասվում հնչյունների հավելումը, անկումը, դրափոխությունը, հնչյունների կործանումը, ամփոփումը, կրկնությունը և այլն :

1. ՀնՁՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

172. Բառի մեջ այս կամ այն պատճառներով հնչյունների ավելացումը կոչվում է հավելում: Հավելումն ի հայտ է գալիս, երբ բառի բարբառային ձևը համեմատում ենք զրաբարից ավանդված ձևի հետ:

ա) Հ-ի հավելում բառասկզբում՝ ածել>հածէլ, արածել>հարծէլ, ածան>հածան, ազանիլ>հաքնիլ, ազուգայ>հաքուքա, անձըւ>հարգէվ, ուր>հօր, ում>հօմ, իւրեան>հըռէն, ընտրել>հըյրէլ, կնքապապ>հընքաբաբ, ինքն>հինքը:

բ) Դ-ի հավելում՝ մեկ ու կես վանկ ունեցող մի բանի բառերի նր հնչյունախմբում. ծանր>ծանդըր, մանր>մանդըր:

Համարել>համբըրէլ բառում մը հնչյունախմբում մ շրթնային հնչյունի ազդեցութեամբ ավելացել է ք շրթնայինը:

գ) Ն-ի հավելում՝

1. Աղջիկ(կ)>ախչին, դրացի>թըրացին և երսկոյ>ուռուկուկ բառերում նախապես որպես որոշյալ հոդ ավելացրած ն-ն զիտակ-

ցըվել է իբրև արմատական հնչյուն:

2. Առհասարակ պայթաշփականներից և պայթականներից առաջ նկատվում է ն բաղաձայնի հավելման միտում. այսպես՝ ծ>ձ-ից առաջ՝ մեծամանձ, բարձրփանձըր, չ-ից կամ ջ>չ-ից առաջ՝ միջեղմինչէլ, ճչեղջընչէլ, կանաչգանանչ :

թ-ից առաջ՝ քիթքինթ.

ք-ից առաջ՝ արտասուքարցունք, փողորակփօրդանք, փըշուրքփուրշունք, բաժակփաժանք և այլն :

դ) վ-ի հավելում՝ առուլառվու, ուղարկելգառվէլ, սաւորչսավլօր, պատրիարքչբաղվիրարք:

ե) ւ-ի հավելում՝ օրհնելչօրշնէլ.

զ) լ-ի հավելում՝ շատրվանչշաւղըվարան :

2. ՀնչՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

173. " Չայնավորների փոփոխությունները" բաժնում քըննարկվել են ձայնավորների անկման օրինաչափությունները:

Ի մի բերելով բաղաձայնների անկման դեպքերը՝ կունենանք հետևյալ պատկերը .

Բաղաձայնների անկում բառակզբում:

Ս՝ սպանանելքաննէլ, սկսուրչգէսուր, սկեսրայրչգէսրնր.

Հ՝ համարչըմար, կ՝ կնքապապչրնքբբբ.

Յ՝ յատակչաղազ և այլն (տմս § 167):

Բառամիջում՝

ա՝ պաշտպանչբաշպան, աստուածչասված, աստղչասըխ.

կ՝ կնկաիք չգընդէք " կանայք"

ղ՝ ուղղորդչօղօրթ, ողկոյչգագօգ, խղմտանքչխըժմըղանք, աղոթակողմչաղօթգում.

հ՝ նահատակչնաաղազ, ջրհեղեղչլըրէղէղ (տմս § 145), օրհնելչօրշնէլ.

ր՝ ժ, շ-ից առաջ՝ արժելչաժէլ, բարշելչբաշէլ և այլն (§ 161). Բացի այդ, ր-ն ընկնում է հետևյալ բառերում՝ արտորայնաղօրնալ, բարձրփանձըր, գործաւարչբօզվար, երբչյափ, իրբչիք, մանապարհչջամփա, տարգալչթըբալ, շնորհապորչշընավօր .

ո՝ առնել յէնէլ
 վ՝ բովհրել յփօրհէլ, Բերովբէ յԲէրօֆ
 Կ՝ աշխարհ յաշխարհ, պահք յբաք և այլն (տես՝ 148);
 Բառավերջում՝ ն վերջնահնչյունը՝ բեռն փառ և այլն
 (տես՝ 158) .

կ՝ աղջիկ յախչին
 ը՝ կղմին զոր զըղմիդ
 տ՝ տապաստ զաբաս "ուռուցք"
 դ՝ կոմիդ զօջ
 յ՝ բազմավանկ բառերում՝ ծառայ ծառա, տղայ յղղղա և
 այլն (տես՝ 169) .
 Կ՝ շահ շահ(հ), մահ մահ(հ) (տես՝ 149) :

Յ. Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի

Կ Ր Ժ Ա Տ Ո Ւ Մ

174. Համախակի գործածութեան հետևանքով մի շարք բառերի
 կամ բառակապակցութիւնների որոշ հնչյունախմբեր "մաշվել",
 կրճատվել են: Նշենք այդ տիպի մի քանի օրինակներ՝ բարի ե-
 րեկոյ ՝ փառընգուն, նղբայր յափա, կրծանոց յզըրծան, ողկոյ յ
 զօզ, հասկացում յհասկում, չեմ իմանայ չիմնա, չիմնար, չիմնա
 ա .

չես իմանայ չիսնա, չիսնար, չիսնար ա
 չի իմանայ չիննա, չիննար, չիննար ա
 պատրոյ զակալ յբառզալ
 ցորճնի մաղ յցորմաղ
 կիրակամուտք յգիրամուտկ
 վաստակ վաճառ յվասկ վաճառ .

Այստաղ կարսլի է նշել նաև ամփոփման դեպքերը, որոնք
 առկա են բարբառում .

օրօրել յօրէլ
 օրօրան յօրան
 օրօրոցակա յօրըսգաբ
 խոնջան ընթացք յխոնջընթթասկ
 օրհասարակ յճրսագ "կեսօր"
 մանած(ա) ծախանոց յմանծըինոց .

4. Դ Ր Ա Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

175. Բարբառոււմ կան դրափոխության հետեւյալ օրինակ-
ները.

դ//գ՝ դազադք > քաթախկ
թ//խ Թաթախել > Թախտէլ
լ//վ լուալ > վըլալ
խ//մ խխմիլ > խըմիիլ
ի//ն փոխինդ > փոխնիդ
խ//ս խստոր > սըխսօր
կ//ն ալանջ > անգաչ
շ//խ նշխար > նախշար
պ//ղ կոսղել > գըղթէլ
ս//խ փսխալ > փըխսէլ
փ//տ փնտուր > Թէփուր
ք//ն գոքանչ > գօնքաչ.

176. Երկրորդ վանկոււմ գտնվող ը-ն դրափոխությամբ անցել
է առաջին վանկը՝ իր տնդը գիչելով այդ վանկի որևէ բաղաձայ-
նի. այսպես՝ ալոայ > արգա

անծրև > հարգէվ
ալրայ > արբա
ալրանք > արբանք
բովհրել > փօրհէլ
գգրոց > քըրգօց
դատարկ > Թարդագ
դատարկսլ > Թարդըգէլ
խռռորուք > խօրշուք
կամուրջ > զարմուչ
կնճիոն > գըռինջ
ճպոռտ > ջըռքօդ
մկրատ > մըրգադ նաև՝ մըյրադ
սովորիլ > սօրվիլ
փողորակ > փօրդանք
փշրել > փըրշէլ
փշուրք > փուրշունք
կապերտ > գարբէդ

Հակառակ այս օրենքին՝ առաջին վանկից ը-ն անցել է երկ-
րորդ վանկ՝ ջրադացք > չաղարակ , Դրիգոր > Քիրբօր բառերում:

5. Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

177. Մի քանի բառերում որոշ քաղածայններ կրկնվել են:
Դրանք են՝ ամենշամմեն, ասեղնասսէղ, ծալել > ծալլել, ծամել >
ծամմել, ծամոց > ծամմօց, կիսել > զըսսել, հրամայեա՝ > հըրամմէ՝,
քայլել > քալլել:

2 Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՅԱԿԱՆ

ԱՆՈՒՆ

ՀՈԳՆԱԿԻԻ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

178. Մալաթիայի բարրառում հոգնակին հիմնականում կազմավորում է -էր, -նէր մասնիկներով:

179. Միավանկ բառերի հոգնակին կազմավորում է -էր մասնիկով: Օրինակ՝ աչք>աչկ-աչկէր, ազգ>ասկ-ասկէր, բահ>փահ-փահէր, գործ>քօրծ-քօրծէր, խոզ>խօզ-խօզէր, կով>գօվ-գօվէր, հաւ>հավ-հավէր, շոււն>շոււն-շոււնէր, տոււն>դոււն-դոււնէր, ցից>ցից-ցիցէր և այլն:

ն վերջնահնչյունը կորցրած միավանկ բառերի հոգնակին սովորաբար կազմավորում է -էր մասնիկով: Ինչպես՝ ազբն>ասպ-ասպէր, ական>ազ-ազէր, ծուկն>ծուկ-ծուկէր, կամն>գամ-գամէր, հարսն>հարս-հարսէր, հիմն>հիմ-հիմէր, ձեռն>ցառք-ցառքէր, ծուկն>ցուկ-ցուկէր, մատն>մաղ-մաղէր, մուկն>մուկ-մուկէր, որդն>օրթ-օրթէր և այլն:

Այդ հնչյուններից առաջ ռ ունենցող բառերում հոգնակի կազմելիս վերականգնվում է ն-ն: Այդ բառերն են՝ բռն>փառ-փառնէր, դուռն>թօռ-թրոնէր, թռոն>թօռ-թօռնէր, լեռն>լեռն>լառ-լառնէր, կուռն>զուռ-զըռնէր: Սրանց նմանակությամբ էլ ծառ բառի հոգնակին կազմվում է -նէր մասնիկով՝ ծառնէր: Նուորն>նուռ բառը հոգնակիում կարող է պահպանել ն վերջնահանգը կամ սղել՝ նուռնէր և նուռէր: Մասն>մաս "մասունք" բառի հոգնակին կազմվում է ն վերջնահանգի պահպանմամբ՝ մասնէր:

180. Ան և չ ժխտական նախածանցներով կազմված միավանկ բառերը հոգնակիում ստանում են -նէր մասնիկը՝ դիտվելով իրրեւ բազմավանկ բառեր: Ինչպես՝ անգործ>անքօրծ-անքօրծնէր, անտոււն>անդոււն-անդոււննէր, անսիրտ>անսիրդ-անսիրդնէր, անփործ>ամփօրցնէր, չտես>չըդէս-չըդէսնէր: Ծթն բառը դուրսից սերկրորդ բաղադրիչը միավանկ բառ է և բառի ընդհանուր իմաստն արտահայտվում է առաջին բաղադրիչի միջոցով, հոգնակին

կազմվում է նէր հոգնակերտի միջոցով: Օրինակ՝ աներծագ > անէրցաք-անէրցաքներ, դրկից>թըրզից-թըրզիցներ, ժամակոչ > ժանգոչ-ժանգոջներ, կնքապապ>հընքաքաք-հընքաքաքներ, նեղսիր, նեխսիրդ-նէխսիրդներ, չորաթան>չօրթան-չօրթաններ, վարժա- պետ>վարժաբէդ-վարժաբէդներ, վարժատուն>վարժադուն-վարժա- դուններ և այլն:

Բարդ բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է և հիմնական իմաստն արտահայտվում է վերջին բաղադ- րիչի միջոցով, հոգնակին կազմվում է էր մասնիկով. օրինակ՝ աղաջուր>ախչօռ-ախչօռէր, մոխրաջուր>մախիրչօռ-մախիրչօռէր, փակմատն>փաղմաղ-փաղմաղէր "բթամատ" և այլն:

181. Մեկ և կսս վանկանի բառերը հոգնակիում ստանում են նէր մասնիկը, դիտվելով որպես երկվանկ բառեր. ինչպես՝ գլուխ>քըլօխ-քըլօխներ, ծանր>ժանդըր-ժանդըրներ, կրակ>զը- լազ-զըրազներ, ճրագ>ջըրաք-ջըրաքներ, մանր>մանդըր-մանդըր- նէր, սանտր>սանդըր-սանդըրներ, տայգր>դաքըր-դաքըրներ և այլն: Աստղասի բառում տ-ի սղմամբ բառը դարձել է միավանկ, որի հոգնակին օրինաչափորեն կազմվում է էր-ով՝ ասիէր:

182. Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է նէր մաս- նիկով. ինչպես՝ աղբիւր-ախփիրներ, աղիւս>աղօս-աղօսներ, ականջ>անգաչ-անգաչներ, եղբայր>ախփար-ախփարներ, գօտի>քօղի- քօղիներ, երկաթ>էրզաթ-էրզաթներ, խնձոր>խընձէր-խընձէրներ, ծաղիկ>ծաղիզներ և այլն:

Օտար փոխառությունները միավանկ բառերում ստանում են էր, բազմավանկ բառերում՝ նէր հոգնակերտէրը. ինչպես՝ բաղ- բաղէր "այգի", բուզ-բուզէր "սառույց", սազ-սազէր և այլն, դիրսազ-դիրսազներ "արմուկն", թօխում-թօխումներ "սերմ", օքիզ-օքիզներ "եզն" և այլն:

189. ն-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում պա- հում են ն-ն և ստանում նէր հոգնակերտը: Այդ բառերն այս- պիսով ունենում են կրկնակի ն.՝ երկայն>էրզան-էրզաններ, գարուն>բարուն-բարուններ, բարութիւն>փարութիւն-փարութիւն- նէր և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Այն բազմավանկ բառերը, որոնք բառավեր- ջում հավելյալ ն են ստանում, հոգնակիում նույնպես ունենում են կրկնակի ն: Այդ բառերն են՝ աղջիկ>ախչին-ախչիններ, երե-

գոյ՝ ուղղունգուն-ուղղունգուններ, դրացի>թրրացին-թրրացիններ:

184. Իրարարում ք հոգնակարտ մասնիկ ունեցող բառերը մալաթիայի բարրառում սովորաբար համարվում են օգակի: Հոգնակի կազմելիս նրանք համապատասխանաբար ստանում են -էր (միավանկ բառերում) և -ներ (բազմավանկ բառերում) հոգնակարտ մասնիկները. ինչպես՝ կուրծք>գուրսկ-գուրսկէր, ձնոք>ցառք-ցառքէր, մէխկ-մէխկէր, ոռ(ք)>օրք "հատակ"-Օրքէր, ոտք>օտկ-օտկէր և այլն. աղօթք>աղօտկ-աղօտկներ, աշխարհք>աշխարք-աշխարքներ, աշուն>աշունք-աշունքներ, արտասուք>արցունք-արցունքներ, բաղանիք>աղնիք-աղնիքներ, հարսանիք>հարսնիք-հարսնիքներ, շնորհք>շնօրք-շնօրքներ, ցիւ>ցըվիք-ցըվիքներ և այլն:

185. Մարմնի զուգ անդամներ ցույց տվող մի շարք բառեր, բացի սովորական -էր կամ ներ մասնիկներից, ստանում են նաև -վրներ, հոգնակարտը, որը կազմված է -վի+նի+էր մասնիկներից: Այդ մասնիկի միջոցով բառն արտահայտում է հավաքական իմաստ: Այսպես՝ աշկէր նշանակում է "աչռէր", որը զործ է ածվում մի մարդու նպաստմբ կամ ընդհանրապես, առանց կոնկրետացնելու: Սակայն աշկըմներ (աշվրներ) նշանակում է որևէ խումբ մարդկանց աչքսը՝ մեր աչքերը, տվյալ խմբի մարդկանց աչքերը և այլն: Վրներ մասնիկով հոգնակի են կազմում հետևյալ բառերը.

աչք>աշկ-աշկըմներ կամ աշվրներ

ականջ>անգաչ-անգըշվրներ,

եղունգն>ուղունգ-ուղունգվրներ

ծունկն>ծունգ-ծունգվրներ

ձնոք>ցառք-ցառվրներ

յօնք>ունք-ունքվրներ,

ոտք>օտկ-օղվրներ

Վրներ հոգնակերտով հավաքականություն են արտահայտում նաև դուն, շուն, դալ և մաղ բառերը. այսպես՝ դունվրներ, շունվրներ, դալվրներ, մաղվրներ:

186. Բացի սովորական ձևերից, բարրառում կան նաև մի քանի այլ հոգնակարտ մասնիկներ, որոնք ընդհանուր գործածություն չունեն. նրանցով հոգնակի են կազմում սակավաթիվ բառեր:

Այդ հոգնակարտներն են.

ա) -Ստան. այս մասնիկն են ստանում ի վերջավորություն

ուննցող մի բանի զոյականնս՝ հավաքական իմաստ արտահայտելու համար: Սրանք -ստան հոգնակերտն ստանում են ա հոդակապի միջոցով. բառավերջի ի-ն միանում է ա հոդակապի հետ և հայերենի ընդհանուր օրինաչափությամբ հնչյունափոխվում է ե>է-ի:

Տարիչդարի+ա+ստան - դարէստան

մասնիշմաղնի+ա+ստան - մաղնէստան

գօտիշքօղի+ա+ստան - քօղեստան

այգիշէքի+ա+ստան - էքէստան

խավլի+ա+ստան - խավլէստան և այլն :

բ) -Անք՝ ձիշցի-ցիյանք, դւշթէվ-թիվանք, եղբայր>ախփար-ախիւրրանք, իօրաքոյր>օրքօր-օրքօրանք (զործածական է խալանք ծւը, որտեղ թուրքերեն խալա բառի հոգնակիությունն արտահայտված է հայերեն -անք մասնիկով), տալ>դալ-դալանք, տայգլ>աբըր-դաբըրանք, քոյր>քօր-քօրանք:

գ) -Դանք՝ ոսկր>օսկօր-օսկըրդանք, փըսօր>փըսօրդանք

դ) -Դէք՝ կնիկ>զընիգ<զընիգդէք>զընդէք, փրիգ<փրիգդէք, դաբիր-դաբըրդէք, ախփար-ախփըրդէք և այլն :

ե) -Ք՝ ծագումը, բնակավայրը ցույց տվող -ացի, -էցի, -ցի ածանցներով կազմված բառերում՝ խարիէրթցիք, մալաթյացիք, սուվասցիք, քօլսէցիք, քէղացիք, քախըցիք և այլն :

զ) -Օնք, բանօնք, դադօնք, բարօնք, ինքաբարօնք, շադօնք, թերգօնք և այլն: Այսչափ, այդչափ, այնչափ, դերանունների հոգնակին նույնպես կազմվում է -օնք մասնիկով՝ անօնք, անդօնք, անոնք:

ը) -էնք, ամուլէնք, Բաբէնք, հարսայէնք, մամէնք, փարսէղէնք, փիլօլէնք, քիրքօրէնք և այլն :

187. Ստան, անք, դանք, իք, դէք մասնիկները սովորաբար զործածվում են հավաքական իմաստ արտահայտելու համար: Անհրաժեշտության դեպքում այդ մասնիկներով կազմված զոյականները կրկնակի հոգնակի են կազմում -նէր հոգնակերտի միջոցով. Օրինակ՝ մաղնէստաննէր, ցիյանքնէր, օսկըրդանքնէր, փըսօրդանքնէր, զընդէքնէր, ախփըրդէքնէր, դաբըրդէքնէր և այլն : -Օնք, էնք և ք մասնիկներով կազմված՝ հավաքականություն ցույց տվող բառերը հոգնակի չեն ունենում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Մարդ>մարթ բառի հոգնակին կազմվում է իկ մասնիկով, սակայն անք, օնք, դանք և այլ հոգնակերտների

համաքանությամբ կ-ն դարձել է ք՝ մարթիք (զընիգմարթիք և այլն) :

Հ Ո Լ Ո Վ Ն Ե Ր

188. Բարբառն ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, բացակայում է ներգոյական հոլովը :

189. Ուղղականը բառի ուղիղ ձևն է, այսինքն բառն ունի զրո վերջավորություն: Այս հոլովը բարբառում նույն կիրառությունն ունի, ինչ արդի հայերենում: Որոշյալ առմամբ գործածվելիս սեռական հոլովը ստանում է որոշյալ հոդ (ը կամ ն), որով և նմանվում է տրականին. Օրինակ՝ "աս մարթուն քիրքը" "այս մարդու վիրքը" :

Հայցականը ձևով նման է ուղղական հոլովին, անկախ այն բանից՝ տվյալ գոյականը անձի առմամբ է օգտագործված, թե իրի: Օրինակ՝ "իս սիրիմ ա քիրքօրը, թօն փէրիս ա քիրքը" և այլն :

Հայցականը կիրառվում է նաև ներգոյական հոլովի իմաստըն արտահայտելու համար: Օրինակ՝ իմ ախփարըս վարժադունը թաս սօրվի յա "Եղբայրս վարժաանում (դպրոցում) դաս է սովորում" :

Բացառական հոլովը կազմվում է -է (էն), մէ(մէն) վերջավորություններով: Խնամակցություն և ազգակցություն ցույց տվող, ինչպես նաև աստուածշատված, մարդյամարթ բառերի բացառականը կազմվում է տրականին ավելացնելով մէն վերջավորությունը, իսկ անձ ցույց տվող մյուս գոյականների և իր ցույց տվող բոլոր բառերի բացառականը կազմվում է էն վերջավորությամբ, որն ավելանում է տրական հոլովի կամ հիմքի վրա:

Գործիական հոլովի վերջավորությունն է օք կամ մօք: Կազմությունը նույնն է բացառական հոլովի հետ, այսինքն ազգակցություն և խնամակցություն ցույց տվող բառերում կազմվում է մօք, իսկ անձ ցույց տվող մյուս գոյականների և իրի առմամբ գործածվող բոլոր բառերում՝ օք վերջավորությամբ: Այս Օք(մօք) հոլովածևի հիմքը զրաբարն է: Հայտնի է, որ զրաբարում -աւք(օք)

վերջավորություն ունեն ա, ի-ա վերջադրական, ը-ա խառն հոլովման պատկանող բառերը հոգնակի թվում: Սակայն Մալաթիայի բարբառում գործիականի այդ հոլովածը ընդհանրացել է և տարածվել բոլոր հոլովների վրա՝ եզակի և հոգնակի թվում: Նույնիսկ հավաքական իմաստ արտահայտող գոյականները, որոնք հոգնակի են կազմում -էք, իք, դէք, դանք, վրդէք, էնք, օնք, անք մասնիկներով, գործիականը կազմում են -օք (մօք) վերջավորության միջոցով: Ճիշտ է, գործիական հոլովում օք վերջավորություն ունեն նաև մի շարք այլ բարբառներ (օրինակ Պոլսի բարբառը)¹, սակայն այդ վերջավորությունը մյուս բարբառներում պահպանվել է որպես գրաբարյան վերապրուկ, որը գործածական է առանձին ոճերի և արտահայտությունների մեջ: Այնինչ Մալաթիայի բարբառում գործիականի այսպիսի կազմությունը նարկայացնում է մի ամբողջական ու կուռ օրինաչափություն²:

Նարգոյական հոլովի իմաստն արտահայտվում է՝ 1) Հայցական հոլովով. օրինակ՝ Շուգան դավշան գառնէ յա - "Շուկայում նպաստակ է առնում" : Խըրթօցը թաս սօրվի յա - "ղպրոցում դաս է սովորում" : 2) Սեռական հոլովով խնդրի և մէջմէջ կապի միջոցով. օրինակ՝ քըլխուն մէջ - "գլխում", քիրքին մէջ - "գրքում" և այլն :

Հ Ո Ւ Ն Ո Վ Ո Ւ Մ Ն Ե Ր

190. Գոյականների հոլովումը որոշվում է եզակի թվի սեռական հոլովի վերջավորությամբ: Մալաթիայի բարբառի գոյականներն ունեն յոթ հոլովիչ՝ ի, ու, ան, օչ, Օր, վա և գրաբարադիպ: Հետևաբար բարբառն ունի յոթ հոլովում:

191. Հոգնակի թվում բոլոր գոյականները կամ գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը հոլովվում են ու հոլովմամբ՝ անկախ եզակի թվում այս կամ այն հոլովման նրանց պատկանելուց: Բացառություն են կազմում գրաբարադիպ հոլովման պատկանող բառերը, որոնց մի մասը հոլովվում է միայն հոգնակի թվում և ց հոլովիչով, մի մասն էլ հոգնակի չունի: Հոգնակի թվում բացառական և գործիական հոլովները կազմվում են եզակի թվի նույն հոլովների կազմության սկզբունքով:

1. Հ. Աճառյան, Բնություն Պոլսահայ բարբառի, էջ 116:

2. Գործիական հոլովում օք վերջավորություն ունի նաև Արաբկիրի բարբառը (տես Ս. Դավիթ Բեկ, Արաբկիրի գաւառաբարբառը, Վիսնայ, 1919):

Ի Զ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

192. Վերջավորություններն սն՝ եզակի սեռական-տրական՝ ի, հայցական՝ ծևով նման է ուղղականին, անկախ այն բանից, թե ինչառուժով է օգտագործված՝ իրի, թե անձի, բացառական՝ -է (ն), գործիական՝ -օք:

Հոգնակի սեռական-տրական՝ ու, հայցական՝ նման է ուղղականին, բացառական՝ -էրէ(ն), -նէրէ(ն), գործիական՝ -էրօք (նէրօք):

193. Մալաթիայի բարբառում, արդի հայերենի նման, ի-ն ամենատարածված և ամենագործուն հոլովումն է: Այս հոլովման է պատկանում բարբառի բառերի մեծ մասը: Նույնիսկ շուն, տուն, մուկն, ձուկն, աղջիկ, ընկեր բառերը, որոնք գրաբարում, արդի հայերենում և հայ բարբառների մեծ մասում սնթարկվում են այլ հոլովումների, այս բարբառում պատկանում են ի հոլովման:

Հարակատար և ենթակայական դերբայները, գոյականաբար գործածվելիս, ինչպես նաև փոխառյալ բառերի մեծ մասը նույն-պես հոլովվում է ի հոլովմամբ:

Հոլովման ընդհանուր պատկերը

Խօսկ բար ախչին բըրօղ բըրած

Ե զ ա կ ի

ուղղ.	հայց.	խօսկ(ը)	բար(ը)	ախչին(ը)	բըրօղ(ը)	բըրած(ը)
սեռ.տրակ.	խօսկին	բարին		ախչինին	բըրօղին	բըրածին
բաց.	խօսկէն	բարէն		ախչինէն	բըրօղէն	բըրածէն
գործ.	խօսկօք	բարօք		ախչինօք	բըրօղօք	բըրածօք

Հ ո գ ն ա կ ի

ուղղ.	հայց.	խօսկէր(ը)	բարէր(ը)	ախչիններ	բըրօղներ(ը)	բըրածներ(ը)
սեռ.տրակ	խօսկէրուն	բարէրուն		ախչիններուն	բըրօղներուն	բըրածներուն
բաց.	խօսկէրէն	բարէրէն		ախչիններէն	բըրօղներէն	բըրածներէն
գործ.	խօսկէրօք	բարէրօք		ախչիններօք	բըրօղներօք	բըրածներօք

194. Բացի վերոհիշյալներից, ի հոլովման են ենթարկվում՝
ա) Գրաբարյան ն վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը.
Այդ բառերն են՝

միավանկ	քաղմավանկ
ակն > ազ	աղեղն > աղօղ
ծուկն > ծուկզ	արեգակն > արքազ
կամն > գամ	եղունգն > ուղունգ
հարսն > հարս	լիսեոն > լրսառ
հիմն > հիմ	կնճիոն > զըռինջ
ձեռն > ցառք	պճեղն > բըջէղ
ձուկն > ցուկզ	սիսեոն > սըսառ և այլն
մասն > մաս	
մատն > մաղ	
մուկն > մուկզ	
նուռն > նուռ	
ոսպն > օսպ	
որդն > օրթ	

ԺԱՆՈՒՌՈՒԹՅՈՒՆ - 1) Մասն > մաս "մասունք" բառը հոլովելիս սեռականում վերականգնվում է գրաբարյան ն վերջնահանգը, այսպես՝ սեռ. տր.՝ մասնին, բաց.՝ մասնէն, գործ.՝ մասնօք:

2. Գրաբարյան ն վերջնահանգ ունեցող մյուս բառերը ենթարկվում են ան հոլովման (տես § 203):

բ) Բառավերջում այ > ա ունեցող բառերը: նրանք բաժանվում են երկու խմբի.

Առաջին խմբի բառերը, որոնց հոգնակին կազմվում է միայն նէր մասնիկով, եզակի սեռականում պահում են ա-ն. ահա այդ բառերից մի քանիսը.

եզ. ուղղ.	հոգն. ուղղ.	եզ. սեռ.
ամիրա	ամիրանէր	ամիրային
արգա "ատամ"	արգանէր	արգային
ըրդա "ասնդնագործություն"	ըրդանէր	ըրդային
թարխանա "սպաս կորկոտից"	թարխանանէր	թարխանային
թօրթա "բակ"	թօրթանէր	թօրթային
լափա "սպաղանի"	լափանէր	լափային
համփա "վիճակակից ընկեր"	համփանէր	համփային

հաքուքա"ազուգա"	հաքուքանէր	հաքուքային
ծառա	ծառանէր	ծառային
չաղա"սրսխա"	չաղանէր	չաղային
վըգա	վըգանէր	վըգային
փաղլա"բակլա"	փաղլանէր	փաղլային

Երկրորդ խմբի բառերի հոլովման ժամանակ բառավերջի ա-ն կարող է պահվել կամ սղվել: Այդ խմբի ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ նրանք հոգնակի են կազմում և նէր վերջավորութեամբ, և հավաքականություն արտահայտող մասնիկով, որից առաջ այ-ը հնչյունափոխվում է է-ի: Այդ խմբին պատկանող բառերից են՝ դըղա, փէսա, թուլա, ջամփա, սաղանա, քահանա և այլն:

եզ. ուղղ.	հոգն. ուղղ.	եզ. սեռ.
դըղա	դըղանէր և դըղէք	դըղային կամ դըղին
փէսա	փէսանէր և փէսէք	փէսային կամ փէսին
թուլա	թուլանէր և թուլէք	թուլային կամ թուլին
ջամփա	ջամփանէր և ջամփէք	ջամփային կամ ջամփին

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Ջամփա, փէսա և դըղա բառերը հոլովվում են նաև ու հոլովմամբ (տես § 198):

ՈՒ Հ Ո Ն Ո Վ Ո Ւ Մ

195. Վերջավորություններ. եզակի սեռ. տրական՝ ու, հայցական՝ ինչպես ուղղականը, բացառական՝ էն(մէն), գործիական՝ օք (մօք):

Հոգնակի սեռ. տրական՝ էրու (նէրու), հայցական՝ ինչպես ուղղականը, բացառական՝ էրէն (նէրէն), գործ.՝ էրօք (նէրօք):

Հոլովման ընդհանուր պատկերը

կով>գով	գլուխ>բըլօխ
Ուղղ. հայց. գով(ը)	բըլօխ(ը)
սեռ. տրակ. - գովուն	բըլխուն, բուլխուն

բացառական - զօվէն
գործիական - զօվօք

բըլխէն, բուլխէն
բըլխօք, բուլխօք:

Հ Ո Ք Ն Ա Կ Ի

ուղղ. հայց. - զօվէր(ը)	բըլօխնէր(ը)
սնո. տրակ. - զօվէրուն	բըլօխնէրուն
բացառական - զօվէրէն	բըլօխնէրէն
գործիական. - զօվէրօք	բըլօխնէրօք

196. Այս հոլովման նն պատկանում.

ա) Գրաբարայան ո կամ ու վերջադրական պարզ հոլովումներին զատկանող հետևյալ բառերը՝ ամիս, ամիս, աստուած, ասված, գլուխ, բըլօխ, գող, քօղ, էշ, էշ, ժամ, ժամ "եկեղեցի", լոյս, լօս, կով, զօվ, հայ, հայ, հով, հօվ, հորթ, հօրթ, մարդ, մարթ, պաղ, քաթ (անէրթաթ, հրնթաթաթ), ցաւ, ցաւ, փոր, փօր. տէր, ղէր բառը քարքառում անցել է ու հոլովման բառերի շարքը:

Աստուած, ասված բառի թեք հոլովումներում վերականգնվում է արմատի տ հնչյունը. այս լսւ՝ ուղղական, հայց.՝ ասված, սնո. տր.՝ աստուծուն, բաց.՝ աստուծմէն, գործ.՝ աստուծմօք:

ԵՄՆՈՒՄՈՒՄՅՈՒՆ - օտանակի միավոր արտահայտող ամիս բառը սովորաբար հոլովում է -վա հոլովմամբ: Ու հոլովմամբ այն կիրառվում է տոանձին ոմների և արտահայտությունների մեջ:

բ) ի-ով վերջացող բառերը՝ ագի, քաթի, ածելի, քաթի, քաթի, անօթի, քանօթի, քարդի, քաթի, գարի, քաթի, գինի, քիսի, գօտի, քօղի, թի, թի, հօգի, հօթի, ծի, ցի, մատանի, մաղնի, ոսկի, օսկի, ջորի, ջօրի, քնոթի, քնթի / այլն:

գ) -Ացի, -էցի, -ցի ածանցներով կազմված գոյականները՝ մալարյացի, բօլսէցի, սուվասցի, քէղացի, քախկըցի և այլն:

Հոգնակիում այդ բառերը ք ստանալով՝ հոլովվում են գրաբարատիպ (ց) հոլովմամբ:

դ) Զրադմունք, արհեստ ցույց տվող ջի, ջի ածանցով կազմված փոխառյալ բառերը՝ սըվադջի, փինաջի և այլն:

197. ի-ով վերջացող վերոհիշյալ ննթախմբերի բառերը, բացի ու հոլովման ննթարկվելուց, կարող են հոլովվել նաև ի հոլովմամբ:

Բանի որ բարբառի ամենատարածված հոլովումը ի-ն է, ուստի վերջինիս համաքանությունն ազդել է ի-ով վերջացող բառերի

վրա և ենթարկել իրան: Այսպիսով նրանք զուգահեռաբար հոլով-
վում են ի, ու հոլովումներով:

Օրինակներ՝ "էրէգ իս շարթէցի քինուն թասը", "Ախչին
ան քինին թասը վրա", "Ախչինը մաղնուն քինը չըսավ", "Ան
մաղնին քինը ինչու՞ չըսիր", "Քարուն չուվալը քողցան",
"Քընա՞ քարին չուվալին նիսա", "Առչի օրը իմ ախարըս քը-
նաց սըվաղջուն դունը" : "Սըվաղջին դունը հօս է" :

Ահա այդ բառերի հոլովման ընդհանուր պատկերը	
եզակի	հոգնակի
ուղղ. հայց մաղնի(ն)	մաղնինէր(ը)
սեռ. տրակ մաղնիին, մաղնուն	մաղնինէրուն
բաց. մաղնիյէն, մաղնէն	մաղնինէրէն
գործ. մաղնիյօք, մաղնօք	մաղնինէրօք

198. ի հոլովման պատկանող տղա, զրդա, մանապարհ, ջամփա,
փեսայ, փէսա բառերը հոլովվում են նաև ու հոլովմամբ. այսպես՝

ուղղ. հայց. զրդա	փէսա	ջամփա
սեռ. տր.	զրդուն	փէսուն
գործ.	զրդօք	փէսօք

199. Քանի որ ստան մասնիկով կազմված բառերի հոգնակի
իմաստը միազանգել է, ուստի այդ բառերը հոգնակին կազմելով
նէր մասնիկի միջոցով, հոլովվում են ու հոլովմամբ. այսպես՝
մաղնէստաննէր, մաղնէստաննէրուն, մաղնէստաննէրէն, մաղնէս-
տաննէրօք: Այդպես են հոլովվում՝ էքէստաննէր, դարէստաննէր,
խավէստաննէր, շէնէստաննէր, քողէստաննէր և այլ բառեր:

200. Մարմնի զույգ անդամներ ցույց տվող աչք, աշակ,
կանջանգաջ, նդունգնչըղունգ, ծունկնչծունգ, ծնոք, ցառք, ոտք,
օտկ, յօնք, ունք բառերը, ինչպես նաև մատն, մաղ, տուն, դուն,
շուն, շուն, տալ, դալ բառերը, հոգնակին կազմելով վրնի մաս-
նիկով՝ աշկվրնի(աշվրնի), անգըշվրնի, ըղունգվրնի, օղվրնի,
ծունգվրնի, ունքվրնի, մաղվրնի, դունվրնի, շունվրնի, դալվր-
նի, կրկնակի հոգնակի են կազմում նէր մասնիկի միջոցով: Այս
երկու մասնիկները՝ վի և նէր ամփոփվում են և կազմում վր-
նէր հոգնակերտը: Նշված մասնիկով հոգնակի կազմած գոյական-
ները, իբրև կանոն, հոլովվում են ու հոլովմամբ:

Ահա հոլովման ընդհանուր պատկերը

Ուղղ. հայց.	աշվըներ(ը)	մաղվըներ (ը)
սեռ.տր.	աշվըներուն	մաղվըներուն
բաց.	աշվըներէ(ն)	մաղվըներէ(ն)
գործ	աշվըներօք	մաղվըներօք

ԵԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ Վընի հոգնակերտով կազմված գոյականների (աշվընի, ցաղվընի) հոլովումը բարբառում գործածական է:

201. Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս ստանում է հոդ և հոլովվում ու հոլովմամբ :

ստորև տալիս ենք գրելքերէլ, սովորիչսօրվիլ, մոռանալշմառնալ դերբայների հոլովումը.

ուղղ. հայց.	բըրէլը	սօրվիլը	մառնալը
սեռ.տրակ.	բըրէլուն	սօրվիլուն	մառնալուն
բաց.	բըրէլէն	սօրվիլէն	մառնալէն
գործ	բըրէլօք	սօրվիլօք	մառնալօք

ԱՆ Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ

202. Վերջավորություններ. եզակի սեռ. = տրակ.՝ ան, հայց՝ ինչպես ուղղականը, բացատական՝ էն, գործիական՝ օք:

Հոգնակի վերջավորությունները նույնն են ի հոլովման գլուխնող գոյականների հոլովման հետ:

203. Այս հոլովման են սնթարկվում.

ա) զընիզ և անիզ բառերը.

Ուղղ. հայց.	զընիզ	անիզ
սեռ.տրակ.	զէնզան	անզան
բաց.	զընզանմէն, զընիզէն	անզանմէն, անիզէն
գործ.	զընզանմօք, զընիզօք	անզանմօք, անիզօք

բ) Գրութարյան ն վերջնահնչյունը կորցրած հետևյալ բառերը ամառնշամառ, ամրան, ամրանէ, ամրանօք,

բսոնշիսո, փառան, փառնէն, փառնօք,

դուռնշթու, թըռան, թըռնէն, թըռնօք,

արդումնշէրթում, էրթման, էրթումնէն, էրթումնօք,

թոռնշթո, թոռան(նաւ՝ թոռանօչ), թոռնէն, թոռնօք,

լեռանշլառ, լառան, լառնէն, լառնօք,

խրումնշխըում, խըման, խըթումնէն, խըթումօք,

ցամոնշցրմար, ցրման, ապա՝ ցըրման, ցըրմանէն, ցըրմանօք,

վայելումն շվայլում, վայրլման, վայլումէն, վայլումօք:

Չնայած գրաբարյան դուռն և թոռն բառսրը բարբառի ուղղական հոլովում դարձել են նույնանուն բառեր՝ թօռ, այնուամենայնիվ հոլովելիս որոշակի երևում է նրանց տարբերությունը՝ թրոան և թօռան: Հոլովման այս տարբերության հիմքը գրաբարս է: Գրաբարում դուռն բառը ենթարկվում է ա ներդրական հոլովման, ըստ որում հոլովիչից առաջ արմատի ու-ն, շեշտակորույս լինելով սղվում էլ՝ դռան: Գրաբարի եզակիում ի ներդրական հոլովման պատկանող թոռն բառի սեռականում արմատի ո-ն մնում է անփոփոխ՝ թոռին: Թեք հոլովներում արմատի ձայնավորների այդ հնչյունափոխությունները նույնությամբ պահպանվել են բարբառում: այսպես՝ դռան շրթոան և թոռին շթօռան:

գ) Ութիւն շուլիուն ածանցով կազմված վերացական գոյականների հոլովումը ներդրական բնույթ ունի, այսինքն ուղղական հոլովի ու-ի փոխարեն սեռականում հանդես է գալիս ա-ն, այսպես՝

ուղղ. հայց.	փարութուն	քէշութուն
սեռ. տրակ.	փարութան	քէշութան
բացառ.	փարութունէն	քէշութունէն
	փարութէնէն	քէշութէնէն
գործ.	փարութունօք	քէշութունօք

204. Գրաբարում ա ներդրական հոլովման պատկանող լեռոն լառ, շուն շուն, ծունկն ծունգ, ծունկն ցուգ, մունկն մուգ, նուռն շնուռ, տուն շդուն բառերը Մալաթիայի բարբառում ի հոլովման ենթարկվելուց բացի, հոլովվում են նաև ա հոլովմամբ: Վերջին դեպքում նրանք սովորաբար գործածվում են առածների, ոմների, ասացվածքների և նման այլ արտահայտությունների մեջ: Հնարավոր է նաև, որ բարբառում կազմվեն նոր առակներ, ասածվածքներ, որտեղ վերոհիշյալ բառսրը սեռական-տրական հոլովներում ունենան ա հոլովիչը: Այս դեպքում ներազդողը փոխառված ոմների համաբանությունն է, նրանց կազմության բերականական ձևը: Սակայն առօրյա սովորական խոսակցությունների ժամանակ հիշյալ բառերը հոլովվում են ի հոլովմամբ: Բերենք այդպիսի ոմների մի քանի օրինակներ.

Շունը շանն է ընգէր:

Շան աքին հանգօշտ չի փրոնիր:
 Շունը շանը միսը գուդի:
 Բօղը ուժօք ըլլի նէ՝ դան դէրը քօղ քը փրոնէ:
 Դան քօղուն հէդ քըլօթ չէլլըվէր:
 Յօթը դան մագարթ:
 Լառ լառան վըրա գըլլի, դուն դան վըրա չըլլիր:
 Մըզան շառը դէնիզին շահ ունի "մկան մեզն էլ ծովին օգուտ
 է տալիս" :

ՎԱ Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

205. Վերջավորութիւններ. սգակի սեռական-տրական՝ վա(ն
 քաց.՝ է կամ վընէ, գործ. օք կամ վընօք: Հոգնակին կազմում
 է ի հոլովման հոգնակիի սկզբունքներով:

Հոլովման պատկերը

ուղղ.հայց.	բըշէր(ը)	բըշէրնէր(ը)
սեռ.տր.	բըշէրվան	բըշէրնէրուն
քաց.	բըշէրվընէ	բըշէրսւրէն
գործ	բըշէրվընօք	բըշէրնէրօք

206. Վա հոլովման են պատկանում ժամանակ ցույց տվող
 հետևյալ բառերը.

Ամիսշամիս, ամսըվան, ամսըվընէն կամ ամսէն, ամսըվանօք
 կամ ամսօք.

այսօր, անօր, անօրվան, անօրվընէ, անօրվընօք
 անգամ, անքամ, անքամվան, անքամվընէ, անքամօք,
 ատեն, անդին, անդինվան, անդինվընէ, անդինօք,
 առաջ, առաջ, առըշվան, առըշվընէ, առըշվընօք կամ առչօք
 երբ, յափ, յափվան, յափվընէ, յափվընօք,
 երեկոյ, ռուտունդուն, ըռընգվա, ըռընգվընէ, ըռընգվընօք,
 գառիկ, գառիգ, գաղզըվան, գաղզըվընէ, գաղզըվընօք
 կանուխ, գանուխ, գանուխվան, գանուխվընէ, գանուխվընօք
 կեսօր, գէսօր, գէսօրվան, գէսօրվընէ, գէսօրվընօք,
 կիւրակէ, գիրազի, գիրազվան, գիրազվընէ, գիրազվընօք,
 հեղ, հէղ, հէղվան, հէղվընէ, հէղվընօք,
 հերու, հէրու, հէրվան, հէրվընէ, հէրվընօք,
 մօռիկ, մօղիգ, մօղիգվան, մօղիգվընէ, մօղիգվընօք,

շաքաթշափաթ, շափթըվան, շափթըվընէ, շափթըվընօք,
շատունցշաղօնց, շաղօնցվան, շաղօնցվընէ, շաղօնցվընօք,
ուղբաթուրփաթ, ուրփաթվան, ուրփաթվընէ, ուրփաթվընօք,
վաղիւշվաղը, վաղվան, վաղվընէ, վաղվընօք,
տարիշղարի, դարվան, դարվընէ, դարվընօք, դարՕք,
ցերեկշցօրէգ, ցօրէգվան, ցօրէգվընէ, ցօրէգվընօք, ցօրէ-
գօք,

օրաօր, օրվան, օրվընէ, օրվընօք, օրօք,
օր. հասարակ "կեսօր" > հօրսագ, հօրսագվան, հօրսագվընէ,
հօրսագվընօք,

վանքաց - "առավոտ" , վանքըսվան, վանքըսվընէ, վանքըսվը-
նօք,

սահաթ "ժամ" - սահաթվան, սահաթվընէ, սահաթվընօք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - 1) Առաջառաչ, մօտիկ, մօղիգ և զատիկ >
զաղիգ բառերը, նթն գործ են ածվում ոչ ժամանակը ցույց
տալու համար, ապա ննթարկվում են ի հոլովման: Օրինակ՝
"զաղգի փիլավ" և զաղգըվան փիլավ": Առաջինը նշանակում
է "զատիկին հատուկ փլավ", իսկ երկրորդը՝ "զատիկի ժա-
մանակ պատրաստած փլավ": Կամ՝ "առչին դըղան" և "առչը-
վան օրվան դըղան" արտահայտություններից առաջինը ցույց
է տալիս տեղ, իսկ երկրորդը՝ ժամանակ:

2) Կիւրակէշգիրագի և տարիշղարի բառերում սղվում է բա-
ռավերջի ի-ն, հէրու բառում՝ ու-ն, իսկ վաղը բառում՝ ը-ն.
այսպես՝ գիրագվան, դարվան, հէրվան, վաղվան:

3) Ուռուռնգուն բառի թեք հոլովներում սղվում է բառավեր-
ջի հավելյալ ն նշյունը:

4) Կէսշգէս բառը, նրբ ժամանակ արտահայտող բառերից
կազմված բարդություններում հանդես է գալիս որպես երկրորդ
բաղադրիչ, ենթարկվում է վա հոլովման. Օրինակ՝ դարիուզէս,
դարիուզէսվան, ամիսուզէս, ամիսուզէսվան, սահաիուզէս-սահա-
թուզէսվան և այլն:

5) Ամիսնսրի և տարվա եղանակի անունները (հունվար, փետրե-
վար . . . դեկտեմբեր, գարուն . . . ձմեռ) ենթարկվում են
այլ հոլովումների՝ առաջինները և աշունք բառը ի հոլովման,
իսկ եղանակի մյուս անունները՝ ան հոլովման:

ՕՂ Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ

207. Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ օղ, հայց.՝ ինչպես ուղղականը, բացառական՝ օղմէն, գործիական՝ օղմօք:

Հոգնակին կազմում է ի հոլովման հոգնակիի սկզբունքով:
Այս հոլովման ընդհանուր պատկերը.

Անեղ > անէր	տալ > դալ
ուղղ. հայց անէր(ը)	դալ(ը)
սեռ. տրակ. - անէրօղ	դալօղ
բաց. անէրօղմէն	դալօղմէն
գործ. անէրօղմօք	դալօղմօք

208. Այս հոլովման են ենթարկվում ազգակցություն և խնամակցություն ցույց տվող տայգրդաքըր, նէրդնէր, սկեսուր > գէսուր, սկեսրայր > գէսրմր, քոյր > քօր, թոռն > թօռ և Թիպըրանուն բառերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - 1. Ան հոլովման պատկանող թոռն > թօռ բառը սեռական հոլովում ստանում է նաև օղ հոլովիչը, որն ավելացնում է սեռական հոլովածուի վրա՝ թօռանօղ: Այդ բառի բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականի վրա համապատասխանաբար ավելացնելով մէ, մօք վերջավորություններ՝ թօռանօղմէ և թօռսնօղմօք:

2. Գրաբարում և արդի հայերենում օղ հոլովման պատկանող ընկերչընգէր բառը մալաթիայի բարբառում ենթարկվում է ի հոլովման (ընգէրին քիրքը):

3. Տայգրդաքըր բառը օղ հոլովման գուգահեռ հոլովվում է նաև գրաբարի ե ներքին թեքման հոլովմամբ (դաքէր անունը, դաքէր քօվը և այլն):

ՕՐ Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ

209. Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ օր, բացառական՝ օրմէ, գործիական՝ օրմօք: Հոգնակին կազմվում է ընդհանուր սկզբունքով:

210. Այս հոլովման են ենթարկվում դարձյալ ազգակցություն ցույց տվող հայր > հմր, մայր > մմր և եղբայր > Թիփար բառերը, ինչպես նաև այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը նըշված բառերից որևէ մեկն է. օրինակ՝ զընթահմր, հընթամմր,

մանձախփար և այլն :

Ահա այդ բառերի հոլովման պատկերը.

Ե զ ա կ ի

ուղղ.	հայց.	ախփար(ը)	հփր(ը)	մփր(ը)	մանձախփար(ը)
սեռ.տր.		ախփոր(ը)	հօր(ը)	մօր(ը)	մանձախփոր(ը)
բաց.		ախփորմէ(ն)	հօրմէ(ն)	մօրմէ(ն)	մանձախփորմէ(ն)
զործ.		ախփորմօք	հօրմօք	մօրմօք	մանձախփորմօք

Հ ո զ ն ա կ ի

ուղղ.հայց.	ախփարներ(ը)	հփրեր(ը)	մփրեր(ը)	մանձախփար- ներ(ը)
սեռ.տրակ.	ախփարներու(ն)	հփրերու(ն)	մփրերու(ն)	մանձ- ախփարներու(ն)
բաց.	ախփարներէ (ն)	հարերմէն)	մփրերմէ(ն)	մանձախփարներէ- րէ(ն)
զործ.	ախփարներօք	հփրերմօք	մփրերմօք	մանձախփարներ- օք

Կ ր ա բ ա ռ ա տ ի պ հ ո լ ո վ ու մ ն ե ռ

211. Այս հոլովումների շարքին են դասվում հավաքականու-
թյուն արտահայտող այն գոյականները, որոնք ունեն ք վերջավա-
րություն, ինչպես նաև տեղանուն ցույց տվող մի քանի բառեր:
Քննենք այս խմբերը.

1. Առաջին խմբին պատկանող գոյականները սեռական-տրա-
կան հոլովներում ունեն ց հոլովիչը: Այս խմբի առանձնահատ-
կություններն են՝ ա) ուղղական հոլովում նրանք բառավորչում
ունեն ք, բ) հոլովումը հանդես է գալիս միայն հոգնակի թը-
վում: Հետևաբար սրանք անեզական գոյականներ կամ գոյականա-
բար գործածվող բառեր են, որոնք ցույց են տալիս խնամակցու-
թյուն, ազգակցություն, այսինքն՝ տոհմանուն, ցեղանուն, իսկ
որոշ բառեր էլ արտահայտում են միայն հավաքական իմաստ:

Նշված խումբը իր հերթին բաժանվում է երկու ենթախմբե-
րի.

Առաջին ենթախմբի բառերը ուղղական հոլովում ունեն ք
(ղըղէք, քէղացիք, բօլսէցիք), - դէք(ղաքըրդէք), -վըդէք

(ղավարդէք), և իք (մարթիք) վերջավորութիւնները: Այս բառերի ստական-տրական հոլովներում ուղղականի ք-ն փոխարինվում է ց-ով, իսկ ք-ից առաջ գտնվող ծայնավորներն էլ օ-ով: Նշված ենթաբաժնի բառերը գործածվում են միմիայն հավաքական իմաստ արտահայտելու համար: Ահա մի քանի օրինակներ ըստ վերջավորութիւնների:

Ք- բախանայք>բախանէք, բախանօց, բախանօսմէն, բախանօսմօք, աղայք>ղղէք, ղղօց, ղղօսմէն, ղղօսմօք, շանապարհ>չասփայք>չամփէք, չամփօց, չամփօսմէն, չամփօք (տես՝ 194), քէղացիք, քէղացօց, քէղացօսմէն, քէղացօք, բոլւէցիք, բոլւհցօց, բօլսէցօսմէն, բօլսէցօք, իզմիրցիք, իզմիրցօց, իզսիրցօսմէն, իզմիրցօք:

Այդպես են հոլովվում բնակութեան կամ ծննդյան վայրը ցույց տվող հավաքական տնտեսները՝ ղունէցիք, սուվասցիք, քախկըցիք, էրէվանցիք, արաբգիրցիք և այլն:

Դէք - կնիք>զընհիզ-զընհիզէք -զընդէք, զընդօց, զընդօսմէն, զընդօսմօք, այրիկ>մրիզ-մրիզէք, մրիզօց, մրիզօսմէն, մրիզօսմօք կամ մրիզօք, տայգը>ղաքըր, ղաքըրդէք, ղաքըրդօց, ղաքըրդօսմէն, ղաքըրդօք, ամու "հորեղբայր" -ամուդէք, ամուդօց, ամուդօսմէն, ամուդօք, քենի>քէնի-քէնիդէք, քէնիդօց, քէնիդօսմէն, քէնիդօք, ղրացի>թըրացին-թըրացինդէք, թըրացինդօց, թըրացինդօսմէն, թըրացինդօք, վրդէք - տալ-դալ - դալվրդէք, դալվրդօց, դալվրդօսմէն, դալվրդօք, էշ>էշ-էշվրդէք, էշվրդօց, էշվրդօցէն, էշվրդօք, քօյր>քօր-քուր-վրդէք, քուրվրդօց, քուրվրդօսմէն, քուրվրդօք:

Օրկրորդ ենթաբաժնին են պատկանում հավաքական իմաստ արտահայտող, ինչպես նաև ազգի, տոհմի տնտեսներ ցույց տվող այն բառերը, որոնք ունեն անք, դանք, օնք վերջավորութիւնները: Հոլովման ժամանակ ուղղական հոլովի ք-ն ստական հոլովում նույնպես փոխարինվում է ց-ով, սակայն, ի տարբերութիւն առաջին ենթաբաժնի, այստեղ ց-ից առաջ գտնվող ծայնավորները մնում են անփոփոխ: Այսպես՝

Անք - ձի>ցի-ցիյանք, ցիյանց, ցիյանցէն, ցիյանցօք, դա>թէվ-թիվանք, թիվանց, թիվանցէն, թիվանցօք, եղբայր>ախար-ախրըրանք, ախրըրանցէն, ախրըրանցմօք, ափա "եղբայր բառի փաղաքշական ձևը" -ափանք, ափանց,

ափանցմէն, ափանցմօք,

աւլ>դաւ-դաւանք, դաւանց, դաւանցմէն, դաւանցմօք,

քօյր>քօր-քուրանք, քուրանց, քուրանցմէն, քուրանցմօք:

Դանք-ոսկր>օսկօր-օսկըրդանք, օսկըրդանց, օսկըրդանցէն, օսկըրդանօք

կաոր>զըդօր զըդօրդանք, զըդօրդանց, զըդօրդանցէն, զըդօրդանօք,

փըսօր-փըսօրդանք, փըսօրդանց, փըսօրդանցէն, փըսօրդանցօք,

էնք- փիւօյէնք, փիւօյէնց, փիւօյէնցմէն, փիւօյէնցմօք,

փարսէղէնք, փարսէղէնց, փարսէղէնցմէն, փարսէղէնցմօք,

ամուլէնք, ամուլէնց, ամուլէնցմէն, ամուլէնցմօք,

հարսայէնք, հարսայէնց, հարսայէնցմէն, հարսայէնցմօք,

մամէնք, մամէնց, մամէնցմէն, մամէնցմօք,

բարէնք, բարէնց, բարէնցմէն, բարէնցմօք,

դադայէնք, դադայէնց, դադայէնցմէն, դադայէնցմօք,

Սնք- քնոսնք, քնոսնց, քնոսնցմէն, քնոսնցմօք, իընգաքարօնք,

իընքարարօնց, իընքարարօնցմէն, իընքարարօնցմօք,

թէրգօնք, թէրգօնց, թէրգօնցմէն, թէրգօնցմօք,

շաղօնք, շաղօնց, շաղօնցմէն, շաղօնցմօք:

212. Իացի ացիք, էցիք, ցիք, էնք, օնք ածանցներով կազմված հավաքական գոյականներից, ց հոլովման պատկանող մյուս բառերը, դիտվելով իբրև եզակի, հոգնակի են կազմում նէր հոգնակերաի միջոցով և հոլովվում օրինաչափորեն՝ ու հոլովմամբ: Օրինակ՝ դըդէքներ, դըդէքներու(ն), դըդէքներէն, դըդէքներօք, ցիյանքներ, ցիյանքներու(ն), ցիյանքներէն, ցիյանքներօք և այլն :

213. Ք-ով վերջացող մի շարք անեզական բառեր առանձին ոճերի և արտահայտութիւնների մեջ պահել են գրաբարյան հոլովածները: Նշենք մի քանի օրինակներ՝

աչք>աչից, հարսնիք-հարսնից, մէիկ-մէղաց, մօրուք-մօրվաց, շըլլիք-շըլլից, վարձք-վարձուց, վըլասկ-վըլացուց, տարիք-տարէց, ցառք-ցառաց, փաղնիք-փաղնից, օակ-օդաց և այլն:

Բաղանիք և հարսանիք բառերը գրաբարում սնթարկվում են ո-ա խառը հոլովման, ոտք բառը՝ ի պարզ հոլովման, սակայն բարբառում նրանք փոխել են իրանց հոլովումը՝ պահպանելով հոլովման գրաբարյան երանգը: Այսպես՝ ձտք-ձեռաց, ցառք-ցառաց

քառի համաքանությամբ ուր-ուրից բառն էլ դարձել է օտկ-օղաց (" օղաց ջամփա" արտահայտության մեջ):

Բաղանիք-քաղանեաց և հարսանիք-հարսանեաց բառերը աչք աչից, շլիիք-շլիից և նման այլ բառերի համաքանությամբ դարձել են փաղնիք-փաղնից և հարսնիք-հարսնից:

Մօրուք-մօրվաց հոլովածւը անփոփոխ գալիս է գրաբարից, քանի որ ա-ից առաջ ու-ն փոխվում է վ-ի (տես՝ 47) ուստի՝ մօ-րուաց-մօրվաց:

ԵԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- Գրաբարատիպ հոլովման շարքն է դասվում նաև օր քառի սեռական հոլովի աւուր հոլովածւը, որը գործածվում է առանձին ոճերի մեջ՝ " իրէք ավուր ջամփան", " հինգ ավուր հաց" և այլն:

214. Երկրորդ խմբին են պատկանում այն գոյականները, որոնք արտահայտում են տեղանուններ, հատկապես սրբավայրերի, վանքերի անունները: Այս գոյականները սեռական-տրական հոլովներում ունեն և հոլովիչը, որն ավելանում է բառահիմքի վրա: Մյուս հոլովների՝ քացառականի և գործիականի կազմությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով: Այդ հոլովման են պատկանում Ասվածածին, Սուրբ Թորոս (Զրէթորոս), Անարծաթ իրժիշկ, Լուսավօրիչ, Բաբուխտի, Արֆին, Փըրզիչ և այլ բառեր՝ բոլորն էլ՝ սրբավայրերի անուններ:

Ահա հոլովման ընդհանուր պատկերը.

Ուղղ.-հայց.	Ասվածածին(ը)	Լուսավօրիչ(ր)
Սեռ.տրակ	Ասվածածնա(ն)	Լուսավօրչա
Բազ.	Ասվածածնէն	Լուսավօրչէն
Գործ.	Ասվածածնօք	Լուսավօրչօք

Հոլովումը կազմվել է գրաբարի ա վերջադրական հոլովման համաքանությամբ : Սակայն եթե գրաբարում այդ հոլովմանը են թարկվում են մարդկանց հատուկ անունները, ապա քարքառում այդ հոլովումը պահպանվել է միմիայն կրոնական իմաստով գործածվող հատուկ անունների, այսինքն սրբավայրերի անունների հոլովման ժամանակ: Ըստ սրբություն ժամերգությունների կամ կրոնական ծեսերի ժամանակ լսվող հոլովածւն է անցել բարբառ Այսպես . Թորոս անունը որպես մարդու՝ մահկանացուի անուն, ենթարկվում է ի հոլովման՝ Թորոսի, Թորոսէն և այլն: Իսկ

Թորոսա հոլովածւոյ գործածական է որպէս վանքի անուն, այն էլ սուրհ բառի հարադրութեամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - "Սուրհ Թորոս" կապակցութեան մեջ սուրհ բառից մնացել են միայն ս և փ հնչյունները: Ս-ն էլ ձայնեղացել, դարձել է զ: Սրանք էլ կցվել են Թորոս բառին: Այսպիսով այդ վանքի անունը դարձել է Ջրփթորոսա վանք):

215. Մալաթիայի բարբառն ունի հոլովման կանոնավոր և կուռ սիստեմ: Հոլովումների տարբերությունն ի հայտ է գալիս եզակի թվի սեռական հոլովում: Բոլոր գոյականները և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը պատկանում են հոլովումներից որևէ մեկին: Որոշ բառերում նկատվող հոլովման կրկնաձևավորությունը գրական լեզվի կամ այլ բարբառների ազդեցության արդյունք է (դունի-դան, շունի -շան և այլն): Եզակի թվի բացառական, գործիական և հոգնակի թվի բոլոր թեք հոլովների վերջավորությունները ընդհանուր են բարբառում: Ձկան զարաուդի կամ անկանոն կոչված հոլովումներ, եթե նկատի չունենանք գրաբարտիպ հոլովման պատկանող բառերը, որոնք դիտվում են իբրև գրաբարյան վերապրուկ և գործածական են առանձին արտահայտությունների մեջ կամ էլ հավաքական իմաստ են արտահայտում:

ի-ն բարբառի ամենատարածված ու ամենագործուն հոլովումն է, որն իր ազդեցությանն է ենթարկել նաև այլ հոլովումների պատկանող շատ բառեր (ընկեր, աղջիկ և այլն), ինչպես նաև փոխառյալ բառերի զգալի մասը:

Հատկանշական է բարբառի գործիական հոլովի օք վերջավորությունը, որը կազմվելով գրաբարի հոգնակի թվի գործիականի մի բանի հոլովածւոյ օրինակով՝ համաբանութեամբ ծավալվել և ընդհանրացել է բոլոր գոյականների և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերի վրա:

ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

216. Որական անվաններն ունեն համեմատության ցրեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական:

217. Անվանի դրական աստիճանն ընդհանուր է հայերենի դրական աստիճանի հետ. Օրինակ՝ մանձ դըղա, սիվ քօն "սև գույն" արգէգ մարթ, գանանչ դէրէվ և այլն:

218. Բաղդատական աստիճանը կազմվում է մի բանի եղանակներով

ա) Գործածվում է դրական աստիճանը բացառական խնդրով, որ ընդունում է համեմատվող առարկան. օրինակ՝

Ան չաղան ան չաղայեն մանձ է:

Ան ախիներ մէգալէն աղգէգ է:

բ) Համեմատությունը կատարվում է քէնց, քէնց թէ շաղկապ- ներով: Համեմատվող առարկան այդ դեպքում դրվում է ուղղական. հոլովով:

Սուրէնը խէլօք է, քէնց Ազօն:

Դանձը ձանդըր է, քէնց ձառը:

Փօրըս մօղ է, քէնց քօրըս:

գ) Իմաստի սաստկությունն ցույց տալու համար գործ է ածվում թուրքերեն "դահա" (ափսի) մակբայը:

"Մանձ դըղաս դահա աղգէգ զարթա յա", կամ "Մանձ դըղաս քըզդիգ դըղայէս դահա աղգէգ զարթա յա":

դ) Բաղդատական աստիճանը կազմվում է նաև զէգ, զազ մաս- նիկներով, որոնք ավելացվում են ածականի դրական աստիճանի վրա.

Օրինակ՝ մէզզազ, հաստգէգ, խօշօրգէգ, լանգէգ, զարջգէգ, նէդգէգ և այլն:

219. Գերադրական աստիճանը կազմվում է ածականի դրական աստիճանի և ամմէնէն (ամմէնքէն) բառի հարադրությամբ: Սա ամմէնը (ամմէնքը) որոշյալ դերանվան բացառական հոլովածան է. Օրինակ՝ ամմէնէն մանձը, ամմէնքէն քէշը, ամմէնէն քախցըր փա- նը և այլն:

220. Մի խումբ ածականներ գերադրական աստիճան են կազմում նախամասնիկներով: Նրանք ունեն հետևյալ կազմությունը: 2այ- նավորով սկսվող ածականների նախամասնիկները կազմվում են երկ- կու հնչյուններից, որոնցից առաջինը ածականի բառասկզբի ձայ- նավորն է, իսկ երկրորդը ս, մ կամ փ հնչյուններից մեկն է, որը հանդես է գալիս որպես վանկափակ (ափ-աղգէգ): Բաղաձայնով սկսվող ածականների գերադրական աստիճանը կազմվում է այդ ա- ծականների առաջին երկու հնչյուններից, որից հետո, որպես վանկափակ, օգտագործվում է ս, մ կամ փ հնչյուններից որևէ մեկը: Այս կրկնվում է ածականի դրական աստիճանը (զաս-զարուդ): Իսկ թե որ ածականներն ինչպիսի վանկափակ հնչյուններ ունեն, դրժ- վար է ասել, քանի որ որաշակի օրինաչափություններ չկան: Այդ

հնչյունների ընտրութիւնը հաճանքար կապ ունի բարեհնչյուն-
նութեան հետ: Գերադրական աստիճան ունեցող ածականների նա-
խամասնիկավոր կազմութեան այդ ձևը սկզբում հատուկ էր գույն
ցույց տվող ածականներին, սակայն համաքանութեամբ այն տա-
րածվել է նաև այլ ածականների վրա:

Ստորև տալիս ենք այդպիսի օրինակներ ըստ նշված վանկա-
փակ հնչյունների.

փ	ս	մ
ափ-աղգէզ	զաս-զաքուզ	թամ-թաց
զափ-զանանչ	զաս-զարմիր	չօմ-չօր
էփ-էրզան	դաս-դափազ	թամ-թաժա
զափ զարչ	զըս-զըլօր	
թէփ-թէղին	մըս-մընազ	
լէփ-լէցուն	փաս-փարազ	
լօփ-լօս		
նէփ-նէղ		
նօփ-նօր		
շիփ-շիղազ		
ջէփ-ջէրմազ		
սիփ-սիվ		
հափ-հաստ		

Ածականի գերադրական աստիճանի նախամասնիկավոր կազմու-
թեան այսպիսի ձև գոյութիւն ունի Պոլսի, Նոր-Նախիջևանի,
հնչպես նաև Կիլիկիայի և Անտիոքի շրջանների բարբառներում:
Սակայն շատ ընդհանրութիւնների հետ մեկտեղ հիշյալ բարբառ-
ներում և Մալաթիայում կան զգալի տարբերութիւններ: Այդ տար-
բերութիւնները նկատվում են վանկափակ հնչյունների ընտրու-
թեան ժամանակ: Այսպես՝

Պոլիս՝ թափ-թաց, չօփ-չօր:

Մալաթիա՝ թամ-թաց, չօմ-չօր:

Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

221. Բարբառի քանակական թվականներն են՝

1 մէզ 3 իրէք

2 էրզու(էրզուք) 4 չօրս

5 հինգ	11 դասնըմէգ	20 քըսան
6 վէց(յաց) ¹	12 դասվէրգու	30 առսուն
7 յօթը	13 դասվիրէք	40 քառսուն
8 ութը	14 դասնըչօրս	50 հիցծուն
9 իննը	15 դասնըհինգ	60 վացծուն
10 դասը	16 դասնըվէց	70 յէթմիշ
	17 դասնըյօթ	80 սաքսան
	18 դասնըւթ	90 դօխսան
	19 դասնէվիննը	100 հարիր
		1000 հազար

222. Բոլոր բաղադրյալ թվականները՝ սկսած 11-ից, կազմվում են կցական սիստեմով: Նախ՝ դրվում է տասնավորը, ապա՝ միավորը, որն անփոփոխ կցվում է տասնավորին: Տասնավորները սաանում են ը հոդը, իսկ տասն>դասը թվականն էլ՝ ն հանգը և ը հոդը. Օրինակ՝ դասնըվէց, քըսանըչօրս, վաթծունութը և այլն :

223. Տասնավորները ը հոդ չեն սաանում երկու>էրգու, երեք>իրէք թվականների հետ բաղադրվելիս, իսկ տասն>դասը թվականն էլ զրկվում է ն հանգից և ը հոդից: Տասնավորի և այդ թվականների միջև դրվում է և > էվ շաղկապը, որի ե > է-ն սղվում է բառամիջում գտնված դիրքի պատճառով, և մնում է միայն վ-ն. օրինակ՝

դասվէրգու, դասվիրէք, քըսանվէրգու, քըսանվիրէք, առսունվէրգու, դօխսանվիրէք և այլն:

224. Հարյուրավորները կազմվում են միավորի և հարիւր>հարիր բառի հարադրությամբ՝ էրգու հարիր, իրէք հարիր, ութի հարիր և այլն, կամ էլ հարյուրավորի, տասնավորի և միավորի հարադիր բարդությամբ՝ էրգու հարիր քսանութը, իրէք հարիր վացծունչօրս և այլն: Հարիրը և հազարը միավորին և տասնավորին միանում են առանց հոդակապի: Երկու>էրգու և երեք>իրէք թվականները այս դեպքում ևս ունենում են և շաղկապի ե > է ձայնավորի կրճատումից մնացած վ-ն: Օրինակ՝ հարիր վէրգու, հարիրվիրէք, հազարվիրէք, հարիր քըսան, էրգու հարիր է. "Յաց" հին ձևն է, որը հետագայում տեղի տվեց վէց թվականին: Սակայն վաթսուն թվականի հետ դեռևս բաղադրվում է յաց, վացծուն յաց(66): Յաց ձևն Օգտագործվում է նաև յաց հեղ յաց առսուն յաց "վեց անգամ վեց-երեսունվեց" արտահայտությամբ մեջ: Մնացած դեպքերում Օգտագործվում է նոր ձևը՝ վի:

առսուև վերգու և այլն:

225. Բաղադրյալ թվականների երկրորդ և երրորդ վանկերի ա, ժ, է ձայնավորները բաղադրիչների անկախ գիտակցման անհրաժեշտությամբ չեն սղվում կամ հնչյունափոխվում ը-ի:

226. Քանակական թվականները գոյականաբար գործածվելիս ստանում են որոշյալ ը հոդ և ենթարկվում ի հոլովման: Բաղադրյալ թվականների առաջին բաղադրիչը մնում է անփոփոխ, և հոլովվում է միայն երկրորդ բաղադրիչը: Այսպես՝
ուղղ. հայց. մեզը երգուքը իրեքը չօրսը հինգը վեցը հարիւր վեցը

սեռ. արակ. մեզին երգուքին իրեքին չօրսին վեցին հարիւր վեցին

բաց. մեզեն երգուքեն իրեքեն չօրսեն հինգեն վեցեն, հարիւր վեցեն

գործ. մեզօք երգուքօք իրեքօք չօրսօք հինգօք վեցօք հարիւր վեցօք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- Երկու, երգու թվականը գոյականաբար գործածվելիս ստանում է ք հոգնակերադ և ը որոշյալ հոդը: Այդ ք-ն պահպանվում է նաև առանձինների և հարյուրավորների հետ երկու թվականի բաղադրության, ինչպես նաև չափական և բաշխական թվականների կազմության մեջ՝ դաս վերգուքը, քրսանվերգուքը, հարիւր վերգուքը, երգուքնօց, երգուքազան և այլն:

227. Քանակական թվականները կարող են գոյականաբար գործածվել նաև հոգնակի թվում, ըստ որում միավանկ բառերի համար նրանք ստանում են էր, իսկ քազմավանկների համար՝ նէր հոգնակերադը: Այս դեպքում նրանք հոլովվում են ու հոլովմամբ: Օրինակ՝

ուղղ. հայց. հինգերը իրեքները

սեռ. արակ. հինգերուն իրեքներուն

բաց. հինգերեն իրեքներեն

գործ. հինգերօք իրեքներօք :

228. Դասական թվականները կազմվում են քանակական թվականներից-էրրօրթ վերջավորության կցմամբ: Բացառություին է կազմում առաջին-առաջին թվականը: Յօթը, ութը, իննը թվականները զրկվում են ը հոդից, ապա կցում -էրրօրթ:

էրգու և իրէք թվականների դասականների կազմությունը
ընդհանուր հիմունքով է: Այսպես՝

Առչին

էրգուէրրորթ

իրէքէրրորթ

չօրսէրրորթ

հինգէրրորթ

վէցէրրորթ

յօթէրրորթ

ութէրրորթ

իննէրրորթ

դասնէրրորթ

դասնըմէգէրրորթ

դասվէրգուէրրորթ

քըսանէրրորթ

առսունէրրորթ

հիցծունէրրորթ

հիցծունութէրրորթ

վացծունվէրգուէրրորթ

հարիրէրրորթ

հազարէրրորթ

229. Բաշխական թվականները կազմվում են քանակականնե-
րի կրկնությամբ կամ ական, ազան մասնիկի կցմամբ. այսպես՝

մէգ-մէգ

էրգուք-էրգուք

իրէք-իրէք

չօրս-չօրս

յօթ-յօթ

ութ-ութ

իննը-իննը

դասը-դասը

մէգազան

էրգուքազան

իրէքազան

չօրսազան

յօթնազան

ութնազան

իննազան

դասնազան

Ը հանգով վերջացող թվականները ազան մասնիկով բաշ-
խական կազմելիս ա ձայնավորից առաջ ը-ն փոխարինում են
ն-ով (յօթնազան, ութնազան, դասնազան):

230. Զափական թվականները կազմվում են քանակականներին
ավելացնելով նօց վերջավորությունը:

Ը հոդով վերջացող յօթը, ութը, իննը, ինչպես նաև
դասը թվականները այս դեպքում զրկվում են հոդից. այսպես՝
մէգնօց, էրգուքնօց, իրէքնօց, վէցնօց, յօթնօց, ութնօց,
քսաննօց, հարիրնօց և այլն:

231. Բաշխական թվականները սովորաբար մակբայական կիրա-
ռություն ունեն, ուստի չեն հոլովվում, իսկ դասական և շա-
փական թվականները գոյականաբար զործածվելիս հոլովվում են
ի հոլովմամբ:

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

232. Բարբառի անձնական դերանուններն են՝ իս, թօն, ան, անի, հինքը, միք, թօք, հրոէնք, անօնք:

Նրանք հոլովվում են հետևյալ կերպ.

Ե զ ա կ ի

ուղղ. իս	թօն	ան	հինքը
սեռ. իմ	քու	անուր	հրոէն
տրակ. ինձ(ընծի)	քեզ(քզգի)	անուր	հրոէն
հայց. ինձ(ընծի),	քեզ(քզգի)	ան	հինքը
բաց. ինձմէն	քեզմէն	անուրմէն	հրոէնմէն
	քզմէն	անզի	հրոմէն
գործ. ըզմօք	քզմօք	անուրմօք	հրոէնմօք
	իզմօք	անօք	հրոմօք

Հ ո գ ն ա կ ի

ուղղ. միք	թօք	անօնք	հրոէնք
սեռ. միւր	ցէր	անօնց	հրոէնց
տր. մէզ, մըզի	ցէզ, ցըզի	անօնց	հրոէնց
հայց. մէզ(մըզի)	ցէզ(ցըզի)	անօնք	հրոէնք
բաց. մէզմէն	ցըզմէն	անօնցմէն	հրոէնցմէն
գործ. մըզմօք	ցըզմօք	անօնքօք	հրոէնքօք

238. Երրորդ դեմքի հինքը դերանվան կրկնությամբ կազմվում են անձնական դերանունների հետևյալ ձևերը՝ հընքը-զինքըս, հընքըզինքըդ, հընքըզինքը: Ա, դ և ը դիմորոշ հոգերի միջոցով այդ դերանունները դառնում են առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի դերանուններ:

Նրանք կազմվում են հետևյալ ձևով՝

Երկու բաղադրիչների միջև ընկնում է գրաբարյան զ նախդիրը, իսկ առաջին բաղադրիչի ի-ն հնչյունափոխվում է ը-ի: Այդ դերանուններն առանց հոգերի չեն գործածվում: Եզակի թվում նրանք հոլովվում են ի, իսկ հոգնակի թվում՝ ու հոլովմամբ: Նրանց հոգնակին կազմվում է նի հոգնակերաի միջոցով:

ՀԱՆՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Ե զ ա կ ի

ուղղ.	հընքըզինքըս	հընքըզինքըդ	հընքըզինքը
սեռ.	հընքըզինքիս	հընքըզինքիդ	հընքըզինքին
տր.	հընքըզինքիս	հընքըզինքիդ	հընքըզինքին
հայց.	հընքըզինքըս	հընքըզինքըդ	հընքըզինքը
բազ.	հընքըզինքէս	հընքըզինքէդ	հընքըզինքէն
զործ.	հընքըզինքօքըս	հընքըզինքօքըդ	հընքըզինքօքը

Հ ո գ ն ա կ ի

ուղղ.	հընքըզինքնիս	հընքըզինքնիդ	հընքըզինքնին
սեռ.	հընքըզինքնուս	հընքըզինքնուդ	հընքըզինքնուն
տր.	հընքըզինքնուս	հընքըզինքնուդ	հընքըզինքնուն
հայց.	հընքըզինքնիս	հընքըզինքնիդ	հընքըզինքնին
բազ.	հընքըզինքնէս	հընքըզինքնէդ	հընքըզինքնէն
զործ.	հընքըզինքօքնիս	հընքըզինքօքնիդ	հընքըզինքօքնին

234. Բարբառի ցուցական դերանուններն են՝

Ե զ ա կ ի			Հ ո գ ն ա կ ի		
մս	մդ	մն	մսօնք	մդօնք	մնօնք
մսի	մդի	մնի	սըվօնք	դըվօնք	նըվօնք
սա	դա	նա	սըվանք	դըվանք	նըվանք
սըվի դըվի նըվի					
սըվիգի դըվիգի նըվիգի					

235. Սա, դա, նա, մսի, մդի, մնի և սըվիգի, դըվիգի, նըվիգի ցուցականները չեն հոլովվում: Մյուս ցուցականների հոլովումն ունի հետևյալ պատկերը.

Ե զ ա կ ի						
ուղղ.	մս	մդ	մն	սըվի	դըվի	նըվի
սեռ.	մսուր	մդուր	մնուր	սըվար	դըվար	նըվար
տր.	մսուր	մդուր	մնուր	սըվար	դըվար	նըվար
հայց.	մս	մդ	մն	սըվի	դըվի	նըվի
բազ.	մսուրմէ,	մդուրմէ,	մնուրմէ,	սըվարմէ,	դըվարմէ,	նըվարմէ
	ասկի	ադգի	անգի			

գործ. ասուլիս, անուշիկ, անուշիկ, սրվարմոք, դրվարմոք,
նրվարմոք

Հ ո գ ն ա կ ի

ուղղ. հայց.	անունք	անունք	անունք
սեռ. տրակ.	անունք	անունք	անունք
բաց.	անունքմէն	անունքմէն	անունքմէն
գործ.	անունքմօք	անունքմօք	անունքմօք

ուղղ. հայց.	սրվունք	դրվունք	նրվունք
սեռ. տրակ.	սրվունք	դրվունք	նրվունք
բաց.	սրվունքմէն	դրվունքմէն	նրվունքմէն
գործ.	սրվունքմօք	դրվունքմօք	նրվունքմօք

ուղղ. հայց.	սրվանք	դրվանք	նրվանք
սեռ. տրակ.	սրվանք	դրվանք	նրվանք
բաց.	սրվանքմէն	դրվանքմէն	նրվանքմէն
գործ.	սրվանքմօք	դրվանքմօք	նրվանքմօք

236. Գոյականների հետ իրեն որոշիչ գործածվելիս ցուցա-
կան դերանունները չեն հոլովվում: Նրանք հոլովվում են դե-
րանվանական գործածության ժամանակ: Ասի, անի, անի, սրվի,
դրվի, նրվի, սրվիզի, դրվիզի, նրվիզի ցուցականները գործած-
վում են միայն իրեն դերանուն:

237. Ցուցական դերանունների հիմնական շարքերն են՝ սա,
դա, նա և ան, ան, ան: Մնացածներն ածանցյալ են և կազմվում
են այս նրկու շարքերից իկչից մասնիկի հավելմամբ:

Այսպես՝ ան, ան, ան դերանուններին հավելելով իզ, ըս-
տացվում է անիզ, անիզ, անիզ, ապա կրճատվում է վերջին զ-ն,
և ստացվում է անի, անի, անի շարքը:

Սա, դա, նա դերանուններին հավելելով իզ մասնիկը և կրճ-
ատելով վերջին զ-ն՝ ստացվում է ցուցականների մի նոր շարք:
Սակայն այստեղ տալի են ունենում հնչյունական հետևյալ իրո-
թությունները՝

ա) Դերանունների ա ձայնավորը հնչյունափոխվում է ը-ի:
բ) Սա, դա, նա-ն միանում են իզ մասնիկի հետ և չեն շաղ-
կապի միջոցով. քանի որ շաղկապի է ձայնավորը գտնվում է բազ-
մավանկ բառերի միջին դիրքում, ապա այն սղվում է, և այսպիսով
այդ շաղկապից մնում է միայն վ-ն:

1. Հ. Աճառյան, Քննություն Դոկտի բարբառի, 1941, էջ 185:

բոլոր դեմքերինը՝ ը:

Բացի այդ, եզակի թվի առաջին և երկրորդ դասքի դերանունները ին մասնիկի հավելմամբ ունենում են հոլովման կրկնակի ձև:

ՀՈԼՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՏԵՐԸ

Ե զ ա կ ի

ուղղ. հայց.	իմըս	իմինըս	քուվըդ	քուվինըդ
սեռ. արակ.	(իմիս)	իմունուս	(քուվիդ)	քուվինուդ
բաց.	(իմէսմէ)	իմունուսմէ	(քուվէդմէ)	քուվինուդսէ
զործ.	(իմօքըս)	իմինօքըս	(քուվօքըդ)	քուվինօքըդ
ուղղ. հայց.	հրաէնինը	անուրը		
սեռ. արակ.	հրաէնինուս	անուրին		
բաց.	հրաէնինէն	անուրէն		
զործ.	հրաէնինօք	անուրօք		

ուղղ. հայց.	միրը	միրինը	ցերը	ցերինը
սեռ. արակ.	(միրին)	միրինուս	(ցերին)	ցերինուս
բաց.	(միրէն)	միրինէսմէ	(ցերէն)	ցերինուսմէ
զործ.	(միրօք)	միրինօք	(ցերօք)	ցերինօք

ուղղ. հայց.	հրաէնցինը	անօնցինը
սեռ. արակ.	հրաէնցինուս	անօնցինուս
բաց.	հրաէնցինէսմէ	անօնցինէսմէ
զործ.	հրաէնցինօք	անօնցինօք

Հ ո զ ն ա կ ի

ուղղ. հայց.	իմիններըս	քուվիններըդ
սեռ. արակ.	իմիններուս	քուվիններուդ
բաց.	իմիններէս	քուվիններէդ
զործ.	իմիններօքըս	քուվիններօքըդ
ուղղ. հայց.	հրաէնինները	անուրները
սեռ. արակ.	հրաէնիններուս	անուրներուս
բաց.	հրաէնիններէն	անուրներէն
զործ.	հրաէնիններօք	անուրներօք

ուղղ. հայց.	միջոցները	ցերինները
սեռ. տրակ.	միջոցներուն	ցերիններուն
բաց.	միջոցներէն	ցերիններէն
գործ.	միջոցներօք	ցերիններօք

ուղղ. հայց.	հրդեհները	անօնները
սեռ. տրակ.	հրդեհներուն	անօններուն
բաց.	հրդեհներէն	անօններէն
գործ.	հրդեհներօք	անօններօք

ԵԱՆՈՒՅՈՒԹՅՈՒՆ - Փակագծերի մեջ նշված ձևերը քիչ զործածական են:

240. Ստացական դերանունների փոխարեն կարող են գործածվել նաև ստացական հոդ ունեցող գոյականները:

Ստացական հոդերն են՝ առաջին դեմքի համար ս, ըս, երկրորդ դեմքի համար՝ դ, ըդ, իսկ երրորդ դեմքի համար ը (բաղաձայնափոխ բառերում) և ն (ձայնավորափոխ բառերում): Օրինակ՝ քիրքըս, մաղնիս, քիրքըդ, մաղնիդ, քիրքը, մաղնին:

241. Եթե եզակի ստացականի փոխարեն հոդ ստացող գոյականը հոգնակի է, այդ գոյականի ուղղականին ավելանում է էր կամ նէր հոգնակերադ և ապա՝ ըս, ըդ, ըն հոդերը. Օրինակ՝

մաղնիներըս - " իմ մտանիններս "

մաղնիներդ - " քո մտանիններդ "

մաղնիները - " նրա կամ իր մտանինները "

հացերըս - " իմ հացերը "

հացերդ - " քո հացերը "

հացերը - " նրա կամ իր հացերը " :

Եթե հոգնակի ստացականի փոխարեն հոդ ստացող գոյականը եզակի է, ապա գոյականի ուղղականին ավելացող հոդերը դառնում են նիս, նիդ, նին: Օրինակ՝

մաղնինիս քինինիս - " մեր մտանին, մեր գինին "

մաղնինիդ քինինիդ - " ձեր մտանին, ձեր գինին "

մաղնինին քինինին - " նրանց կամ իրենց մտանին, գինին " :

Միավանկ գոյականները այս դեպքում առանձին ձև չունեն։ Նրանք գործածվում են հոդ ստացող հոգնակի գոյականի համար քր-նորոք ձևով:

ակ Երբ հոգնակի ստացականի փոխարեն հող ստացող զոյականն էլ է հոգնակի, ապա նիս, նիդ, նին հողերից առաջ զոյականը ստանում է էր կամ նէր հոգնակներտերը: Միավանկ զոյականները ստանում են նաև հոգնակի ստացականի փոխարեն հող ստացող Ե-զակի զոյականի իմաստը. Օրինակ՝

հացէրնիս - "մեր հացը կամ մեր հացերը",

հացէրնիդ - "ձեր հացը կամ ձեր հացերը":

հացէրնին - "նրանց հացը կամ նրանց հացերը"

քինինէրնիս - մաղնինէրնիս՝ մեր գինիները, մեր մառանի-
ները",

քինինէրնիդ, մաղնինէրնիդ - "ձեր գինիները, ձեր մառանի-
ները"

քինինէրնին, մաղնինէրնին - նրանց կամ իրենց գինիները,
նրանց կամ իրենց մառանինները":

Այսպիսով կուենանք հետևյալ պատկերը.

Մաղնիս, մաղնիդ, մաղնին - իմ, քո, նրա մառանին

հացըս, հացըդ, հացը - իմ քո, նրա հացը,

մաղնինէրնիս, մաղնինէրնիդ, մաղնինէրնին - իմ, քո, նրա մառանի-
ները,

հացէրնիս, հացէրնիդ, հացէրնին - իմ, քո նրա հացերը

մաղնինիս, մաղնինիդ, մաղնինին - մեր, ձեր, նրանց մառանին

մաղնինէրնիս, մաղնինէրնիդ, մաղնինէրնին - մեր, ձեր, նրանց
մառանինները,

հացէրնիս, հացէրնիդ, հացէրնին - մեր հացը, կամ մեր հացերը,

ձեր հացը, կամ ձեր հացերը, նրանց հացը, կամ նրանց հացերը:

242. Մարմնի զույգ անդամներ ցույց տվող այն զոյական-
ները, որոնք հոգնակի են կազմում վրնէր մասնիկի միջոցով,
ուենն հետևյալ ձևերը.

ցառքըս, ցառքըդ, ցառքը - իմ, քո, նրա ձեռքը

ցառքէրնիս, ցառքէրնիդ, ցառքէրնին - իմ, քո, նրա ձեռքերը

ցառվընիս, ցառվընիդ, ցառվընին - կամ ցառքվընիս, ցառքվընիդ,

ցառքվընին - մեր ձեռքը, ձեր ձեռքը, նրանց ձեռքը.

ցառքվընէրնիս, ցառքվընէրնիդ, ցառքվընէրնին կամ ցառվընէր-
նիս

ցառվընէրնիդ, ցառվընէրնին - մեր ձեռքերը, ձեր ձեռքերը, նրանց
ձեռքերը": Նույն ձևով էլ կազմվում են աշվընիս, աշվընէրնիս,

ճուղակներնիս, ճուղակներնիս և այլ ձևեր:

249. Ստացական հոդ ստացող գոյականները հոլովվում են ի կամ ու հոլովմամբ. օրինակ՝

Ե զ ա կ ի

ուղղ. հայց.	քիրքըս,	քիրքըդ	քիրքը
սեռ. տրակ.	քիրքիս,	քիրքիդ,	քիրքին
բաց.	քիրքէս,	քիրքէդ,	քիրքէն
զործ.	քիրքօքըս,	քիրքօքըդ,	քիրքօքը

ուղղ. հայց.	մաղնիս	մաղնիդ	մաղնին
սեռ. տրակ.	մաղնիիս	մաղնիիդ	մաղնիին
	մաղնուս	մաղնուդ	մաղնուն
բաց.	մաղնէս	մաղնէդ	մաղնէն
զործ.	մաղնօքըս	մաղնօքըդ	մաղնօքը

Հ ո գ ն ա կ ի

ուղղ. հայց.	քիրքէրըս	քիրքէրդ	քիրքէրը
սեռ. տրակ.	քիրքէրուս	քիրքէրուդ	քիրքէրուն
բաց.	քիրքէրէս	քիրքէրէդ	քիրքէրէն
զործ.	քիրքէրօքըս	քիրքէրօքըդ	քիրքէրօքը

ուղղ. հայց.	մաղնինէրըս	մաղնինէրդ	մաղնինէրը
սեռ. տրակ.	մաղնինէրուս	մաղնինէրուդ	մաղնինէրուն
բաց.	մաղնինէրէս	մաղնինէրէդ	մաղնինէրէն
զործ.	մաղնինէրօքըս	մաղնինէրօքըդ	մաղնինէրօքը

ուղղ. հայց.	մաղնինիս	մաղնինիդ	մաղնինին
սեռ. տրակ.	մաղնինուս	մաղնինուդ	մաղնինուն
բաց.	մաղնինէս	մաղնինէդ	մաղնինէն
զործ.	մաղնինօքըս	մաղնինօքըդ	մաղնինօքը

ուղղ. հայց.	մաղնինէրնիս	հացէրնիս	քիրքէրնիս
սեռ. տրակ.	մաղնինէրնուս	հացէրնուս	քիրքէրնուս
բաց.	մաղնինէրնէս	հացէրնէս	քիրքէրնէս
զործ.	մաղնինէրնօքըս	հացօքնիս	քիրքօքնիս

հացէրօքնիս քիրքէրօքնիս:

ԵԱՆՈՅՈՒԹՅՈՒՆ. - Ինչպես նշեցինք, հոգնակի ստացականի փոխարեն հոդ ստացող եզակի գոյականները հատուկ ձև չունեն:

լով՝ գործածվում են հոգնակի գոյականների ձևերով. հացերնիս նշանակում է " մեր հացը կամ մեր հացերը": Սակայն գործիականությունը տարբերակվում են երկու ձևերը. այսպես՝ հացօրնիս նշանակում է " մեր հացով", իսկ հացերօրնիս՝ "մեր հացերով":

244. Փոխադարձ դերանուններն են՝, հըրար(հըրարու), մէզըզ-մէզ և մէզմէզու: Հոլովվում են ու հոլովմամբ:

սեռ. հըրար(հըրարու)	մէզըզմէզ(ու)	մէզմէզու
տարկ. հըրար(հըրարու)	մէզըզմէզ(ու)	մէզմէզու
հայց. հըրար(հըրարու)	մէզըզմէզ(ու)	մէզմէզու
բաց. հըրարմէն	մէզըզմէզէն	մէզմէզէն
գործ. հըրարմօք	մէզըզմէզօք	մէզմէզօք

245. Հարցական դերանուններն են վա՞վ, "ո՞վ", ի՞նչ, քանի՞, հօ՞ր "ուր", վա՞ր, հումէ՞նք, հօսդէ՞ղ, հօդդէ՞ղ, հօնդէ՞ղ, իշքա՞ն. սրանց հոլովման մասին տես ստորև:

246. Հարաբերական դերանուններն են . վա՞վ, ինչ, հօր, իշքան, քանի, վար: Հարցական և հարաբերական դերանունները հոլովվում են միևնույն ձևով.

Ե զ ա կ ի			Հ ո գ ն ա կ ի
ուղղ.	վա՞վ	վար	հումէնք
սեռ.	հում	վարուն	հումէնց
տրակ.	հում	վարուն	հումէնց
հայց.	հում	վարուն	հումէնց
բաց.	հումմէն	վարունէն	հումէնցսէն
գործ.	հումմօք	վարունօք	հումէնցմօք

Ե զ ա կ ի			հ ո գ ն ա կ ի
ուղղ. հայց.	ինչ	քանի	ընչէրը քանինէրը
սեռ. տրակ.	ընչի	քանիսի	ընչէրուն քանինէրուն
բաց.	ընչէն	քանիսէն	ընչէրէն քանինէրէն
գործ.	ընչօք	քանիսօք	ընչէրօք քանինէրօք

Հօսդէղ, հօդդէղ, հօնդէղ հոլովվում են միայն սգապի թվով, ինտայալ կերպ՝

ուղղ. հայց.	հօսդէղ	հօդդէղ	հօնդէղ
սեռ. տրակ.	հօսդէղիս	հօդդէղին	հօնդէղին

բաց.	հօսդէդէն	հօդդէդէն	հօնդէդէն
զործ.	հօսդէդօք	հօդդէդօք	հօնդէդօք

Իշքան հոլովվում է քանի-ի նսան, իսկ հօր չի հոլովվում

247. Որոշյալ դարանուններն սն ամէն(ը), ամէնքը, փօլօր(ը), ամէն մէզը.

ուղղ.հայց.	ամէն(ը)	ամէնքը
սեռ.արակ.	ամէնուն	ամէնքուն
բաց.	ամէնէն	ամէնքէն
զործ.	ամէնօք	ամէնքօք

ուղղ.հայց.	փօլօր(ը)	ամէն մէզը
սեռ.արակ.	փօլօրին	ամէն մէզուն
բաց.	փօլօրէն	ամէն մէզէն
զործ.	փօլօրօք	ամէն մէզօք

248. Անորոշ դարանուններն են՝ մէզը, մէզն ու մէզը, մէզալը, քանի մը, մէզ քանի, վար մէզը. մէզը, մէզն ու մէզը, վար մէզը դարանունների մեջ հոլովվում է միայն մէզը. այսպես.

ուղղ.հայց.	մէզը	վար մէզը	մէզն ու մէզը
սեռ.արակ.	մէզուն	վար մէզուն	մէզն ու մէզուն
բաց.	մէզէն	վար մէզէն	մէզն ու մէզէն
զործ.	մէզօք	վար մէզօք	մէզն ու մէզօք

Քանի մը, մէզ քանի դարանունները հոլովվում են միասեռակ, ըստ որում հոլովվում է միայն քանի-ն.

	Ե զ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
ուղղ.հայց.	մէզ քանի	մէզ քանինէրը
սեռ.արակ.	մէզ քանիին	մէզ քանինէրուն
բաց.	մէզ քանիյէն	մէզ քանինէրէն
զործ.	մէզ քանիյօք	մէզ քանինէրօք

ուղղ.հայց.	մէզալը	մէզալները
սեռ.արակ.	մէզալին	մէզալներուն
բաց.	մէզալէն	մէզալներէն
զործ.	մէզալօք	մէզալներօք

249. Ժխական դարանուններն են. հէլ մի, հէլ մէզը, որոնցից առաջինը չի հոլովվում, իսկ հէլ մէզը բաղադրյալ դե-

րանվան մեջ հոլովվում է միայն մէզը բաղադրիչը. նրա հոլովման մասին տես 55 247, 248:

Բ Ա Յ

ԴՕՐԲԱՅՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

250. Մալաթիայի բարբառն ունի վեց դերբայ՝ անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական և ժխտման: Բացակայում է անկատար դերբայը:

251. Անորոշ դերբայի վերջավորութիւններն են՝ ել (բըրէլ, բաքնէլ), իլ (հայիլ, փուսնիլ), ալ (աղալ, մառնալ), ու խոնարհման բայերից մնացել է թողուլ-թօղուլ բայը:

Անորոշ դերբայը չի մասնակցում սղանակային ձևերի կազմութեանը: Այս դերբայի սեռական-տրական հոլովածուը դիմորոշ հողով և պէս-բէս բառամասնիկի հարադրութեամբ գործածվելով՝ ցույց է տալիս գործողութեան կատարման անմիջականութիւնը. Օրինակ՝ էրթալուն բէս բաշլայէց. ցառքէրը վըլալ. "Կնալուն պես սկսեց ձեռները լվալ": Գարթալուդ բէս ջաշցա: Հաց փէրէլուն բէս չաղանէրը նէրս մըղան: Ուղէլուն բէս հասավ և այլն:

Այդ դերբայի բացառական հոլովածուը հող ստանալով՝ նախադասութեան մեջ կիրառվում է որպէս ձևի պարագա, որով նա համապատասխանում է արդի հայերենի գործիական հոլովին. օրինակ՝ ուղէլէն գէրթալ յա շուգան "ուտելով գնում է շուկա": Օրինակ՝ բաշլայէց սէրթուլուն էնէլ ու բաղէլէն յադ-յադ բաշվիլ (բաղէն-պաղէլով):

Որքեմն էլ այն կիրառվում է որպէս պատճառի պարագա: Օրինակ՝ Շաղ վագէլէն Օտկէրը ցավի յա "Շատ վագելուեց (վագելու պատճառով) ոտքերը ցավում են": Անորոշ դերբայը թուրքերեն իքէս բառի հարադրութեամբ գործածվում է նաև իբրև ժամանակի պարագա՝ ուղէլն իքէն թօրս էլավ: Խըմէլն իքէն վագէց դուն: Դըղան նըստիլն իքէն ինգավ "նստելիս ընկավ": Այս կիրառութեամբ այն համապատասխանում է արդի հայերենի անկատար դերբայի էլիս, ալիս երկրորդական ձևին. Օրինակ՝ խըմէլն իքէն "խմելիս":

252. Ապառնի դերբայը նախապես ունեցել է երկու վերջավորութիւն՝ ու և իք: Սրանք ավելանում են անորոշ դերբային.

Օրինակ՝ էրթալ-էրթալու և էրթալիք

նէդէլ-նէդէլու և նէդէլիք

իք վերջավորութեամբ կազմված ապառնի դերբայում միշտ -
զընվել նրա դերբայական իմաստը: Այն զործածվում է որպէս գո-
յական կամ ածական: Օրինակ՝ հաքնէլիք-“հագուստ”, ուղէլիք-
ուղեւորացի”, գոյրէլիք-“կոտորվող”, թըմէլիք, ըսէլիք և այլն:

Այսպիսով ապառնի դերբայի վերջավորութիւնը է ու-ն:

Ի խոնարհման բայերի ապառնի դերբայը կազմվում է ի խո-
նարհումն է-ի փոխելով: Օրինակ՝ թօսըլ-թօսէլու, հայիլ-հայէ-
լու, փուսնէլու և այլն:

Ապառնի դերբայով և օժանդակ բայերով կազմվում են սահմա-
նական սղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները:

253. Վաղակառար դերբայի վերջավորութիւնն է իր:

Օրինակ՝ քըրէլ-քըրիր

թօսիլ-թօսիր

փէրէլ-փէրիր

բաքնէլ-բաքիր և այլն:

է և ի խոնարհման պարզ բայերը իր վերջավորութիւնն ընդու-
նում են ներկայի հիմքի վրա, Օրինակ՝ հայիլ-հայիր, թօսիլ-
թօսիր, սիրէլ-սիրիր, բաննէլ-բաննիր, քըրէլ-քըրիր և այլն:

Ա խոնարհման պարզ բայերի և բայածանց ունեցող բոլոր բա-
յերի վաղակառարը կազմվում է իր վերջավորութիւնն ավելաց-
նելով անցյալի հիմքին:

Հաքնիլ-հաք(ա)-հաքիր

գարթալ-գարթաց(ի)-գարթացիր

փուսնիլ-փուս(ա)-փուսիր

մառնալ-մառց(ա)-մառցիր

գարնէլ-գարգ(ի)-գարգիր և այլն:

Դասառական բայերի վաղակառարը նույնպէս կազմվում է
անցյալի հիմքից. այսպէս՝

հաքցունէլ-հաքցուց(ի)-հաքցուցիր

վասցունէլ-վասցուց(ի)-վասցուցիր

բառգէցունէլ-բառգէցուց(ի)-բառգէցուցիր և այլն:

Բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի
վաղակառար դերբայի կազմութիւնը համապատասխանում է այդ
բայերի սոսկաձանցավոր կերպի վաղակառարի կազմութեանը.

Օրինակ՝ գէնիր “ծնծիր” - գէնվիլ “փնծվել”

Օլըրիր - օլըրդիր, փաժնիր - փաժնըվիր.

Կաղակատար դերբայը գործ է ածվում միայն օժանդակ բայերի հարադրութեամբ՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակներ:

254. Հարակատար դերբայի վերջավորութիւնն է ած: Այն դրվում է ներկայի կամ կատարյալի հիմքի վրա նույն հիմունքներով, ինչ հիմունքներով կազմվում է վաղակատար դերբայը. Օրինակ՝ դէսած, քըրած, գարթածած, մառցած և այլն:

Կալքբալ բայի հարակատարը կազմվում է անորոշ դերբային ավելացնելով ած վերջավորութիւնը՝ քալած:

Հարակատար դերբայը թուրքերեն «իքէն» բառի հարադրութեամբ գործածվելով՝ ցույց է տալիս գործողութեան կատարման ժամանակը. Օրինակ՝ խըմած իքէն թօն (իս, անի, էգար, էգա, էգապ): Դերբայն այս դասքում հող չի ստանում, և բայի դեմքը որոշվում է դերանվամբ: Օրինակ՝ իս գէրած իքէս էգար՝ «Երբես կարա, դու եկար»:

Սակայն, եթե նախորդ նախադասութիւնստերից որոշակի հասկացվում է, թե ով է գործողութիւն կատարող առարկան՝ ենթական, ապա դերանվան գործածութիւնը պարտադիր չէ. Օրինակ՝ գէրած իքէն թօն էգար: Մյուս նախադասութիւնստերից պարզ է դառնում, որ այստեղ խոսքը առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքերից մեկի մասին է:

Հարակատար դերբայը հարադրվելով օժանդակ բայերի հետ՝ կազմում է սահմանական սղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ: Դրվելով որևէ գոյականի վրա՝ այս դերբայը կիրառվում է ածականի (որոշիչի) իմաստով: Իբրև փոխանուն գործածվելիս հարակատար դերբայն ստանում է հող և հոլովվում ի հոլովմամբ: Օրինակ՝ խըմածը, խըմածին, խըմածօք և այլն:

Այս դերբայը նախադասութեան մեջ կիրառվում է որպես ենթակա, որոշիչ, ստորոգելիական վերադիր կամ խնդիր: Օրինակ՝ խըմածը էգապ, խըմած մարթը էգապ, անի խըմած է և այլն:

Այսպիսի գործածութեամբ հարակատար դերբայը միշտ նախադաս է լինում, այսինքն դրվում է գոյականից առաջ, իսկ գոյականն էլ ստանում է ստացական հող: Օրինակ՝ փէրած խօդէր՝ «Իս, քըրած նամագըդ, վըլացած լաթէրնիս և այլն (այս հողի

գործածության մասին մանրամասն տես § 241):

255. Ենթակայական դերբայն ստանում է օղ վերջավորու-
թյուն (խըմօղ, քըրօղ, մառցօղ, զարթացօղ և այլն): է և ի
խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի
հիմքից, իսկ ա խոնարհման բոլոր բայերինը՝ կառարյալի հիմ-
քից: Այս դերբայը չի մասնակցում բայի եղանակային ձևերի
կազմությանը: Նրա կիրառությունը նույնն է, ինչ արդի հա-
յերենում: Գոյականաբար գործածվելիս հոլովվում է՝ ենթարկ-
վելով ի հոլովման: Օրինակ՝ խըսօղը, խըմօղին, խըմօղօք և
այլն:

256. Ժխտման դերբայը կազմվում է անորոշ դերբայի լ
ծայնորդը փոխարինելով ը ծայնորդով ¹: ե խոնարհման բայե-
րի խոնարհիչը փոխվում է ի-ի, քըրէլ-քըրիի, բաքնէլ-բաքնիի:
Նախադասության մեջ հանդես է գալիս Օժանդակ բայերի ժխտական
ձևերի հետ և գործածվում է պայմանական եղանակի ժամանակների
ժխտական ձևեր կազմելու համար:

Բայահիմքերի կազմությունը

257. Բայերն ունեն երկու հիմք՝ ներկայի և անցյալի:
Ներկայի հիմքը լինում է պարզ կամ ածանցավոր, իսկ անցյալի
հիմքը՝ արմատական կամ ցոյական:

258. Ներկայի հիմքը կազմվում է անորոշ դերբայից՝ ա-
ռանց էլ, ալ, իլ դերբայական մասնիկների: Հստակաբար անորոշ
դերբայի ածանցները մտնում են ներկայի հիմքի մեջ: Սրինակ՝
մառնալ-մառն, քըրէլ-քըր, փէրէլ-փէր, ցուրդնալ-ցուրդն, մօ-
ղիզնալ-ֆօղիզն, քըրվէլ-քըրվ, վախնալ-վախ և այլն:

259. Ներկայի հիմքի մեջ են մտնում հետևյալ բայածանց-
յանը.

ա) Սոսկածանցներ.

Ան ածանցը, որը սովորաբար գտնվում է բազմավանկ բա-
ռորի երկրորդ վանկում, հնչյունափոխության հետևանքով զըրկ-
վելով ա օայնակորից, նույնացել է զրաբարյան ն սոսկածանցի
հետ. այսպես սրիսակ՝ ազանիլ>հաքնիլ, մեռանիլ>մառնիլ, մեծա-
նալ>մազնալ, գառնել>քըղնալ, ցրտանալ>ցուրդնալ, վերանալ>
վէրնալ, անկանիլ>իյնալ և այլն: Լուռնալ>վըլալ և ծնանիլ>

¹ 865 Ա. Արքայան, Հայերենի դերբայները և նրանց ձևա-
բանական նշանակությունը, Երևան, 1958, էջ 251.

ձընիւ բայերը գրկվել են ան ածանցից: Նույն ձևով էլ գրաբարյան -են սոսկածանցով կազմված բայերում եղէ-ն սղվում է և մը-նում է միայն ն-ն. օրինակ՝ վախժնալ՝ վախնալ, կարենալ՝ գըրնալ:

Գրաբարյան ն սոսկածանցը մնում է անփոփոխ. այսպես՝ բառ-նալ՝ փառնալ, առնուլ՝ առնել, առնել՝ էնել, դառնալ՝ թառնալ: 2 սոսկածանցը ընկել է, որոշ բառերում փոխարինվել է ն-ով, եր-բեմն էլ մնացել անփոփոխ. այսպես՝ փախչիլ՝ փախնիլ կամ փախիլ, հանգչիլ՝ հանքիլ կամ հանքչիլ, փակչիլ՝ փագիլ, դաչիլ՝ թըրնիլ:

բ) -վ ածանցով նարգործական սեռի բայերից կազմվում են կրավորական սեռի բայեր. օրինակ՝ չարթել՝ չարթվիլ, գոյրել՝ գոյրվիլ և այլն:

գ) -նուն ածանցով կազմվում են պատճառական բայեր. օրի-նակ՝ հաքցունել, բառգէցունել, մօղիզցունել և այլն:

դ) Տղ ածանցով կազմվում են բազմապատկական կերպի բայեր: 260. էլ (իլ) դերբայական վարջավորություն ունեցող ա-ծանցավոր բայերի անցյալի իմքը արմատական է. այսպես՝

բաքսել - բաք(ի)
հաքնիլ - հաք(ա)
փուսնիլ - փուս(ա)
խազնել - խաճ(ի) և այլն:

Ալ վարջավորություն բոլոր բայերի և էլ (իլ) վերջավոր-րություն պարզ բայերի անցյալի իմքը ցոյակաւն է. այսպես՝

աղալ - աղաց(ի)
ջընչել - ջընչեց(ի)
մառնալ - մառց(ա) ա խոնարհման բայեր
գըրնալ - գըրց(ա)

բըրել - բըրեց(ի)
հայիլ - հայեց(ա) էլ (իլ) խոնարհման պարզ բայեր
ալլել - ալլեց(ի)

261. Ներկայի իմքից կազմվում են սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի ժամանակ-ները, է (ի) խոնարհման պարզ բայերի վաղակատար և հարակատար ժամանակները, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակ-սերը և բոլոր պարզ բայերի եզակիի ըուն հրամայականը:

Անցյալի իմքից կազմվում են սահմանական եղանակի անց-յալ կատարյալը, ա խոնարհման բոլոր բայերի և է (ի) խոնար-

ման ածանցավոր բայերի վաղապատար և հերակատար ժամանակները, ածանցավոր կազմության բայերի եզակիի և բոլոր բայերի հոգնակիի բուն հրամայականը:

Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

262. Կրթարի շորս խոնարհիչների՝ ե, ի, ա, ո-ի փոխարեն բարբառը հիմնականում ունի երկուսը: է(ի) և ա: Ու խոնարհիչը պահպանվել է միայն թողուլ-թողուլ բայում, «ըի խոնարհումը զրաբարառիպ է: Թողուլ բայը կարող է խոնարհվել նաև է(ի) խոնարհիչով:

263. է և ի խոնարհման բայերի խոնարհիչները եզակի 1-ին և 2-րդ դեմքերում նույնացել են: է խոնարհման բայերը եզակի սրբորդ դեմքում ունեն է, իսկ ի խոնարհման բայերը՝ ի վերջավորություն:

Այսպես՝ բըրիմ, բըրիս, բայց՝ բըրէ
հայիմ, հայիս, բայց՝ հայի
բաքնիմ, բաքնիս, բայց՝ բաքնէ
հաքնիմ, հաքնիս, հաքնի և այլն:

264. Ինչպես նշեցինք՝ եզակի թվի առաջին և երկրորդ դեմքերում և հոգնակի թվի առաջին դեմքում է խոնարհման բայերն անցել են ի խոնարհման կատեգորիան:

Բացի այդ, բարբառի խոնարհումների մեջ զրաբարի համեմատությամբ կատարվել են հետևյալ փոխանցումները:

ա) է (ի)-ն փոխվել է ա-ի. ամաչել-ամըշնալ, անկանիլ-իյնալ, գտանել-բըդնալ, ելանել-էլլալ, երևիլ-էրվալ, իջանել-էշնալ, կարել-կարենալ-զըրնալ, կարկամել-զըրզըմալ, կրծածել-զըջըրդալ, օանաչել-ջաշնալ, մոանել-մըդնալ, տեսանել-դէսնալ, քնել-քընանալ, թքանել-թուքալ:

բ) Ու խոնարհումը փոխվել է է-ի՝ գենուլ-գէնէլ, առնուլ-առնէլ և ա-ի՝ ուռնուլ-ուռէնալ և երդնուլ-էրթըմալ բառերում: Վերջին բառը կազմվել է երդումն-էրթում արմատից՝ անալ-նալ ածանցի միջոցով:

գ) Ա խոնարհման ածանցավոր լուսնալ բայը, զրկվելով ածանցից, դարձել է նույն խոնարհման պարզ բայ՝ վըլալ:

դ) ի խոնարհման անկանիլ բայը դարձել է ա խոնարհման՝ իյնալ:

ե) ի խոնարհման ձևանիլ և փրթանիլ բայերը դարձել են նույն խոնարհման պարզ բայեր՝ ձընիլ և փըրթիլ:

զ) Ա խոնարհման ուղորտանալ բայը դարձել է ի խոնարհման պարզ բայ՝ օլըրդիլ:

է) Ա խոնարհման արտորալ պարզ բայը դարձել է նույն խոնարհման ածանցավոր բայ՝ աղօրնալ:

265. Բարբառում օժանդակ բայը գրաբարի համեմատությամբ ունի հետևյալ համապատասխանությունները.

	ներկա	անցյալ	անկատար
1-ին դ.	եմ > իմ եմք > իք	էի > էյի	էաք > էյաք
2-րդ դ.	ես > իս էք > էք	էիր > էյիր	էիք > էյիք
3-րդ դ.	է > է են > էն	էր > էր	էին > էյին

Յ Ղ Ա Ն Ա Կ Ն Շ Ր

266. Բարբառն ունի խոնարհման 5 եղանակ՝ ըղծական, սահմանական, պայմանական, հարկադրական և հրամայական:

267. Ըղծական եղանակն ունի 2 ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի: Սրանք կազմությամբ համընկնում են գրաբարի ներկա և անցյալ անկատար ժամանակների հետ, իսկ արտահայտած իմաստով նույնն են արդի հայերենի ըղծական եղանակի հետ:

Բարբառի ըղծականի վերջավորությունները գրաբարի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների համեմատությամբ հանդես են բերում հետևյալ համապատասխանությունները.

Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆԵԱՎՈՐ ԲԱՅԵՐ

ներկա	անցյալ	անկատար
եմ > իմ ենեմ > նիմ եմք > ինք	էի > էյի	էաք > էյաք
ես > իս ենես > նիս էք > էք ենէք > նէք	էիր > էյիր	էիք > էյիք
է > է ենէ > նէ են > էն ենեն > նէն	էր > էր	էին > էյին

Ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆԵԱՎՈՐ ԲԱՅԵՐ

ներկա	անցյալ	անկատար
իմ > իմ իմք > ինք	նույնն է	<u>ե</u> խոնարհման բայերի հետ
իս > իս իք > իք		
ի > ի ին > ին		

Այսպիսով ի խոնարհման բայերը համարյա ոչ մի փոփոխության չեն ենթարկվել:

Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ

	ներկա	անցյալ անկատար
ամ>ամ	անամ>նամ	այի>այի անայի>նայի
աս>աս	անաս>նաս	այիր>այիր անայիր>նայիր
այ>այ	անայ>նայ	այր>այր անայր>նայր
ամբ>անբ	անամբ>նանբ	այաբ>այաբ անայաբ>նայաբ
այբ>այբ	անայբ>նայբ	այիբ>այիբ անայիբ>նայիբ
ան>ան	անան>նան	ային>ային անային>նային

Մասնակի տարբերություններն է հայտ են գալիս միայն բարբառի ըղծական ապառնու վերջավորությունների մեջ: Մինչդեռ բարբառի ըղծականի անցյալ ապառնի ժամանակում այդ վերջավորությունները մնացել են անփոփոխ: Նույնիսկ այդ ժամանակի հոգնակի թվի առաջին դեմքի էաք, այաք վերջավորությունները պահպանվել են անաղարտորեն՝ էյաք, այաք:

268. Սահմանակալ ենդանակն ունի ինը ժամանակ, որոնցից մեկը՝ անցյալ կատարյալը, պարզ է, իսկ մյուսները՝ ներկան, անցյալի անկատարը, ապառնին, անցյալի ապառնին, վաղակատարը, անցյալի վաղակատարը, հարակատարը և անցյալի հարակատարը՝ բաղադրյալ:

269. Սահմանակալ ենդանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմվում են ըղծականի համապատասխան ժամանակների և ա մասնիկի հարադրությամբ: Այդ ա-ն, ինչպես արդեն ասվել է, ահա>հա բառի կրճատմամբ առաջացած բառմասնիկ է, որը նույն դերն է կատարում, ինչ կը-ն կը ճյուղի բարբառներում: Մալաթիայի բարբառը կը ճյուղի բարբառների համեմատությամբ ունի մի էական տարբերություն ևս: Հայտնի է, որ միավանկ տալ, լալ, գալ բայերի ներկայի և անցյալ անկատարի կազմության ժամանակ կը ճյուղի բարբառներում կը-ն դառնում է կու՝ կուլամ, կուտամ, կուգամ: Այդպես է նաև խոտրջուրի բարբառում, որի ներկայի կազմությունը զրաբարատիպ է: Սակայն Մալաթիայի բարբառում միավանկ լալ, դալ, բալ բայերի ներկայի կազմության ժամանակ կը ենդանակիչը չի մաքնակցում: Այդ բայերի ներկալ զրաբարյան սկզբունքով է կազմվում՝ իս լամ ա, իս քամ ա, իս դամ ա (ես լալիս եմ, ես գալիս եմ, ես տալիս եմ): Այստեղ բարբառը որոշակիորեն հետևում է իր ներքին օրինաչափու-

թյանը, ըստ որի՝ միայն ծայնավորով սկսվող բայերն են սկա-
նում կ>զ-ն: Այս սրբույթը նկատելով, Հո. Աճառյանը գրում է.
"Մալաթիայի բարբառը նույնպես շարունակվում է պահպանել չը-
րաբարի ներկան՝ խոտրջուրի բարբառի նման: Բայց մալաթիան,
գերազանցում է խոտրջուրը նրանով, որ միջնդետ խոտրջուրի
միավանկ բայերի վրա արդեն դնում է կու, մալաթիան դնո չու-
նի այդ հավելվածը շարունակականի մեջ" ¹ :

Ա մասնիկը հետադաս կիրառություն ունի, այսինքն դրվում
է խոնարհվող բայից հետո: Մի քանի խոնարհվող բայեր իրար
հաջորդելիս այդ մասնիկը կրկնվում է յուրաքանչյուր բայից
հետո. օրինակ՝ իս գէրժամ ա, գաշիմ ա և այլն:

270. Ստացմանական եղանակի ապառնին, վաղակատարի և հարա-
կատարի ներկա և անցյալ ժամանակները կազմվում են համապատաս-
խան դերբայներով և օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերի հա-
րադրությամբ:

271. Անցյալ կատարյալը կազմվում է բայերի անցյալի հիմ-
քին դիմային վերջավորություններ կցելով: Դիմային վերջա-
վորությունները գրաբարի համեմատությամբ հետևյալ ձևափոխու-
թյուններն են կրսւլ.

Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ

Եզակի	հոգնակի
ի>ի	աք>աք (անք)
եր>իր	էք(իք)>իք
- 7 -	ին>ին

Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆՏԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Եզակի	հոգնակի
ի>ի	աք>ինք
եր>իր	էք(ի)>իք
- 7 -	ին>ին

Ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆՏԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Եզակի	հոգնակի
այ>ա	աք>աք (անք)

1. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, մաս Բ, ԴԱ հրատարակություն, 1961, Երևան, էջ 98-99:	

ար>ար
աւ>աւ

այք>այք
ան>ան

Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅՈՐ

նզակի
ի>ի
նր>նր
- -

նզնակի
աք>ինք
էք (իք) > իք
ին>ին

Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆՈՒԿՈՐ ԲԱՅՈՐ

նզակի
այ>ա
ար>ար
աւ>աւ

նզնակի
աք>անք (աք)
այք>այք
ան>ան

Այսպիսով բարբառի անցյալ կատարյալն ունի նրկու բնույթի վարձավորութիւններ՝ նարգործածւ և կրավորածւ:

ա) ն խոնարհման բոլոր բայերը և ա խոնարհման վարդ ըայնն ունեն նարգործածւ վարձավորութիւններ՝

ի, իք, -(աւ), աք, (ինք) իք և ին:

բ) ի խոնարհման բոլոր բայերը և ա խոնարհման ածանցավոր ըայերի վարձավորութիւնները կրավորածւ են ա, ար, աւ, անք, աք և ան:

272. Պայմանադրան սղանակն ունի նրկու ժամանակ՝ ալտուր և անցյալի ալտուր: Սրանք կազմվուս են ըղծական սղանակի համադաստասխան ժամանակների գրա դնելով կ>լ սղանակիչը: Ինչպես նշնցինք, այս սղանակիչը դրվում է նաև նարկա ժամանակում՝ ծայնավորով սկսվող բայերից առաջ: Նրանց տարբերութիւնը վայմանավորված է ա մասնիկի գործածութեամբ՝ գէր՞ամ ա -"գնում եմ", գէր՞ամ -"կգնամ": Բաղածայնով սկսվող բայերը կը>լը սղանակիչի գործածութեամբ որոշակիորեն տարբերվուս են նարկա ժամանակից՝ գրեէրիմ -"կընրամ", իէրիմ ա -"ըսրում եմ": Նիափանկ բայերը՝ տալ>ղալ, լալ>լալ և լալ>րալ վայմանադրան սղանակում կը սղանակիչը դարձնում են զու՝ զուգամ, զուլամ, զուրամ:

Պայմանականութիւնն արտահայտվում է նաև նէ մասնիկով կազմված նախադասութիւնների միջոցով: Օրինակ՝ յա՛ն դէսնամ

նէ՝ զըսիմ քէզ. փէրիմ նէ՝ զտունիս: "Եթե բերեմ կտոնես":

273. Հարկադրական եղանակի երկու ժամանակները՝ ապառնին և անցյալի ապառնին, նույնպես կազմվում են ըղծական եղանակի համապատասխան ժամանակների և պիտիքի եղանակի հարողորոթյամբ: Այս եղանակիչը միշտ դրվում է խոնարհվող բայերից առաջ: Չայնավորով սկսվող բայերից առաջ եղանակիչի վերջին ի-ն ընկնում է, և այն դառնում է բիղ: Բիղ ուղիմ, բիղ էրթամ: Մի քանի բայերի հաջորդման ժամանակ հարկադրականի եղանակիչը չի կրկնվում, այլ դրվում է առաջին բայի սկզբից՝ բիղի դէսնամ, էրթամ, փէրիմ, ուղիմ: Հարկադրական եղանակի ձևերը կիրառվում են նաև սահմանական եղանակի ապառնու և անցյալի ապառնու իմաստով:

274. Հրամայական եղանակն ունի միայն ապառնի ժամանակ, երկրորդ դեմք՝ եզակի և հոգնակի թվերով: Հրամայականն ունի երկու ձև՝ բուն հրամայական և արգելական հրամայական: Բոլոր պարզ բայերի բուն հրամայականի եզակին կազմվում է ներկայի հիմքից, իսկ ածանցավոր բայերի եզակիի և բոլոր բայերի հոգնակիի բուն հրամայականը՝ անցյալի հիմքից:

Ա և Ե խոնարհման պարզ բայերի ներկայի հիմքը (ներառյալ դերբայական մասնիկի ձայնավորները) շեշտ ստանալով՝ ծառայում է որպես եզակի սրկրորդ դեմքի բուն հրամայական: Օրինակ՝ խաղա՛, բըրէ՛, սիրէ՛ և այլն:

Ի խոնարհման պարզ բայերի և բոլոր ածանցյալ բայերի բուն հրամայականի եզակին կազմվում է անցյալի հիմքին ավելացնելով -իր՝ հաքիր, հասիր, մաոցիր, խօսիր, քաքիր և այլն:

Երկրորդ դեմքի հոգնակիում բոլոր բայերի բուն հրամայականը կազմվում է անցյալի հիմքին ավելացնելով -էք. Օրինակ՝ հաքէք, հասէք, մաոցէք, սիրէցէք, բըրէցէք, հայէցէք, ըլմանէցէք և այլն:

Բերել>փէրէլ, իջանել>էշնալ, տեսանել>դէսնալ, ասել>ըսէլ, մտանել>մըղնալ, գտանել>բըղնալ, անկանիլ>իյնալ, ելանել>էլլալ, բանալ>իանալ բայերի բուն հրամայականի կազմութիւնը շարժվում է ընդհանուր օրինաչափութիւնից, որոնց մասին տես "Անկանոն բայեր" (էջ 288):

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ
ԱՌԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

275. էլ խոնարհման պարզ բայեր
Գրել > քըրէլ աւելել > ավլէլ

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ն Ր

Անորոշ	քըրէլ	ավլէլ
Ապառնի	քըրէլու	ավլէլու
Վաղակատար	քըրիւր	ավլիւր
Հարակատար	քըրած	ավլած
Ենթակայական	քըրօղ	ավլօղ
Ժխտման	քըրիւր	ավլիւր

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի

քըրիմ	ավլիմ
քըրիս	ավլիս
քըրէ	ավլէ

Հոգնակի

քըրինք	ավլինք
քըրէք	ավլէք
քըրէն	ավլէն

ԱՆՏՅԱԼ ԱԳԱՌՆԻ

Եզակի

քըրէյի	ավլէյի
քըրէյիւր	ավլէյիւր
քըրէր	ավլէր

Հոգնակի

քըրէյաք	ավլէյաք
քըրէյիք	ավլէյիք
քըրէյին	ավլէյին

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա

Եզակի

բըրիմ ա գավլիմ ա
բըրիս ա գավլիս ա
բըրէ յա գավլէ յա

Հոգնակի

բըրինք ա գավլինք ա
բըրէք ա գավլէք ա
բըրէն ա գավլէն ա

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի

բըրէյի յա գավլէյի յա
բըրէյիւ ա գավլէյիւ ա
բըրէր ա գավլէր ա

Հոգնակի

բըրէյաք ա գավլէյաք ա
բըրէյիք ա գավլէյիք ա
բըրէյին ա գավլէյին ա

ԱՊԱՌՆԻ

Եզակի

բըրէլու յիմ ավլէլու յիմ
բըրէլու յիս ավլէլու յիս
բըրէլու յէ ավլէլու յէ

Հոգնակի

բըրէլու յիք ավլէլու յիք
բըրէլու յէք ավլէլու յէք
բըրէլու յեն ավլէլու յեն

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի

բըրէլու էյի ավլէլու էյի
բըրէլու էյիւ ավլէլու էյիւ
բըրէլու յէր ավլէլու յէր

Հոգնակի

բըրէլու էյաք ավլէլու էյաք
բըրէլու էյիք ավլէլու էյիք
բըրէլու էյին ավլէլու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

բըրիւ իմ ավլիւ իմ
բըրիւ իս ավլիւ իս
բըրիւ է ավլիւ է

Հոգնակի

բըրիւ իք ավլիւ իք
բըրիւ էք ավլիւ էք
բըրիւ են ավլիւ են

ԱՆՑՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

բըրիւ էյի ավլիւ էյի
բըրիւ էյիւ ավլիւ էյիւ
բըրիւ էր ավլիւ էր

Հոգնակի

բըրիւ էյաք ավլիւ էյաք
բըրիւ էյիք ավլիւ էյիք
բըրիւ էյին ավլիւ էյին

ՀԱՄԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի
բըրած իմ	ավլած իմ	բըրած իք ավլած իք
բըրած իս	ավլած իս	բըրած էք ավլած էք
բըրած է	ավլած է	բըրած են ավլած են

ԱՆՔՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի
բըրած էի	ավլած էի	բըրած էյաք ավլած էյաք
բըրած էյիր	ավլած էյիր	բըրած էյիք ավլած էյիք
բըրած էր	ավլած էր	բըրած էյին ավլած էյին

ԱՆՔՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի		Հոգնակի
բըրէցի	ավլէցի	բըրէցաք (անք) ավլէցաք (անք)
բըրէցիր	ավլէցիր	բըրէցիք ավլէցիք
բըրէց	ավլէց	բըրէցին ավլէցին

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի		Հոգնակի
զը բըրիմ	զավլիմ	զը բըրինք զավլինք
զը բըրիս	զավլիս	զը բըրէք զավլէք
զը բըրէ	զավլէ	զը բըրեն զավլեն

ԱՆՔՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի
զը բըրէյի	զավլէյի	զը բըրէյաք զավլէյաք
զը բըրէյիր	զավլէյիր	զը բըրէյիք զավլէյիք
զը բըրէր	զավլէր	զը բըրէյին զավլէյին

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի
բիդի բըրիմ	բիդ ավլիմ	բիդի բըրինք բիդ ավլինք
բիդի բըրիս	բիդ ավլիս	բիդի բըրէք բիդ ավլէք
բիդի բըրէ	բիդ ավլէ	բիդի բըրեն բիդ ավլեն

ԱՆՏՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
բիղի բըրէյի	բիղ ավլէյի	բիղի բըրէյաք	բիղ ավլէյաք
բիղի բըրէյիօ	բիղ ավլէյիօ	բիղի բըրէյիք	բիղ ավլէյիք
բիղի բըրէր	բիղ ավլէր	բիղի բըրէյին	բիղ ավլէյին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Եզակի		Հոգնակի	
բըրէ՛	ավլէ՛	բըրէցէք	ավլէցէք

Այս ձևով են խոնարհվում հետևյալ բայերը.

ազատել>ազադել, ածել>հածել, ածելել>ազլել, ականջել>անգը-
լել, աղանձել>աղընծել, աղել>աղլել, անարգել>անօրթել, աշել>
աշլել, արածել>հարծել, արծակել>արցըզել, բաժանել>հաժնել,
բահել>հահել, բովհրել>փօրհել, բոնել>փրոնել, բրդել>փըր-
թել, գզել>քըզել, գովել>քօվել, գործել>քօրծել, գրել>քը-
րել, դատարկել>թարղըզել, նիել>էփել, գրուցել>գուրցել, թա-
թախել>թախտել, թաղէք>թաղել, թարթել>թարթել, թափել>թափել,
թխել>թըխել, թոթափել>թօֆտիլ, ժողովել>ժօղվել, իւղել>յէղել
լիզել>լըզել, խայթել>խաթել, խանձել>խանծել, խարշել>խաշել,
խարտսել>խարդել, խգտել>խըզղել, խծկել>խըզզել, խծպել>խըզ-
րել, խմել>խըմել, խնայել>խընայել, խնչել>խընչել, խոթել>
խօթել, խորել>խօրել, ծալել>ծալլել, ծախել>ծախել, ծածկել>
տասկել, ծակել>ծագել, ծաղկիլ>ծաղզիլ, ծեփել>ծէփել, ծծել>
ծըծել, ծոել>ծըոել, ծրտել>ծըրդել, կաղանդել>զաղընդել,
կանչել>զանչել, կապել>զաբել, կարգել>զարթել, կարել>զարլել,
կարկատել>զարզըղնել, կթել>զըթել, կիսատել>զըստել, զըստել,
կլանել>զըլլել, կծկել>զըզզել, կնդել>զընդել, կնքել>զընքել
կոխել զօխել, կոկնել>զօզել, կոճակել>զոժզել, կուղղել>զըղ-
րել, կոփել>զօփել, կտրել>զըյրել, կտցել>զըթնօցել, կշել>
զըրլել, կցել>զըցել, հագել>հագել, համոզել>համօզել, հիւ-
սել>հուսել, հանել>հանել, հաջել>հաչել, հարել>հարել, ձը-
գել>ցըբել, ձևել>ցէվել, ընդքել>ջէխկել, մաղել>մաղել, մա-
նել>մանել, մանրել>մայրել, մատնել>մաղնել, մարսել>մարսել,
մեկնել>մեյնել, մոխրել>մախրել, մորթել>մօրթել, մրափել>
մըրափել, մրոտել>մուրօղել, յաղթել>հախտել, յիշել>իշել,
նեղել>նէղել, նետել>նէղել, շալակել>շալզել, շաղել>շաղլել,

բարել՝շարէլ, շարժել՝շարժել, շինել՝շընէլ, շրջել՝սըրջէլ,
շըրջէլ, շփել՝շըփէլ, ուորել՝օւրէլ, օրօրել՝օրէլ, ուզել՝
ուզէլ, ուղարկել՝գառվէլ, ուղղորդել՝օղօրթէլ, շարշարել՝
շարշըրէլ, չափել՝չափէլ, պահել՝քեյիլ, պաշտել՝քաշտէլ, պա-
տառել՝քաղոէլ, պատել՝քաղէլ, պատժել՝քաղժէլ, պատմել՝քաղ-
մէլ, պատրուսել՝քայրուսէլ, պարապել՝քարբէլ, պարտակել՝քար-
դըգէլ, պսակել՝փըսագէլ, ջարդել՝չարթէլ, ջրել՝չուրէլ, սեղ-
մել՝սըխմէլ, սերտել՝սէրդէլ, սիրել՝սիրէլ, սոթոթել՝սօթտէլ,
սպանանել՝քաննէլ, սրբել՝զըրիէլ, վագել՝վագէլ, վայելել՝
վայլէլ, վառել՝վառէլ, վաստակել՝վաստըգէլ, տանջել՝ղանջէլ,
տապակել՝ղարգէլ, տնկել՝ղընգէլ, ցայտել՝ցաթէլ, ցատկել՝ցատ-
կէլ, ցանել՝ցանէլ, ցօղել՝ցօղէլ, փաթաթել՝փաթտէլ, փարատել՝
փարդէլ, փետել՝փէդէլ, փշրել՝փըրշէլ, փոխել՝փօխէլ, փորժել՝
փօրցէլ, փչել՝փըչէլ, քակել՝քագէլ, քաղել՝քաղէլ և այլն:

176. է խոնարհման ածանցավոր բայեր

ՊԱԳԱՆՆԵԼ՝ԲԱՔՆԵԼ

ԽԱԾԱՆՆԵԼ՝ԽԱՋՆԵԼ

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ	բաքնէլ	խագնէլ
Ապահոնի	բաքնէլու	խագնէլու
Վաղակատար	բաքիր	խաժիր
Հարակատար	բաքած	խաժած
Ենթակայական	բաքնօղ	խագնօղ
Ժխտման	բաքնիր	խագնիր

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ

Եզակի

Հոգնակի

բաքնիմ	խագնիմ	բաքնինք	խագնինք
բաքնիս	խագնիս	բաքնէք	խագնէք
բաքնէ	խագնէ	բաքնէն	խագնէն

ԱՆԵՅԱԼԻ

ԱՊԱՌՆԻ

Եզակի

Հոգնակի

բաքնէյի	խագնէյի	բաքնէյաք	խագնէյաք
---------	---------	----------	----------

բաքնէյիը	խազնէյիը	բաքնէյիք	խազնէյիք
բաքնէր	խազնէր	բաքնէյին	խազնէյին

ՍԱՀՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա

Եզակի

Հոգնակի

բաքնիմ ա	խազնիմ ա	բաքնիք ա	խազնիք ա
բաքնիս ա	խազնիս ա	բաքնէք ա	խազնէք ա
բաքնէ յա	խազնէ յա	բաքնէն ա	խազնէն ա

ԱՆԵՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի

Հոգնակի

բաքնէյի յա	խազնէյի յա	բաքնէյաք ա	խազնէյաք ա
բաքնէյիը ա	խազնէյիը ա	բաքնէյիք ա	խազնէյիք ա
բաքնէր ա	խազնէր ա	բաքնէյին ա	խազնէյին ա

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի

-

Հոգնակի

բաքնէլու յիմ	խազնէլու յիմ	բաքնէլու յիք	խազնէլու յիք
բաքնէլու յիս	խազնէլու յիս	բաքնէլու յէք	խազնէլու յէք
բաքնէլու յէ	խազնէլու յէ	բաքնէլու յէն	խազնէլու յէն

ԱՆԵՅԱԼԻ ԱՂԱՌՆԻ

Եզակի

Հոգնակի

բաքնէլու էյի	խազնէլու էյի	բաքնէլու էյաք	խազնէլու էյաք
բաքնէլու էյիը	խազնէլու էյիը	բաքնէլու էյիք	խազնէլու էյիք
բաքնէլու յէր	խազնէլու յէր	բաքնէլու էյին	խազնէլու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

Հոգնակի

բաքիր իմ	խաժիր իմ	բաքիր իք	խաժիր իք
բաքիր իս	խաժիր իս	բաքիր էք	խաժիր էք
բաքիր է	խաժիր է	բաքիր էն	խաժիր էն

ԱՆԵՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

Հոգնակի

բաքիր էյի	խաժիր էյի	բաքիր էյաք	խաժիր էյաք
-----------	-----------	------------	------------

ԱՆՅՅԱԼ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
բաքիր էյի	խածիր էյի	բաքիր էյաք	խածիր էյաք
բաքիր էյիր	խածիր էյիր	բաքիր էյիք	խածիր էյիք
բաքիր էր	խածիր էր	բաքիր էյին	խածիր էյին

ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
բաքած իմ	խածած իմ	բաքած իք	խածած իք
բաքած իս	խածած իս	բաքած էք	խածած էք
բաքած է	խածած է	բաքած են	խածած են

ԱՆՅՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
բաքած էյի	խածած էյի	բաքած էյաք	խածած էյաք
բաքած էյիր	խածած էյիր	բաքած էյիք	խածած էյիք
բաքած էր	խածած էր	բաքած էյին	խածած էյին

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի		Հոգնակի	
բաքի	խածի	բաքինք	խածինք
բաքիր	խածիր	բաքիք	խածիք
բաքավ	խածավ	բաքին	խածին

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱՆ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
զըբաքնիմ	զըխազնիմ	զըբաքնինք	զըխազնինք
զըբաքնիս	զըխազնիս	զըբաքնէք	զըխազնէք
զըբաքնէ	զըխազնէ	զըբաքնեն	զըխազնեն

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
զըբաքնէյի	զըխազնէյի	զըբաքնէյաք	զըխազնէյաք
զըբաքնէյիր	զըխազնէյիր	զըբաքնէյիք	զըխազնէյիք
զըբաքնէր	զըխազնէր	զըբաքնէյին	զըխազնէյին

ՀԱՆՈՒՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՊԱՌՆԻ

Եզակի

Հոգնակի

բիղի բաբնիմ բիղի խազնիմ
բիղի բաբնիս բիղի խազնիս
բիղի բաբնէ բիղի խազնէ

բիղի խազնինք բիղի բաբնինք
բիղի խազնէք բիղի բաբնէք
բիղի խազնէն բիղի բաբնէն

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի

Հոգնակի

բիղի բաբնէյի բիղի խազնէյի բիղի բաբնէյաք բիղի խազնէյաք
բիղի բաբնէյիր բիղի խազնէյիր բիղի բաբնէյիք բիղի խազնէյիք
բիղի բաբնէր բիղի խազնէր բիղի բաբնէյին բիղի խազնէյին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի

Հոգնակի

բաքիր խածիր բաքէք խածէք

Այս ծառի է խոնարհութիւն

հաւանել, հաւանել, հաւանիմ, հաւանէ, հաւանի, հաւանիր, հաւանավ,
հաւանիր, հաւանէք:

Ինչպես նշուի ներք (§ 264), է խոնարհման ածանցավոր ի-
ջանել, էշնալ, ելանել, էլլալ, գտանալ, քրդնալ, մտանել, մըղ-
նալ, տեսանել, դէսնալ, թրանել, թուրալ բայերը դարձել են ա
խոնարհման բայեր: Օծանել, օծել բայը դարձել է պարզ բայ:

277. Ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐՁ ԲԱՅԵՐ

Հայի, հայիլ նմանի, լլմանիլ

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ - հայիլ լլմանիլ
Ապտոնի - հայէլու լլմանէլու
Վաղակառար հայիր լլմանիր
Հարակառար - հայած լլմանած
Ենթակայական - հայօղ լլմանօղ
Ժխտման - հայիր լլմանիր

ԸՂԶԱՆԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
հայիմ	ըլմանիմ	հայինք	ըլմանինք
հայիս	ըլմանիս	հայիք	ըլմանիք
հայի	ըլմանի	հային	ըլմանին

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
հայէյի	ըլմանէյի	հայէյաք	ըլմանէյաք
հայէյիւր	ըլմանէյիւր	հայէյիք	ըլմանէյիք
հայէր	ըլմանէր	հայէյին	ըլմանէյին

ՍԱՀՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա

Եզակի		Հոգնակի	
հայիմ ա	զըլմանիմ ա	հայինք ա	զըլմանինք ա
հայիս ա	զըլմանիս ա	հայիք ա	զըլմանիք ա
հայի յա	զըլմանի յա	հային ա	զըլմանին ա

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
հայէյի յա	զըլմանէյի յա	հայէյաք ա	զըլմանէյաք ա
հայէյիւր ա	զըլմանէյիւր ա	հայէյիք ա	զըլմանէյիք ա
հայէր ա	զըլմանէր ա	հայէյին ա	զըլմանէյին ա

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
հայէլու յիմ	ըլմանէլու յիմ	հայէլու յիք	ըլմանէլու յիք
հայէլու յիս	ըլմանէլու յիս	հայէլու յէք	ըլմանէլու յէք
հայէլու յէ	ըլմանէլու յէ	հայէլու յէն	ըլմանէլու յէն

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
հայէլու էյի	ըլմանէլու էյի	հայէլու էյաք	ըլմանէլու էյաք
հայէլու էյիւր	ըլմանէլու էյիւր	հայէլու էյիք	ըլմանէլու էյիք
հայէլու յէր	ըլմանէլու յէր	հայէլու էյին	ըլմանէլու էյին

ՎԱՂԱՅԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
հայիր իմ	ըլմանիր իմ	հայիր իք	ըլմանիր իք
հայիր իս	ըլմանիր իս	հայիր էք	ըլմանիր էք
հայիր է	ըլմանիր է	հայիր են	ըլմանիր են

ՄՆԵՅԱԼԻ ՎԱՂԱՅԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
հայիր էյի	ըլմանիր էյի	հայիր էյաք	ըլմանիր էյաք
հայիր էյիր	ըլմանիր էյիր	հայիր էյիք	ըլմանիր էյիք
հայիր էր	ըլմանիր էր	հայիր էյին	ըլմանիր էյին

Հ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Եզակի		Հոգնակի	
հայած իմ	ըլմանած իմ	հայած իք	ըլմանած իք
հայած իս	ըլմանած իս	հայած էք	ըլմանած էք
հայած է	ըլմանած է	հայած են	ըլմանած են

ՄՆՅՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի		Հոգնակի	
հայած էյի	ըլմանած էյի	հայած էյաք	ըլմանած էյաք
հայած էյիր	ըլմանած էյիր	հայած էյիք	ըլմանած էյիք
հայած էր	ըլմանած էր	հայած էյին	ըլմանած էյին

ՄՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի		Հոգնակի	
հայէցա	ըլմանէցա	հայէցանք	ըլմանէցանք
հայէցար	ըլմանէցար	հայէցաք	ըլմանէցաք
հայէցավ	ըլմանէցավ	հայէցան	ըլմանէցան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
զըհայիմ	զըլմանիմ	զըհայինք	զըլմանինք
զըհայիս	զըլմանիս	զըհայիք	զըլմանիք
զըհայի	զըլմանի	զըհային	զըլմանին

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
զըհայէյի	զըլմանէյի	զըհայէյաք	զըլմանէյաք
զըհայէյիր	զըլմանէյիր	զըհայէյիք	զըլմանէյիք
զըհայէր	զըլմանէր	զըհայէյին	զըլմանէյին

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
բիղի հայիմ	բիղ ըլմանիմ	բիղի հայինք	բիղ ըլմանինք
բիղի հայիս	բիղ ըլմանիս	բիղի հայիք	բիղ ըլմանիք
բիղի հայի	բիղ ըլմանի	բիղի հային	բիղ ըլմանին

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
բիղի հայէյի	բիղ ըլմանէյի	բիղի հայէյաք	բիղ ըլմանէյաք
բիղի հայէյիր	բիղ ըլմանէյիր	բիղի հայէյիք	բիղ ըլմանէյիք
բիղի հայէր	բիղ ըլմանէր	բիղի հայէյին	բիղ ըլմանէյին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի		Հոգնակի	
հայի՛ր	ըլմանի՛ր	հայէցե՛ք	ըլմանէցե՛ք

Այսպես են խոնարհվում հետևյալ բայերը.
 արիւհապրիւ, գարիմ ա, արեցա, արի՛ր, արեցե՛ք,
 աջիւհաճիւ, գաջիմ ա, աջեցա, աջի՛ր,
 բաղիւհա պառակել, բաղիմ ա, բաղեցա, բաղի՛ր,
 գազիւհա կակղիւ, գազիմ ա, գազեցա, գազի՛ր,
 գաթիւհա կաթիւ գաթիմ ա, գաթեցա, գաթի՛ր,
 գայնիւհա կանգնիւ, գայնիմ ա, գայնեցա, գայնի՛ր,
 գանչիւհա կանաչիւ, գանչիմ ա, գանչեցա, գանչի՛ր,
 գըզվիւհա կծուիւ, գըզվիմ ա, գըզվեցա, գըզվի՛ր,
 գըռվիւհա կռուիւ, գըռվիմ ա, գըռվեցա, գըռվի՛ր,
 թաղիւհա դառիւ, թաղիմ ա, թաղեցա, թաղի՛ր,
 թէղնիւհա դեղնիւ, թէղնիմ ա, թէղնեցա, թէղնի՛ր,
 թըթվիւհա թթուիւ, թթվիմ ա, թթվեցա, թթվի՛ր,
 թըռմիւհա թռամիւ, թըռմիմ ա, թըռմեցա, թըռմի՛ր,

Թրուչիլ<թուչիլ, Թրուչիմ ա, Թրուչէցա, Թրուչի՛ր,
 ժանգոդիլ<ժանգոտիլ, ժանգոդիմ ա, ժանգոդէցա, ժանգոդի՛ր,
 խօսիլ<խօսիլ, խօսիմ ա, խօսէցա, խօսի՛ր,
 հօքնիլ<հոգնիլ, հօքնիմ ա, հօքնէցա, հօքնի՛ր,
 ծաքիլ<ծազիլ, ծաքիմ ա, ծաքէցա, ծաքի՛ր,
 ձընիլ<ծնանիլ, ձընիմ ա, ձընէցա, ձընի՛ր,
 մաշիլ<մաշիլ, մաշիմ ա, մաշէցա, մաշի՛ր,
 նըստիլ<նստիլ, նըստիմ ա, նըստէցա, նըստի՛ր,
 սաղգիլ<սատակիլ, սաղգիմ ա, սաղգէցա, սաղգի՛ր,
 ցամքիլ<ցամքէլ, ցամքիմ ա, ցամքէցա, ցամքի՛ր,
 փազմիլ<բազմիլ, փազմիմ ա, փազմէցա, փազմի՛ր,
 փանիլ<բանիլ, փանիմ ա, փանէցա, փանի՛ր:

278. ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ

ԲՈՒՍԱՆԻԼ > ՓՈՒՍՆԻԼ, ԱՆՑԱՆԵԼ > ԱՍՆԻԼ

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ - փոլսնիլ ասնիլ
 Ապառնի - փոլսնէլոլ ասնէլոլ
 Վաղակատար - փոլսիր անցիր
 Հարակատար - փոլսած անցած
 Ենթակայական - փոլսնօղ ասնօղ
 Ժխտման - փոլսնիր ասնիր

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
փոլսնիմ	ասնիմ	փոլսնինք	ասնինք
փոլսնիս	ասնիս	փոլսնիք	ասնիք
փոլսնի	ասնի	փոլսնին	ասնին

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՐՆԻ

Եզակի		Հոգնակի	
